

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____ 2018թ.

N_____Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՍՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին, 83-րդ հոդվածին և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագիրը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով՝ ընդհանուր 1000 տպաքանակներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 83-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը:

Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հիմնական նպատակն է՝ նախանշել քաղաքային տնտեսության զարգացման ուղղությունները՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները, որոնք փաստաթղթում ներկայացված են ըստ առանձին ոլորտների: Ծրագրում առանձին բաժիններով ներկայացված են Երևանի ընդհանուր և Երևանի սոցիալ-տնտեսական վիճակի նկարագրությունը:

Ծրագրի կառուցվածքում առանձին ներկայացված են քաղաքային տնտեսության ոլորտները և Երևանի վարչական շրջանները: Յուրաքանչյուր բաժին հիմնականում բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Վիճակի բնութագիր», «Հիմնախնդիրներ» և «2019-2023 թվականների նախատեսվող ծրագրեր»:

Առաջիկա 5 տարիների ծրագրերն ու միջոցառումները կազմվել են՝ հիմք ընդունելով մայրաքաղաքի զարգացման գերակայությունները, առկա հիմնախնդիրները և ֆինանսավորման հնարավորությունները: Ծրագիրն ուղղված է քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների զարգացմանը:

Ծրագրի նպատակն է իրականացնել համակարգային բարեփոխումներ՝ նոր մոտեցումների կիրառմամբ՝ հաշվի առնելով քաղաքացու շահերի և իրավունքների պաշտպանությունը:

Ծրագրի իրականացման գործընթացում որպես գերակա սկզբունք որդեգրվել է Երևանի քաղաքապետարանի գործունեության թափանցիկության և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելու ապահովումը, մարդու իրավունքների, հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը, քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը, քաղաքի կառավարման ներառականության ապահովումը, իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի հանրահռչակումն ու ձևավորումը:

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է վերջնականապես լուծել մայրաքաղաքի աղբահանության և, ընդհանրապես, կենցաղային կոշտ թափոնների կառավարման խնդիրները՝ նոր և ժամանակակից լուծումներով:

Քաղաքաշինության ոլորտում միասնական մոտեցումների ձևավորումը և քաղաքային զարգացման քաղաքաշինական ռազմավարության մշակումը ծրագրով նախատեսված առաջնային և անհետաձգելի քայլերից են:

Հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխումները, ոլորտի ամբողջական արդիականացումը և ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանեցումը, արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրումը 2019-2023թթ. հնգամյա ծրագրի գերակա ուղղություններից է:

Ծրագրով նախատեսվում է բնակարանային-կոմունալ ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացմանը և կառավարման մարմինների նկատմամբ բնակիչների վստահության բարձրացմանն ուղղված քայլերի իրականացում:

Նախատեսվում է խիստ վերահսկողության տակ պահել բնապահպանության ոլորտը՝ բացառելով հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատման արդյունքում կանաչ տարածքների ոչնչացումը: Ծրագիրը նաև նախատեսում է իրականացնել նպատակային ծրագրեր կանաչապատման նոր մոտեցումների կիրառման միջոցով: Կիրականացվեն նաև էներգախնայողությանը, էներգաարդյունավետությանը և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմանն ուղղված ծրագրեր, որոնք կնպաստեն քաղաքի էկոլոգիական վիճակի բարելավմանը, ֆինանսական ռեսուրսների խնայողությանն ու արդյունավետության բարձրացմանը:

Գերակա ուղղություններից է լինելու առողջապահության և սոցիալական ապահովության համակարգերի բարելավումը, Երևան քաղաքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Հասցեական և նպատակային ծրագրեր կիրականացվեն մայրաքաղաքի զբոսաշրջային գրավչության բարձրացման նպատակով:

Երևանի զարգացման հնգամյա ծրագրի առանձին ոլորտ է հանդիսանում «Խելացի Երևան» ծրագիրը, որով կարևորվում է կառավարման օպտիմալացումն ու ծառայությունների որակի բարելավումը, նոր տեխնոլոգիաների լայն կիրառությանը:

Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրով քաղաքային տնտեսության զարգացման գործում մեծ կարևորություն է տրվում համայնք-մասնավոր հատված համագործակցությանը և համատեղ իրագործվող ծրագրերի շրջանակի ընդլայնմանը:

Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2018 թվականի նոյեմբերի 14-ի նիստի դրական եզրակացությամբ «Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացվել է հանրային քննարկումների: Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ.45-Ն և Երևանի քաղաքապետի 2018 թվականի նոյեմբերի 14-ի հ.3409-Ա որոշումների համաձայն՝ 2018 թվականի նոյեմբերի 14-29-ը ներառյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ՝ հանրային բաց լսումների եղանակով: Հանրային քննարկումների արդյունքներն ամփոփվել են 2018 թվականի դեկտեմբերի 3-ին հրավիրված Խորհրդի նիստում: Խորհրդի անդամների միաձայն կողմ քվեարկությամբ տրվել է դրական եզրակացություն՝ Նախագիծը սահմանված կարգով Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքի ղեկավարը մշակում է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ չորս ամսվա ընթացքում, ներկայացնում ավագանու հաստատմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը և 2018թ. սեպտեմբերի 23-ին անցկացված Երևանի ավագանու արտահերթ ընտրությունները՝ մշակվել է Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի նախագիծը:

ՀՀ արդարադատության նախարարության 07.12.2018թ. հ. 05/14/630022-18 գրությամբ տրամադրված պետական փորձագիտական եզրակացության համաձայն՝ «Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի դրույթները նորմատիվ բնույթի չեն, նախագիծը վարքագծի պարտադիր կանոններ չի պարունակում, ուստի այն անհրաժեշտ է ընդունել այլ բնույթի ակտով, որը ՀՀ արդարադատության

նախարարություն ներկայացնելու անհրաժեշտություն չկա՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի:

Նշված պետական փորձագիտական եզրակացության հիման վրա նախագիծը վերախմբագրվել է:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածը՝ համաձայն որի Երևանի քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնվում Երևանի բնակչության կենսական շահերը, Երևանի զարգացման ծրագրերը, Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՍԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի որոշման

Երևանի զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագիր

Միջին համաքաղաքացիներ

Համայն հայության մայրաքաղաք Երևանը մեր հպարտությունն ու երազանքների մարմնավորումն է: Մենք բոլորս՝ յուրաքանչյուրն իր տեղում, իր աշխատանքով, իր հնարավորությունների և կարողությունների սահամաններում, պարտավոր ենք կառուցել, շենացնել, հզորացնել և հետագա սերունդներին փոխանցել հազարամյակների պատմություն ունեցող մեր քաղաքը:

2018 թվականին մենք միասին տոնեցինք Երևանի հիմնադրման 2800-ամյակը: Քաջ գիտակցելով պատմական այս պահի կարևորությունը՝ մենք նաև լիարժեք պատկերացում ենք այն մեծ պատասխանատվությունը, որն ունենք մենք բոլորս հետագա սերունդների առջև:

Մայրաքաղաքում կուտակված խնդիրները բազմաթիվ են: Դրանք ամենօրյա սրտացավ և օպերատիվ աշխատանք, լուծումներ են պահանջում: Կան բազմաթիվ ոլորտներ, որտեղ համակարգային նոր մոտեցումների, բարեփոխումների խիստ անհրաժեշտություն կա:

Այս ամենով հանդերձ, մեր աշխատանքի ամենագլխավոր սկզբունքը և գերակա ուղղությունը լինելու է քաղաքացու շահերի, իրավունքների պաշտպանությունը, կենցաղային և կենսական հարմարավետության ապահովումը: Առաջնային կարևորություն ունի քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը, լսելի դարձնելով բոլոր կարծիքները:

Երևան քաղաքի կայուն զարգացման ապահովման գործում առաջնորդվելու ենք մարդու իրավունքների, հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանության, իրավահավասարության և ներդաշնակ համակեցության գերակա սկզբունքներով՝ կառավարման արդյունավետության բարձրացման, քաղաքապետարանի գործունեության թափանցիկության և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելու միջոցով:

Մեր գլխավոր ուղենիշն ու տեսլականն է Երևանը դարձնել անվտանգ, առողջ, հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայր, իսկ այցելուների համար՝ գրավիչ ճամփորդական ուղղություն:

Այդ նպատակին հասնելու համար պետք է հետևողականորեն լուծել բոլոր հիմնախնդիրները, քաղաքային տնտեսությունում առկա մարտահրավերները ոլորտ առ ոլորտ, քայլ առ քայլ:

Առաջիկա տարիներին՝ սկսած այսօրվանից, հրատապ լուծման անհրաժեշտություն ունեն մայրաքաղաքի աղբահանության, և ընդհանրապես, կենցաղային կոշտ թափոնների կառավարման խնդիրները՝ նոր, ժամանակակից չափորոշիչներին համապատասխան աղբավայրի կառուցումը, աղբի վերամշակման գործարանի հիմնումը:

Որպես գերակա ուղղություն առաջնահերթ կարևորություն ունեցող հիմնախնդիր է հասարակական տրանսպորտի համակարգային, ամբողջական արդիականացումը, արդյունավետ բարեփոխումների իրականացումը, երևանցու համար արժանավայել

տրասպորտային սպասարկման ապահովումը: Անհրաժեշտ է նաև ծառայությունների որակի բարձրացմանը զուգընթաց ներդնել նոր մշակույթ:

Համակարգային լուծում պահանջող կարևորագույն խնդիրներից է դեռևս խորհրդային տարիներից ժառագայություն ստացած վերելակային տնտեսությունը: Անհրաժեշտ է վերանորոգել վթարային վերելակները, ահրաժեշտության դեպքում դրանք փոխարինել նորերով, բարձարացնել դրանց կառավարման արդյունավետությունը:

Միաժամանակ գործուն քայլեր պետք է իրականացնել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացման և գործունեության թափանցիկության ապահովման, բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և բնակիչների միջև համագործակցային կապի ամրապնդման նպատակով:

Կրթության ոլորտում առաջնային են լինելու նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովմանն ուղղված ծրագրերը, Երևան քաղաքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը, շենքային պայմանանների բարելավմանն ուղղված ծրագրերը:

Քաղաքաշինության ոլորտում միասնական մոտեցումների ձևավորման և ոլորտի կանոնակարգման նպատակով մասնագիտական և հանրային քննարկումների միջոցով օր առաջ անհրաժեշտ է մշակել քաղաքային զարգացման քաղաքաշինական ռազմավարության, քաղաքաշինական ծրագրերի և դրանց առաջնահերթությունների վերաբերյալ իրականացնել հանրային լայն քննարկումներ և հասարակական հարցումներ:

Ամենօրյա ուշադրության կենտրոնում են լինելու մայրաքաղաքի բնապահպանական խնդիրները: Մի կողմից բացառելով հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատման արդյունքում հանրային շահի ոտնահարումը, կանաչ տարածքների ոչնչացումը՝ նպատակային ծրագրեր կիրականացվեն կանաչապատման նոր մոտեցումների կիրառման և ոլորտի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Ժամանակակից մարտահրավերներին համահունչ զարգացում ապահովելու նպատակով կիրականացվեն էներգախնայողությանը, էներգաարդյունավետությանը և վերականգնվող, «կանաչ» էներգետիկ ռեսուրսների օգտագործմանն ուղղված ծրագրեր, որոնք պետք է նպաստեն քաղաքի էկոլոգիական վիճակի բարելավմանը:

Գերակա ուղղություններից է լինելու առողջապահության և սոցիալական ապահովության համակարգերի բարելավումը: Հետևողական աշխատանքներ կիրականացվեն Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավման, նոր մեխանիզմների ներդրման նպատակով: Սոցիալական խոցելի խմբերի աջակցությանն ուղղված հասցեական ծրագրերի իրականացմամբ կրելու է շարունակական բնույթ:

Մայրաքաղաքի զբոսաշրջային գրավչության բարձրացման նպատակով ծրագրեր կիրականացվեն զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանման, Երևանի զբոսաշրջային ինքնության ստեղծման ուղղությամբ: Կմշակվի մայրաքաղաքի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ:

Մեր գործունեության կարևոր ուղղություններից է լինելու գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար

միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը, համայնք - մասնավոր հատված համագործակցության ընդլայնումը քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում՝ նպատակ ունենալով վերջինիս միջոցով ոլորտում ապահովել անհրաժեշտ ներդրումներ, բարձրացնել տվյալ ոլորտներում կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակը:

Քաղաքային տնտեսության կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ոլորտային ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման ընթացքում ընդլայնելու ենք նորարարական գաղափարների, տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների կիրառությունը: Երևանի փոխակերպումը «Խելացի քաղաքի» այլընտրանք չունի:

Մենք հավատում ենք, որ մեր միասնական և վստահ քայլերով, համախմբվածությամբ, մեր քաղաքի նկատմամբ սրտացավ և հոգատար վերաբերմունքով, անսահման սիրով ու բարձր պատասխանատվությամբ, ազնիվ աշխատանքի ու նվիրումի շնորհիվ կարող ենք շենացնել մեր տունը, մեր Երևանը և մեր Հայրենիքը:

Հայկ Մարության

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7

ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ..... 9

ԳԼՈՒԽ 2. ԵՐԵՎԱՆԻ 2019-2023ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 17

ԳԼՈՒԽ 3. ԵՐԵՎԱՆԻ 2019-2023ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ 19

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ..... 19

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ 23

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ 25

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ..... 29

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ..... 31

ՏՐԱՆՍՊՈՐՏ..... 36

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ..... 40

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ..... 42

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 44

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ 46

ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ՄՇԱԿՈՒՅԹ,
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 52

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 58

ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ 60

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 63

ԳԼՈՒԽ 4 ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԵՐ 64

ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ..... 64

ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 66

ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ..... 68

ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 70

Է Ր Ե Բ Ո Ւ Ն Ի Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն 72

ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 74

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ..... 76

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ..... 78

ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ..... 80

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	82
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	81
ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	88

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանն աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է և գտնվում է Արևելյան Եվրոպայի և Արևմտյան Ասիայի հատման կետում:

Երևանը Հայաստանի 12-րդ մայրաքաղաքն է: Քաղաքը հիմնադրել է Արգիշտի Առաջինը մ.թ.ա. 782 թվականին: Երևանը Հայաստանի խոշորագույն տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է: Մայրաքաղաքի բնակչությունը կազմում է 1077.6 հազ. մարդ, որը կազմում է հանրապետության բնակչության ավելի քան 35%-ը:

Երևանում է գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարությունները և պետական կառավարման մարմինները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների գերակշիռ մասը: Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների գրասենյակները, օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունները, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերն ու ֆինանսական հաստատությունները:

Երևանում է գտնվում իր տեսակով եզակի՝ հին ձեռագրերի կենտրոն Մատենադարանը, բազմաթիվ գիտական հաստատություններ, համալսարաններ և ինստիտուտներ, երկու տասնյակ թատրոն և մոտ 68 թանգարան, համերգասրահ և մարզական կենտրոն: 2012թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն Երևանը հռչակեց «Գրքի համաշխարհային մայրաքաղաք», նույն թվականին նշվեց հայ գրատպության 500 ամյակը:

Լինելով վարչական, տնտեսական, ֆինանսական, գիտական և մշակութային կենտրոն՝ քաղաքը նաև հանդիսանում է տարածաշրջանային փոխադրումների կարևորագույն տրանսպորտային և տարանցիկ հանգույց: Երևանում է գտնվում Զվարթնոց միջազգային օդանավակայանը, Հայաստանում գործող 2 ազատ տնտեսական գոտիները: 2015թ. հունվարից Հայաստանը դարձել է Եվրասիական տնտեսական միության անդամ, ինչը նոր հնարավորություններ է ստեղծում ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժման տեսանկյունից:

Երևանի տնտեսությունը բազմաճյուղ է՝ գյուղմթերքի վերամշակումից մինչև տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներ: Երևանի ՀՆԱ-ն, ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կատարված հետազոտությունների, 2015թ. կազմել է 2,833,215.6 մլն դրամ, որը Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի շուրջ 56%-ն է (ՀՀ ՀՆԱ-5.032.089.0 մլն): 2015թ. ՀՆԱ-ն աճել է 2014թ. ցուցանիշի նկատմամբ մոտ 3.6%-ով: Մեկ շնչի ՀՆԱ-ն կազմել է շուրջ 2,644.158 մլն դրամ: Երևանում ՀՆԱ-ի բաշխվածությունը ըստ ոլորտների հետևյալն է՝ ծառայություն 57.7%, առևտուր 16.6%, արդյունաբերություն 13.4%, շինարարություն 11.9 %, գյուղատնտեսություն 0.4%:

Երևանում տնտեսապես ակտիվ բնակչությունը 2016թ. կազմել է 383.3 հազ. մարդ: Նույն թվականին զբաղվածների թիվը կազմել է 271.8 հազ. մարդ:

Երևանին են բաժին ընկնում հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալի 40.8%-ը, շինարարության՝ 61.0%-ը, մանրածախ առևտրի՝ 74.0%-ը, ծառայությունների՝ 82.2%-ը, շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի՝ 85.4%-ը:

Արտաքին առևտրի շրջանառությունը Երևանում 2016թ. կազմել է 1 694 319.1 մլն դրամ, այդ թվում՝ արտահանում 435 781.6 մլն դրամ և ներմուծում 1 258 537.5 մլն դրամ:

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը հանդիսանում է առաջին հյուրընկալն ու հիմնական հանգրվանը:

2018թ. սեպտեմբեր ամվա դրությամբ Երևանում գործում է շուրջ 300 հյուրանոցային տնտեսության օբյեկտ: Մայրաքաղաքի հյուրանոցային տնտեսության օբյեկտները ապահովում են 5620 համար և 9580 ննջատեղ: 2018թ. Երևանի հյուրանոցային տնտեսության ոլորտն ավելացել է 1000 համարով:

ՀՀ ԱՎԾ հրապարակած տվյալների համաձայն՝ 2018 թվականի հունվար-հունիս ամիսներին Հայաստան է ժամանել 685 հազար 971 զբոսաշրջիկ: Այդ ամիսներին Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 63590-ով կամ 10.2%-ով:

ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2018թ. հուլիսի 1-ի դրությամբ Երևան քաղաքի մշտական բնակչությունը կազմել է 1077.6 հազար մարդ, իսկ բնակչության խտությունը՝ 4832 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա: Երևանը զբաղեցնում է 223.0կմ² տարածք: Զբաղեցրած տարածքով ամենամեծ վարչական շրջաններն են՝ Էրեբունին՝ 4749 հա, Շենգավիթը՝ 4060 հա, Աջափնյակը՝ 2582 հա, Մալաթիա-Սեբաստիան՝ 2516 հա, իսկ ամենափոքր տարածք զբաղեցնում են Ավանը՝ 726 հա, Դավթաշենը՝ 647 հա, Նորք-Մարաշը՝ 476 հա: Երևանի բնակչության մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն Շենգավիթը՝ 12.9% (140.0 հազ. մարդ), Մալաթիա-Սեբաստիան՝ 12,7% (137.8 հազ. մարդ), Նոր-Նորք վարչական շրջանը՝ 12,2% (131.8 հազ. մարդ), Էրեբունի վարչական շրջանը՝ 11,8% (127.9 հազ. մարդ), Կենտրոնը և Արաբկիրը՝ համապատասխանաբար 11,6% և 10,6% (125.4 հազ. մարդ) և (114.7 հազ. մարդ): Ամենափոքր տեսակարար կշիռն ունեն Նորք-Մարաշը՝ 1,0% (11.7 հազ. մարդ) և Նուբարաշենը՝ 0,9%-ը (9.8 հազ. մարդ):

Աղյուսակ 1

Երևանի վարչական շրջանների տարածքը և բնակչության թվաքանակը 2018թ. հուլիսի 1-ի դրությամբ¹

	Տարածքը, հա	Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը, %	Բնակչության թվաքանակը, հազ. մարդ	Երևանի բնակչության թվաքանակում տեսակարար կշիռը, %
Ք. ԵՐԵՎԱՆ	22300	-	1 077.6	-
Աջափնյակ	2582	11.6	109.3	10.1
Ավան	726	3.2	52.8	4.9
Արաբկիր	1329	5.9	114.7	10.6
Դավթաշեն	647	2.9	42.5	3.9
Էրեբունի	4749	21.3	127.9	11.8
Կենտրոն	1335	6.0	125.4	11.6
Մալաթիա-Սեբաստիա	2516	11.3	137.8	12.7
Նոր Նորք	1411	6.3	131.8	12.2
Նորք-Մարաշ	476	2.1	11.6	1.0
Նուբարաշեն	1724	7.7	9.8	0.9
Շենգավիթ	4060	18.2	140.0	12.9
Քանաքեռ-Զեյթուն	773	3.5	73.9	6.8

Երևան քաղաքում բնակչության շարունակական աճ է արձանագրվել: Մասնավորապես Երևանում 2013թ. նկատմամբ 2018թ. բնակչությունը աճել է շուրջ 11.3 հազ.: Աճ են արձանագրել

¹ ՀՀ ԱՎԾ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2018 թվականի հուլիսի 1-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017

Աջափնյակ, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նուբարաշեն, Շենգավիթ վարչական շրջանները:

Աղյուսակ 2

Բնակչության թվաքանակի դինամիկան ըստ Երևանի վարչական շրջանների, հազ. մարդ²

	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
Ք. ԵՐԵՎԱՆ	1 066.3	1 068.3	1 071.5	1 073.7	1 075.8	1 077.6
Աջափնյակ	108.7	108.8	108.9	109.1	109.2	109.3
Ավան	53.3	53.1	53.1	53.1	53.0	52.8
Արաբկիր	117.2	116.7	116.2	115.8	115.4	114.7
Դավթաշեն	42.5	42.5	42.5	42.5	42.5	42.5
Էրեբունի	124.4	125.0	125.8	126.5	127.2	127.9
Կենտրոն	126.0	125.8	125.8	125.7	125.6	125.4
Մալաթիա-Սեբաստիա	133.7	134.4	135.2	135.9	136.7	137.8
Նոր Նորք	127.4	128.4	129.5	130.3	131.0	131.8
Նորք-Մարաշ	12.0	11.9	11.9	11.8	11.8	11.6
Նուբարաշեն	9.7	9.7	9.8	9.8	9.8	9.8
Շենգավիթ	137.2	137.8	138.6	139.1	139.6	140.0
Քանաքեռ-Զեյթուն	74.2	74.2	74.2	74.1	74.0	73.9


ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Երևանը հանրապետության խոշորագույն արդյունաբերական և տնտեսական կենտրոնն է: 2017թ. հանրապետության արդյունաբերության 40,8%-ը բաժին է ընկել Երևանին: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի (ներառյալ խմիչքներ) արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

² ՀՀ ԱԿԾ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2018 թվականի հունիսի 1-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին

Գծանկար 3

Արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ արտադրության բաժինների, % 2017թ.³



Երևան քաղաքի մշակող արդյունաբերության մեջ թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալում առավել մեծ տեսակարար կշռով առանձնանում է սննդամթերքի արտադրությունը՝ 36,1%: Խմիչքների արտադրությունը կազմում է 12,2%, պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում՝ 2,8%, հիմնային մետաղների արդյունաբերությունը՝ 16,0%, ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը՝ 12,7%:


ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2016թ. Երևանի շինարարության ծավալները կազմել են ամբողջ հանրապետության ծավալի շուրջ 61.0%-ը:

³ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին

Գծանկար 4


Շինարարության ծավալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2010, 2013 և 2016թթ. %⁴



2016թ. Երևանում շահագործման հանձնված բնակելի շենքերի մակերեսը կազմել է ամբողջ հանրապետության շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի շուրջ 77.7%-ը:

Գծանկար 5

Շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը ք. Երևանում, քմ⁵



Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քմ շուկայական միջին գների համեմատականում՝ ըստ վարչական շրջանների, ամենաբարձր եռյակը կազմում են Կենտրոն վարչական շրջանը՝ 541 800 դրամ, Արաբկիր վարչական շրջանը՝ 374 600 դրամ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը՝ 279 200 դրամ, իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում՝ 167 050 դրամ:

⁴ 2010-2017թ. վիճակագրական տարեգիրք

⁵ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017

Աղյուսակ 3

Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քմ շուկայական միջին գները՝ ըստ վարչական շրջանների, դրամ⁶

Վարչական շրջան	2017թ. օգոստոս	2018թ. օգոստոս
Աջափնյակ	226250	252400
Ավան	247000	257600
Արաբկիր	342500	374600
Դավթաշեն	251500	291000
Էրեբունի	236000	259800
Կենտրոն	452800	541800
Մալաթիա-Սեբաստիա	230000	242000
Նոր Նորք	229200	242200
Նուբարաշեն	156000	167050
Շենգավիթ	240000	256900
Քանաքեռ-Զեյթուն	266500	279200

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հայաստանի Հանրապետության մանրածախ առևտրի շրջանառության զգալի հատվածը բաժին է ընկնում Երևանին: Մասնավորապես՝ 2011թ. շուրջ 77%-ը, 2012թ. շուրջ 91%-ը, 2017թ. շուրջ 74,5%-ը:

Ծառայությունների մատուցման ոլորտում Երևանը նույնպես առաջատար է Հայաստանի Հանրապետությունում: 2010-2016թթ. ընթացքում այս ցուցանիշը երկրում կայուն աճ է արձանագրել՝ 2016 թվականին հասնելով 1 268 934.0 մլն դրամի: Մակայն մատուցվող ծառայությունների 80.6%-ը բաժին է ընկնում հենց Երևանին, իսկ մնացած 19.4%-ը հանրապետության տասը մարզերին:

⁶ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թվականի հունվար-օգոստոս ամիսներին,

Գծանկար 6⁷

Ծառայությունների ծավալը՝ ըստ ք. Երևանի և ՀՀ /մլն դրամ/



Երևանի ծառայությունների ոլորտի առաջատար ուղղություններն են մշակույթը, զվարճություններն ու հանգիստը, կացության և հանրային սննդի կազմակերպումը, կրթությունը, առողջապահությունը և այլն:

Մեկ բնակչին ընկնող ծառայությունների մեծությամբ առաջատարը կրկին Երևանն է, որը միջին հանրապետականին գերազանցում է 2.2 անգամ:

Աղյուսակ 4⁸

Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը, ՀՀ դրամ

	2010	2011	2012	2013	2014	2015	2016
ՀՀ	242277	266902	320860	338424	368360	395694	422970
ք. Երևան	607343	670268	792112	841917	886273	910971	948902

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը հանդիսանում է Երևան քաղաքի տնտեսության ամենափոքր հատվածը: Սակայն այս ոլորտը յուրաքանչյուր տարի գրանցում է համախառն արտադրանքի աճ: Ընդ որում 2011 թվականին 2016 թվականի նկատմամբ գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը կազմել է ավելի քան 70.0 %՝ ավելանալով 4.6 մլրդ դրամով: Գյուղատնտեսության մեջ առաջատար ճյուղը կազմում է անասնաբուծությունը՝ շուրջ 59.8%, իսկ բուսաբուծությունը՝ 40.2%:

ԵՐԵՎԱՆԻ ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեն եկամուտների գծով կազմում է 80,189,969.8 հազ. դրամ, իսկ ծախսերի գծով՝ 80,237,969.8 հազ. դրամ:

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 72,479,069.8 հազար դրամ՝ ծրագրված 72,285,608.7 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 100.3%: Ընդ որում՝ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված

⁷ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին

⁸ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2010-2017,

72,276,808.7 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 72,449,035.8 հազար դրամ՝ ապահովելով 100.2% կատարողական:

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են 70,990,187.0 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 97.5%-ը: Ընդ որում, 2017 թվականի փաստացի կատարված ծախսերի ծավալը պակաս է 2016 թվականի փաստացի կատարողականից 7,490,929.5 հազար դրամով:

Միաժամանակ բյուջետային տարվա ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:

Աղյուսակ 5

Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները 2015-2017թթ.

N	Բովանդակություն	հազ. ՀՀ դրամ		
		2015	2016	2017
1	Բյուջեի եկամուտները	76,561,620.2	77,331,108.2	72,479,069.8
2	Բյուջեի ծախսերը	77,078,437.5	78,481,116.5	70,990,187.0
3	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ	24.9%	25.7%	28.1%
4	Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ	4.9%	3.1%	1.2%
5	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	106.5%	98.9%	85.9%
6	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	108.4%	102.1%	100.3%
7	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	106.9%	100.1%	84.1%
8	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	108.2%	100.3%	97.0%
9	Համայնքի աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդամենը ծախսերի մեջ	6.8%	6.5%	8.1%

10	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը	71.5	71.5	66.2
11	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային սեփական եկամուտը	17.9	18.9	18.6
12	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային ծախսը	71.9	72.6	64.9

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը:

Այդ նպատակով Երևանի պաշտոնական www.yerevan.am կայքում ամենօրյա թարմացման ռեժիմով գործում է Երևան քաղաքի տարեկան ինտերակտիվ բյուջեն, որը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր շահագրգիռ քաղաքացու առցանց տեղեկացված լինել քաղաքային տնտեսության ֆինանսական շրջանառության մասին: Իրականացվում է Երևանի ավագանու նիստերի առցանց հեռարձակումը www.yerevan.am կայքով: Արդեն իսկ կայացել է քաղաքի կարևորագույն խնդիրների՝ ներառյալ Երևանի բյուջեի, վերաբերյալ հանրային քննարկումների և բաց լսումների ինստիտուտը:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԵՎԱՆԻ 2019-2023ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Երևան քաղաքում կայուն զարգացման ապահովում՝ կառավարման արդյունավետության բարձրացման, քաղաքապետարանի գործունեության թափանցիկության և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելու միջոցով:
2. Մարդու իրավունքների, հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացում:
3. Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորում՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և տեղական հանրաքվեների միջոցով:
4. Քաղաքի կառավարման ներառականության ապահովում:
5. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի հանրահռչակում և ձևավորում:
6. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծում:
7. Կոշտ թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծում, այդ թվում՝ աղբահանության կազմակերպման և կարգավորում, նոր աղբավայրի և աղբի վերամշակման գործարանի ստեղծում:
8. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգի ամբողջական արդիականացում:
9. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և բնակիչների միջև համագործակցային կապի ամրապնդում:
10. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացում և գործունեության թափանցիկության ապահովում:
11. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանում:
12. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանում, Երևանի զբոսաշրջային ինքնության ստեղծում:
13. Շրջակա միջավայրի պահպանում և վերականգնում:
14. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնախնդրի լուծում:
15. Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավման մեխանիզմների ներդրում:
16. Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովում:
17. Երևան քաղաքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում:

18. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակույթի բոլոր ճյուղերում մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովում:
19. «Խելացի քաղաք» ծրագրի ներդրում, կառավարման օպտիմալացում և ծառայությունների որակի բարելավում:
20. Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատում ու պահպանում: Երևանի տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովում:
21. Երևանի կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովում:
22. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող համակարգերի ներդրում, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացում, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացում:
23. Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում:
24. Բնակելի ֆոնդի վերանորոգում և պահպանում, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովում:
25. Հանգստի գոտիների ստեղծում, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացում:
26. Նոր կառուցապատվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծում:
27. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանում:
28. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում:
29. Երեխաների իրավունքների պաշտպանություն և անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավում:
30. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովում և այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի իրագործում:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԵՎԱՆԻ 2019-2023ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, ենթակառուցվածքի զարգացումը, աշխատատեղերի ստեղծումը, բնակչության բարեկեցության, համաչափ և կայուն զարգացման ապահովումը Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի գերակայություններից է:

Երևան քաղաքում իրականացվող կառուցապատման աշխատանքները պետք է հիմնվեն առաջին հերթին պատմամշակութային արժեքների և ճարտարապետական հուշարձանների պահպանման սկզբունքների վրա՝ հաշվի առնելով բնակիչների իրավունքների պաշտպանության և սեյսմիկ անվտանգության բոլոր կանոնների պահպանման հիմնադրույթները:

Հիմնախնդիրներ

1. Հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատման արդյունքում հանրային շահի ոտնահարում:
2. Քաղաքային զարգացման քաղաքաշինական նոր ռազմավարության անհրաժեշտություն:
3. Քաղաքաշինական ծրագրերի և դրանց առաջնահերթությունների վերաբերյալ հանրային լայն քննարկումների և հասարակական հարցումների իրականացման անհրաժեշտություն
4. Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով անհրաժեշտ խիստ վերահսկողության բացակայություն:
5. Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման լիարժեք մատչելիության բացակայություն:
6. Քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հիմնախնդրի առկայություն:
7. Վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղիների բացակայություն:
8. Մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի կողմից ստորգետնյա անցումներից օգտվելու համար դրանց պատշաճ տեսքի և անվտանգության ապահովման անհրաժեշտ մակարդակի բացակայություն:
9. Քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով համայնք-մասնավոր հատույթի համագործակցության զարգացմանն ուղղված քայլերի իրականացման անհրաժեշտություն:
10. Երևանի ճանապարհափողոցային ցանցի՝ մինչև 2030 թվականը զարգացման հիմնական ուղղությունների հստակեցման անհրաժեշտություն:
11. Երևանի գլխավոր հատակագծի իրագործմանն ուղղված միջոցառումների իրականացման, այդ թվում՝ ընթացքի ուսումնասիրության, հաշվառման, անհրաժեշտ փոփոխությունների իրականացման, համապատասխան ծրագրերի, գոտիավորման նախագծերի մշակման անհրաժեշտություն:

12. Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կարգավորման համար օրենքով նախատեսվող անհրաժեշտ իրավական և նախագծային փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն:
13. Երևան քաղաքի քաղաքաշինական կադաստրի ստեղծման և ներդրման անհրաժեշտություն:
14. Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն:

2019-2023 թվականներին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացառելու հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատումը և դրա արդյունքում հանրային շահի ոտնահարումը:
2. Նախատեսվում է մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն (City Development Strategy), որն ուղղված կլինի ենթակառուցվածքների զարգացմանը, բնակչության բոլոր շերտերի կարիքների և կենսական պահանջումների բավարարմանը, քաղաքի կայուն և համաչափ զարգացմանը, տրանսպորտի և քաղաքային այլ ենթակառուցվածքների կարգավորմանը, կնպաստի քաղաքացի-քաղաքապետարան կապի ամրապնդմանն ու քաղաքացիների անմիջական մասնակցությանը քաղաքային կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների կայացմանը և լուծմանը:
3. Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով նախատեսվում է իրականացնել խիստ վերահսկողություն՝ նպատակ ունենալով կարգավորել ոլորտում առկա խնդիրները: Հսկողության խստացմանը զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել նաև հանրային լայն իրազեկում՝ ապօրինի շինարարության և հողազավթումների իրավական անխուսափելի հետևանքների վերաբերյալ: Կբացառվի ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը՝ նոր կառուցվող ապօրինի կառույցների նկատմամբ:
4. Նախատեսվում է 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների համար իրականացնել վերաբնակեցման ծրագիր՝ օգտագործելով սոցիալական բնակարանաշինության ոլորտում համայնք-մասնավոր հատված համագործակցության հնարավորությունները: Ծրագրի նպատակն է ապահովել 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների անվտանգությունը՝ միաժամանակ նպաստելով համայնք-մասնավոր համագործակցության զարգացմանը:
5. Ծրագրով նախատեսվում է արևային էներգիայի և էներգախնայող համակարգերի օգտագործմամբ ընդլայնել փողոցների լուսավորման ցանցը: Ծրագրի նպատակն է խթանել Երևան քաղաքում էներգաարդյունավետության և էներգախնայողության մակարդակի բարձրացմանը՝ օգտագործելով էներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:
6. Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել շենք-շինությունների և ենթակառուցվածքների մատչելիություն: Ծրագրի նպատակն է ստեղծել հարմարավետ քաղաքային միջավայր և անհրաժեշտ պայմաններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ապահովել ազատ տեղաշարժման հնարավորություն, կառուցել թեքահարթակներ:
7. Երթևեկության բեռնաթափման նպատակով նախատեսվում է կառուցել վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղիներ: Վերջին տարիներին մայրաքաղաքում ավտոտրանսպորտային միջոցների քանակի աճը առաջացնում է ժամանակակից բազմաֆունկցիոնալ ավտոկայանատեղերի կառուցման անհրաժեշտություն: Ծրագրի

նպատակն է լուծել Երևան քաղաքում ավտոմեքենաների կայանման խնդիրը, բեռնաթափել ծանրաբեռնված երթևեկությունը և նպաստել խցանումների նվազմանը:

8. Նախատեսվում է բարեկարգել առկա ստորգետնյա անցումները և ապահովել դրանց անվտանգությունը: Ծրագրի նպատակն է Երևան քաղաքում ապահովել բարեկարգ և միջազգային ստանդարներին համապատասխան ստորգետնյա անցումների կառուցումը և անվտանգ շահագործումը: Անցումները հարմարեցված կլինեն հաշմանդուսություն ունեցող անձանց համար, կլինեն լուսավորված և անվտանգ:
9. Արևային էներգիայի և էներգախնայող համակարգերի կիրառում քաղաքային լուսավորության ոլորտում:
10. Երևանի զարգացմանը համահունչ, հաշվի առնելով ոլորտի առաջնահերթություններն ու իրագործելիության հնարավորությունները կիրականացվեն Երևանի գլխավոր հատակագծով դեռևս տասնամյակներ առաջ նախատեսված ճանապարհաշինարարական (հատկապես շրջանցող մայրուղիների և տրանսպորտային հանգույցների) ծրագրերը միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով: Ծրագրով նախատեսվում է Երևանում կառուցել միջազգային չափանիշներին համապատասխանող ճանապարհներ, ինչը զգալիորեն կբեռնաթափի մայրաքաղաքի կենտրոնը տրանսպորտային հոսքերից: Նախատեսվում է նոր կառուցված ճանապարհների երկայնքով ստեղծել արդիականացված ստորգետնյա ենթակառուցվածքներ և ժամանակակից էներգախնայող լուսավորության համակարգ: Երևանի շրջանցիկ նոր ճանապարհը իրար կմիացնի մայրաքաղաքի հյուսիսային և հարավային մուտքերը: Կիրականացվեն Շիրակի փողոցից դեպի Արգավանդի հատված տանող ճանապարհի շինարարական աշխատանքները, որի ընթացքում նախատեսվում է Հրազդան գետի վրա կառուցել 252մ երկարությամբ կամուրջ: Ավարտին կհասցվեն Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները: Նախատեսվում է նաև Բաբաջանյան-Աշտարակ նոր ճանապարհահատվածի կառուցում: Նախատեսվում է նաև Ծովակալ Իսակովի պողոտայից մինչև Արշակունյաց պողոտա՝ Կենտրոնը շրջանցող ճանապարհ, որը հանդիսանում է կառուցված՝ Իսակովի պողոտան Լենինգրադյան փողոցին կապող մայրուղու անմիջական շարունակությունը, ինչն իր մեջ ներառելու է Արշակունյաց պողոտայի վրա նախատեսված հանգույցի և Հրազդան գետի վրայով անցնող նոր կամրջի կառուցում: Նախատեսվում է իրականացնել թվով 3 տրանսպորտային հանգույցների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակման և շինարարության իրականացման համար ներդրումների ներգրավմանն ուղղված աշխատանքներ.
 - Արշակունյաց պող., Ագաթանգեղոսի և Գր.Լուսավորիչ փողոցների հատման հանգույց (կրկեսի խաչմերուկ):
 - Արշակունյաց պող. և Գ.Նժդեհի փողոցի հատման մասում՝ «Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկ,
 - Արշակունյաց պող., Բագրատունյաց պողոտա (Աշխատանքի հրապարակ):
11. Նախատեսվում է իրականացնել Երևանի գլխավոր հատակագծի զարգացման ու դրա իրագործման հետ կապված ծրագրեր, Երևանի որոշ վարչական շրջանների գոտիավորման նախագծերի մշակումներ, իրականացնել Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կանոնակարգման հիմնախնդիրներից բխող միջոցառումներ
12. Կիրականացվեն նաև քաղաքաշինական ներդրումային ծրագրեր՝ համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ.
 - «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծում
 - Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում

- Երևան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված Տիչինա, Կոնդ, Սարի թաղ թաղամասերի համալիր կառուցապատում,
 - Ստորգետնյա ավտոկայանատեղեր՝ Շահումյանի և Սախարովի հրապարակներում,
 - «Էրեբունի», «Կարմիր Բլուր» և «Շենգավիթ» պատմահնագիտական արգելոց-թանգարանների վերակառուցման ծրագրերի իրականացում՝ զբոսաշրջիկների սպասարկման կենտրոնների կառուցմամբ,
 - «Զվարթնոց» օդանավակայան տանող նոր ավտոմայրուղու կառուցում,
 - Կոմիտասի պողոտային գույքահեռ ալլընտրանքային ճանապարհի կառուցում:
 - «Հաղթանակ» զբոսայգում միջազգային չափանիշներին համապատասխան հանգստի գոտու և զվարճանքի կենտրոնի ստեղծում (27հա),
 - Միջազգային չափանիշներին համապատասխան Կենդանաբանական այգու վերակառուցման ավարտ,
 - Հրազդանի կիրճի բարեկարգման ծրագիր՝ մարզական և մարմնակրթական բաղադրիչներով արկածային-զբոսաշրջային կենտրոնի ստեղծմամբ:
 - Երևանում նոր ճոպանուղային ցանցի կառուցում:
13. Նախատեսվում է Երևանի գլխավոր հատակագծի նախագծի մշակում՝ մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով. 1-ին փուլ՝ Երևանի մինչև 2030թ. քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում, Գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակում:

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

Գովազդային գործունեությունը մայրաքաղաքում իրականացվում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Բազմաբնակարան շենքերի մասին» ՀՀ օրենքի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի, Երևան քաղաքի ավագանու 2009թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» 37-Ն որոշման, և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է մեծ և փոքր գովազդային վահանակների և շենք-շինություններին տեղադրված գովազդային մակերեսների գույքագրում, էլեկտրոնային բազայի միջոցով կառավարում, գովազդի մասով վարչական շրջանների աշխատանքների համակարգում, մշակված հայեցակարգի տեղայնացում, գովազդային վահանակների արդիականացում, շենք-շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների անձնագրերի մշակում և գովազդային դաշտի օպտիմալացմանն ու արդիականացմանն ուղղված այլ ծրագրեր: Իրականացվում են «Գովազդի մասին» ՀՀ օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքներ, հսկողություն է իրականացվում մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքն օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հիմնախնդիրներ

1. *Գովազդային տարածքների հաշվառման, իրավական դաշտին համապատասխանեցման անհրաժեշտությունն Երևանի բյուջե համապատասխան մուտքերի ապահովում*
2. *Արտաքին ձևավորման միասնական չափանիշների ձևավորման անհրաժեշտություն բնակիչների մասնակցության ապահովմամբ:*
3. *Շենքերի և շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների կանոնակարգման անհրաժեշտություն*
4. *Էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման անհրաժեշտություն*
5. *Արտաքին գովազդի դաշտի կառավարման օպտիմալացման անհրաժեշտություն*
6. *Համայնք-մասնավոր հատված համագործակցության ընդլայնման անհրաժեշտություն*
7. *Վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորման անհրաժեշտություն*
8. *Ճակատային հատվածների, կամարանցումների վերանորոգման, նկարազարդման անհրաժեշտություն*
9. *Տոնական ձևավորման հայեցակարգի և արտաքին ձևավորման գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների մշակման անհրաժեշտություն*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել գովազդային տարածքների հաշվառման, չափագրման, իրավական դաշտին համապատասխանեցմանն ուղղված աշխատանքներ՝ Երևանի բյուջե համապատասխան մուտքերի ապահովման նպատակով:

2. Նախատեսվում է մշակել արտաքին ձևավորման միասնական չափանիշներ՝ մասնագիտական խմբերի և բնակիչների մասնակցության ապահովմամբ:
3. Կիրականացվի կամարանցումների վերանորոգում և գունազարդում՝ Երևանի կամարանցումների պատշաճ և գեղեցիկ տեսքն ապահովելու նպատակով: Յուրաքանչյուր տարվա սկզբին կիրականացվի կամարանցումների գույքագրման աշխատանքներ, կսահմանվի դրանց վնասվածության աստիճանը, որի հիման վրա կիրականացվեն վերանորոգման և գունազարդման աշխատանքներ:
4. Նախատեսվում է իրականացնել պանելային շենքերի ֆասադների գունազարդման աշխատանքներ՝ քաղաքային միջավայրին գեղագիտական տեսք հաղորդելու՝ անբարեհաճ տեսք ունեցող ֆասադային հատվածները գունազարդման միջոցով բարեկարգելու նպատակով:
5. Կիրականացվեն բակային տարածքների գեղագիտական ձևավորման՝ նկարազարդման աշխատանքներ բոլոր վարչական շրջանների բակային տարածքներին:
6. Կիրականացվեն դիտահորերի դեկորատիվ թուջե կափարիչների պատրաստման և տեղադրման աշխատանքներ: Կենտրոնական, առավել երևացող հատվածներում տեղակայված դիտահորերի կափարիչները կփոխվեն նոր, մայրաքաղաքի կոլորիտին համահունչ պատկերներով (նուռ, խաղող, կենաց ծառ, ծիրան և այլն):
7. Նախատեսվում է իրականացնել փողոցների, այգիների կահավորման աշխատանքներ: Մասնավորապես, Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների գլխավոր փողոցում, կենտրոնական այգիներում, հրապարակներում կտեղադրվեն «Երևան» գրվածքով նստարաններ, ձուլվածքով աղբամաններ, զրուցարաններ, հայտարարությունների վահանակներ, քաղաքային միջավայրը ներկայացնող կառույցների վերաբերյալ կողմնորոշիչ միասնական ցուցանակներ:
8. Կիրականացվեն մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով ներկման աշխատանքներ, որի շնորհիվ մետաղյա հենասյուները գերծ կմնան գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշներ և հայտարարություններ կպցնելուց, նաև կպահպանվի սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:
9. Նախատեսվում է մշակել շենքերի գովազդային անձնագրեր և գովազդները համապատասխանեցնել գովազդային անձնագրերին:
10. Կիրականացվեն արտաքին գովազդի դաշտի կառավարման օպտիմալացմանն ուղղված աշխատանքներ՝ արդյունավետության բարձրացման, բնակիչների կողմից ձևավորված կառավարման մարմնի միջոցով շենքերի արտաքին տեսքի պահպանման, տուրքերի հավաքագրման արդյունավետության բարձրացման, գովազդի տեղադրման թույլտվությունների ստացման ժամանակի կրճատման նպատակով:
11. Նախատեսվում նաև ներդրումային ծրագրերի իրականացում՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների տրամադրման սկզբունքով: Մասնավորապես, համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ կարող են կառուցվել վերգետնյա անցումներ, տեղադրվել կանգառասրահներ և քաղաքային կահույք՝ որպես փոխհատուցում գովազդային տարածքների տրամադրմամբ:
12. Նախատեսվում է կազմակերպել արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոն:
13. Կիրականացվեն քաղաքային միջավայրը ներկայացնող կառույցների վերաբերյալ կողմնորոշիչ միասնական ցուցանակների տեղադրման աշխատանքներ, մասնավորապես՝ մշակութային կրթօջախների և տուն-թանգարանների դիմաց:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Երևան քաղաքի փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 945կմ, Երևան քաղաքում առկա են շուրջ 1080 փողոցներ, իսկ փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 24.348.634քմ:

Հարմարավետություն և անվտանգություն ապահովող շինարարական աշխատանքների իրականացումից բացի բարեկարգման ծրագրերը ենթադրում են նաև մայրաքաղաքին հարիւր արտաքին տեսքի ապահովում:

Կատարվում են մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես վերանորոգվում կամ փոխարինվում են նորերով մայթերի ձևավոր բետոնե, բազալտե և տրավերտինե սալիկները, վերանորոգվում և տեղադրվում են նոր բետոնե և բազալտե եզրաքարեր:

Մայրաքաղաքի պատշաճ տեսքն ապահովվում է նաև շենքերի ճակատային հատվածների մաքրման, լվացման, նորոգման և ներկման, բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների վերանորոգման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների շնորհիվ:

Որպես մայրաքաղաքի այցեքարտ՝ կարևորվում են կամուրջների և կամրջային կառույցների արտաքին տեսքն ու հուսալիությունը:

Կամուրջների հիմնանորոգման նախագծեր կազմելիս հաշվի են առնվում ստացված առաջարկությունները և, կատարվող ուսումնասիրությունների արդյունքում, հնարավորության սահմաններում, իրականացվում են հիմնանորոգման աշխատանքներ:

Մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ հարմարավետ պայմաններ ստեղծելը հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծման նպատակով նոր հանգստի գոտիների, այգիների, պուրակների ստեղծման, բակային տարածքների ու խաղահրապարակների ստեղծման, հիմնանորոգման և պահպանման կատարված աշխատանքների ծավալը անհրաժեշտ է մեծացնել:

Ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մեծ ուշադրություն է հատկացվում բակերի բարեկարգման աշխատանքներին, ինչպես նաև մինի ֆուտբոլի դաշտերի կառուցմանը: Ներկայումս մայրաքաղաքում շահագործվում են 126 մինի ֆուտբոլի դաշտեր:

Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական և մարզական հաստատություններում հիմնանորոգման աշխատանքների ապահովումը ոլորտի գերակայություններից է:

Մայրաքաղաքին յուրահատուկ տեսք ու թարմություն են տալիս շատրվանները, ջրավազանները և բազմաթիվ ցայտաղբյուրները, որոնք բնորոշ են մեր մայրաքաղաքին:

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում առկա 37 ջրային կառույցների շահագործումն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի ծրագրերով յուրաքանչյուր տարի նախատեսվում են դրանց ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

- 1. Նոր հանգստի գոտիների ստեղծման անհրաժեշտություն*
- 2. Բակերի և այգիների ստեղծման և բարեկարգման անհրաժեշտություն*
- 3. Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովման անհրաժեշտություն*

4. Երևան քաղաքի փողոցների բարեկարգման, հիմնանորոգման անհրաժեշտություն
5. Հողային ծածկույթով (գրունտային) ճանապարհների վերակառուցման, ասֆալտապատման անհրաժեշտություն
6. Մայրերի վերանորոգման անհրաժեշտություն
7. Քանդված և վնասված, վթարային հենապատերի հիմնանորոգման, անվտանգության աստիճանի բարձրացման, նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն
8. Վթարային պատշգամբների նորոգման անհրաժեշտություն
9. Կամրջային կառույցների հիմնանորոգման անհրաժեշտություն
10. Գործող զբոսայգիների բարեկարգման և կանաչ տարածքի ընդարձակման անհրաժեշտություն
11. Շենքերի ճակատային մասերի մաքրման, լվացման, ներկման անհրաժեշտություն

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում տարեկան նորմատիվային չափաքանակի սահմաններում՝ նպատակ ունենալով ապահովել հուսալի և ժամանակակից ճանապարհներ և ապահովել անվտանգ երթևեկություն: Մայրաքաղաքը առավել բարեկեցիկ և հարմարավետ դարձնելու նպատակով վերանորոգման աշխատանքներ կկատարվեն նաև բակային տարածքներում: Բացի այդ կիրականացվեն մայրաքաղաք մտնող մայրուղիների, հրապարակների և վերանորոգման կարիք ունեցող այլ տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ: Քաղաքի կայուն և համաչափ զարգացման գերակա սկզբունքի համատեքստում աշխատանքներն իրականացվելու են բոլոր վարչական շրջաններում՝ շեշտը դնելով ծայրամասային վարչական շրջանների վրա: Իրականացվելու են նաև ճանապարհների ճաքերի վերանորոգում պոլիմերային և բիտումոպոլիմերային մածուցիկ նյութերով, որն էապես երկարացնում է ճանապարհի ասֆալտբետոնե ծածկի ծառայության ժամկետը: Կիրականացվի ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգում (գրունտային), հողային պաստառով ճանապարհների ասֆալտապատում:
2. Նախատեսվում է իրականացնել եզրաքարերի և մայրերի վերանորոգում (սալիկապատում), թեքահարթակների կառուցում: Գույքագրման արդյունքում արձանագրված բացակայող հատվածներում իրականացվելու է նոր եզրաքարերի տեղադրում, թեքված եզրաքարերի պարագայում դրանց ուղղում, ինչպես նաև բետոնե եզրաքարերի վերանորոգում, մայրերի վնասված, քանդված և բացակայող հատվածներում նոր սալիկների տեղադրում կամ հնի օգտագործմամբ վերանորոգում: Երևանի զարգացման ծրագրերով և մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյունքում հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար մատչելի պայմաններ ապահովելու, նրանց տեղաշարժը դյուրին և ապահով դարձնելու նպատակով մայրաքաղաքի փողոցների խաչմերուկներում, բանուկ մասերում, հասարակական վայրերում և հանգստի գոտիներում կկառուցվեն թեքահարթակներ, Երևանի բոլոր վարչական շրջաններում: Թեքահարթակի կառուցման անհրաժեշտությունը՝ որպես պարտադիր պայման նշվում է բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ և հասարակական տիպի շենքերի նախագծային աշխատանքների համար տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում, իսկ օբյեկտների շինարարական աշխատանքների ավարտից հետո, հանձնաժողովի կողմից

կազմված հանձնման-ընդունման, հետագայում նաև փաստագրման ակտերը հաստատվում են միայն թեքահարթակների առկայության դեպքում:

Նախատեսվում է հանրային շենքերում ապահովել թեքահարթակներ:

Նախատեսվում է նաև տեսողության խնդիր ունեցող անձանց համար ուղղորդող և նախազգուշացնող սալիկների տեղադրում:

Կիրականացվեն նաև մայթերի զավթած հատվածների ազատմանն ուղղված աշխատանքներ:

3. Նախատեսվում է կահավորել բակային տարածքները խաղահրապարակներով և մարզասարքերով: Ստեղծել պայմաններ ակտիվ ժամանցի համար:

Նախատեսվում է հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում և պահպանում, հենապատերի վերանորոգում, բակերի բարեկարգում՝ ներառյալ խաղահրապարակների և մինի ֆուտբոլի դաշտերի կառուցում:

Նախատեսվում է իրականացնել առկա հանգստի գոտիների և զբոսայգիների պատշաճ պահպանմանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև գույքագրել համապատասխան վայրեր՝ ապահովելով նոր հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում Երևանի համաչափ զարգացման սկզբունքով: Ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մեծ ուշադրություն կհատկացվի բակերի բարեկարգման աշխատանքներին, ինչպես նաև խաղահրապարակների կառուցմանը: Նախատեսվում է իրականացնել բակային տարածքների բարեկարգման ծրագիր Երևանի բոլոր վարչական շրջաններում մինչև դրանց ամբողջական ավարտը, կառուցել նոր խաղահրապարակներ և ֆուտբոլի դաշտեր, տեղադրել բակային հանգստի նպատակային կահավորանք, խաղահրապարակներում տեղադրել առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հարմարեցված խաղեր, ապահովել դրանց ընթացիկ պահպանումն ու անվտանգությունը: Վերանորոգման կարիք ունեցող հենապատերից առաջնահերթության սկզբունքով իրականացվելու է հենապատերի հիմնանորոգում, կառուցվելու են նոր հենապատեր՝ որպես թիրախ ունենալով գույքագրված հասցեներում խնդիրների ամբողջական լուծումը: Երթևեկության անվտանգության նկատառումներից ելնելով կատարվելու են քարաթափման կանխարգելիչ, ինչպես նաև թեք լանջերից գլորվող քարերից պաշտպանիչ համալիր միջոցառումներ:

4. Նախատեսվում է իրականացնել վթարային պատշգամբների նորոգում՝ բնակիչների անվտանգության ապահովման նպատակով: Կիրականացվի բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների քայքայված հատվածների հիմնանորոգում, բազրիքների ներկում:

5. Նախատեսվում է իրականացնել նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում բոլոր վարչական շրջաններում՝ Երևան քաղաքի մանկապարտեզների պատշաճ վիճակի և հարմարավետության, նախադպրոցական կրթության համար նպաստավոր պայմանների ապահովման նպատակով: Նախատեսվում է նաև թարմացնել կահույքն ու կենցաղային գույքը:

6. Կիրականացվի հանրային շենքերի էներգախնայողության ծրագիրը, որի նպատակն է հանրային շենքերում իրականացնել էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, ներառյալ նաև արևային էներգիայի օգտագործումը՝ ապահովելով հարմարավետ պայմաններ: Հիմնանորոգման աշխատանքները կներառեն սեյսմակայունության ապահովման, արտաքին պատող կոնստրուկցիաների

ջերմամեկուսացման, դռների և լուսամուտների փոխարինման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման համակարգերի, լուսավորության համակարգերի վերակառուցման և վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովման բաղադրիչները: Ծրագրով նախատեսվում է արևային ֆոտովոլտային կայանների և արևային ջրատաքացուցիչների կիրառում: Ծրագիրն իրականացվելու է Եվրոպական ներդրումային բանկի, Միավորված ազգերի զարգացման ծրագրի և E5P-ի (Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամ) աջակցությամբ:

7. Նախատեսվում է իրականացնել կամուրջների և կամրջային կառույցների շահագործման և պահպանմանն ուղղված աշխատանքներ: Մասնավորապես կիրականացվի կամուրջների և կամրջային կառույցների դեֆորմացիոն կարերի, ջրահեռացման խողովակների մաքրում, հենարանների և թռիչքային կառուցվածքների զննում, վնասվածքների դեպքում՝ վերանորոգում, բազրիքների, եզրաքարերի, լուսավորության սյուների և այլ էլեմենտների նորոգում, ներկում, երթևեկելի մասի և մայթերի նորոգում, մաքրում:
8. Նախատեսվում է վերագործարկել բոլոր չգործող շատրվաններն ու նախաձեռնել նորերի կառուցումը: Կիրականացվի ջրային կառույցների շահագործման և պահպանման աշխատանքներ Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում առկա 37 ջրային կառույցներում: Շահագործվում և սպասարկվում են մայրաքաղաքի շատրվանները, ջրավազանները, Երևանյան ջրամբարը, Հրազդան գետի վրա բարածները, Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ գետերը: Միաժամանակ կգույքագրվեն առկա հանգստի գոտիներում շատրվանների կառուցման հնարավորությունները և կկառուցվեն նորերը: Կիրականացվի նաև ցայտաղբյուրների վերանորոգում և նորերի կառուցում:
9. Նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի փողոցներում աղբամանների հարմարեցված հարթակների կառուցման աշխատանքներ՝ փողոցների պատշաճ վիճակի, աղբահանության ծառայության մատուցման, բնակչության և փողոցային երթևեկության անվտանգության ապահովման նպատակով: Կկառուցվեն մայրաքաղաքի փողոցների մայթերին տեղադրված և քաղաքացիների ազատ տեղաշարժին, ինչպես նաև երթևեկությանը խոչընդոտող աղբամանների տեղադրման համար հարմարեցված հարթակներ:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Երևան քաղաքում գործում են առևտրի 8652 օբյեկտներ, սպառողական ապրանքների 7, գյուղատնտեսական արտադրանքի 10, գյուղմթերքի փոքրածավալ 19 շուկաներ, տոնավաճառներ 5, առևտրի կենտրոններ 26, հանրային սննդի 1630 և կենցաղային ծառայություններ մատուցող 2830 օբյեկտներ:

Առևտրի օբյեկտների 62,3%-ը, հանրային սննդի կազմակերպման օբյեկտների 76%-ը և կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 68%-ը կենտրոնացված են Կենտրոն, Արաբկիր, Շենգավիթ և Նոր Նորք վարչական շրջաններում:

Մայրաքաղաքի բնակչության սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվում է խանութներում և սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի միջոցով: Եթե առևտրի այդ տեսակների շրջանառությունը մանրածախ առևտրի ողջ ծավալում 2018թ. 1-ին կիսամյակի ընթացքում կազմել է 91,8%, ապա գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, տաղավարների ու կրպակների միջոցով կատարվող առևտրի շրջանառությունը ունի չնչին տեսակարար կշիռ և նշված ժամանակաշրջանում այն կազմում է ընդամենը 2.4%:

Երևանում առևտրի շրջանառության ծավալի մոտ 90%-ը բաժին է ընկնում Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններին, չնայած նշված վարչական շրջաններում ապրում է քաղաքի բնակչության մոտ 60%-ը: Դա բացատրվում է այդ վարչական շրջաններում առևտրի խոշոր կազմակերպությունների առկայությամբ: Մնացած 7 վարչական շրջանների տարածքներում իրականացվող առևտրի շրջանառությունը առանձին-առանձին վերցրած կազմում է ընդամենի 0.03%-ից մինչև 6.2%:

Չնայած Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի արգելմանը, դեռևս հսկողության ուժեղացման և կանոնակարգման անհրաժեշտություն կա այն բացառելու համար:

Անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի, սպասարկման ծառայություններ մատուցող և զվարճանքի օբյեկտները:

Հիմնախնդիրներ

1. Երևան քաղաքի փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների), ինչպես նաև բացօթյա փոքրածավալ շուկաների ու տոնավաճառների և շինանյութերի վաճառքի կետերի մի մասի ապամոնտաժման կամ արդիականացման անհրաժեշտություն:
2. Օրենսդրության համապատասխան բացօթյա առևտրի պատշաճ կազմակերպման և ապօրինի առևտրի արգելման և կանխարգելման անհրաժեշտություն:
3. Պիտանիության ժամկետներն անցած ապրանքների վաճառքի նկատմամբ խիստ հսկողության սահմանման անհրաժեշտություն:
4. Առևտրի օբյեկտներում սզո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների՝ առևտրի օբյեկտից դուրս ցուցադրումն արգելելու ուղղությամբ հսկողության խստացման անհրաժեշտություն:

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելման նպատակով նախատեսվում է բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ խիստ հսկողության իրականացում և կանոնակարգում: Օրենսդրական պահանջներն ապահովելու, սպառողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու, նրանց բացասական հետևանքներից զերծ պահելու նպատակով կտրուկ միջոցառումներ կձեռնարկվեն բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման ուղղությամբ:
2. Կկազմակերպվեն գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաներ, տոնավաճառներ:
3. Կիրականացվեն բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգմանն ուղղված միջոցառումներ:
4. Հետևողական աշխատանքներ կիրականացվեն հանրային շահը ոտնահարող, չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժման ուղղությամբ:
5. Մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, ազգաբնակչությանը թարմ ու որակյալ մթերքով ապահովելու նպատակով վարչական շրջաններում շաբաթ, կիրակի և տոնական օրերին կկազմակերպվեն գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաներ, տոնավաճառներ:
6. Կիրականացվի Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների, տեղական տուրքերի մուտքերի նկատմամբ անհրաժեշտ հսկողություն և Երևանի բյուջեի համապատասխան մուտքերի ապահովում:
7. Նախատեսվում է առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացում:
8. Խիստ հսկողություն կիրականացվի ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ:
9. Նախատեսվում է առևտրի և սպասարկման օբյեկտների տեղաբաշխման և ոլորտի զարգացման ծրագրի մշակում:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնակարան շենքերի կառավարում

Երևանում առկա է 4878 բազմաբնակարան շենք, որից 4648-ի կառավարումն իրականացվում է 190 համատիրությունների կողմից, 109-ը՝ լիազորագրային կառավարիչների, 15-ը՝ հավատարմագրային կառավարիչների, 106-ը՝ վարչական շրջանների ղեկավարների:

Մայրաքաղաքի բարձրահարկ բազմաբնակարան շենքերի թվով 4428 վերելակները սպասարկվում և շահագործվում են վարչական շրջաններում կազմավորված վերելակային ծառայությունների ու համատիրությունների կողմից:

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի մեծ մասը կենտրոնացված են Կենտրոն, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջաններում, իսկ անհատական բնակելի տների թիվը 52784, որոնց մեծ մասը կենտրոնացված են Էրեբունի, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջաններում:

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների մակերեսը կազմում է 1236751քմ, իսկ բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների մակերեսը՝ 2230745 քմ:

Բնակելի ֆոնդի ընդհանուր օգտագործման տարածքների նորոգումը ոլորտի կարևորագույն խնդիրն է, որը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով բնակիչների կարիքները և անհրաժեշտությունը:

Հիմնախնդիրներ

1. *Վերելակային տնտեսության ավելի քան 90 տոկոսի արդիականացման, կառավարման օպտիմալացման և միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկման անհրաժեշտություն*
2. *Ընդհանուր օգտագործման տարածքների, այդ թվում՝ հարթ և թեք տանիքների վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն:*
3. *Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակ*
4. *Բազմաբնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործում. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» նոր օրենքի ընդունման անհրաժեշտություն*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է ապահովել բնակելի ֆոնդի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման աշխատանքների շարունակականությունը, աջակցել բնակչության կենսաապահովման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:
2. Բազմաբնակարանային շենքերի կառավարման և սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է ներգրավել մասնագիտացված ընկերություններ՝ ոլորտում ապահովելով մրցակցային դաշտ, մատուցել ծառայություններ և իրականացնել ընդհանուր սեփականության պատշաճ պահպանման աշխատանքներ:
3. Նախատեսվում է լուծել վերելակային տնտեսության հիմնահարցը, ապահովել վերելակային տնտեսության արդիականացումը և միջազգային չափանիշներին համապատասխան

անվտանգ սպասարկումը՝ ապահովելով անվտանգ պայմաններ Երևանի բնակիչների համար:

4. Օրենսդրական փոփոխությունների միջոցով կներդրվի համատիրությունների կառավարման նոր մոդել, որը կներառի գործառույթների հստակեցում, պատասխանատվության սահմանում և բնակչությանը հաշվետու լինելու մեխանիզմներ: Նախատեսվում է մշակել և ներդնել «Էլեկտրոնային համատիրություն» ծրագիրը:
5. Նախատեսվում է վերանորոգել բոլոր բազմաբնակարան շենքերի հարթ տանիքները:
6. Նախատեսվում է մշակել և իրականացնել բազմաբնակարան շենքերի թեք տանիքների ամբողջական հիմնանորոգման հիմնախնդրի հայեցակարգ:
7. Ավարտին կհասցվեն բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքները:
8. Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի նորոգման աշխատանքներ:
9. Նախատեսվում է իրականացնել առանց կոյուղատար համակարգի թաղամասերում դրանց կառուցումը:

Կոշտ թափոնների կառավարում

Երևան քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 24.348.634քմ: Մայրաքաղաքի տարածքից օրական հավաքվում և տարբեր աղբավայրեր է տեղափոխվում շուրջ 1000-1300տ:

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է մրցույթում հաղթող ճանաչված «Սանիթեք» և «Սանիթեք Ինթերնեյշնլ» ՍՊ ընկերությունների կողմից:

Նուբարաշենի քաղաքային աղբավայրը գործարկվել է 1950-ական թվականներին և գտնվում է մայրաքաղաքի կենտրոնից մոտ 9-10 կմ հեռավորության վրա՝ զբաղեցնելով շուրջ 52.3 հա տարածք:

Մայրաքաղաքի տարածքից Նուբարաշենի աղբավայր է տեղափոխվում տարեկան միջին հաշվով 290-320 հազ. տոննա կենցաղային աղբ: Այն ի սկզբանե չի նախագծվել և կառուցվել որևէ ընդունված ստանդարտով որպես աղբավայր, չի համապատասխանում միջազգային /կամ որևէ/ տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշների և բացառապես հանդիսանում է որպես աղբի կուտակման վայր:

Աղբավայրում առկա չէ հիմքի մեկուսացում և չի կատարվում առաջացող մեթան գազի հավաքում: Աղբավայրը չունի ժամանակակից պահանջները բավարարող հոսքաջրերի հավաքման որևէ տեխնիկական համակարգ, որի պատճառով հոսքաջրերը հոսում են առկա աղբավայրից դուրս՝ առանց որևէ պաշտպանիչ արգելքների: Աղբավայրը չունի անհրաժեշտ ենթակառուցվածքներ հավաքվող աղբն ընդունելու համար: Հեռացվող թափոնները ուղղակիորեն բեռնաթափվում ու խառնվում են (հիմնականում առանց տոփանման) թափոնների հավաքագրման առաջնային գծում: Աղբավայրը ցանկապատված և առանձնացված չէ: Նվազագույն ընդունելի շահագործում իրականացնելու համար աղբավայրն ապահովված չէ անհրաժեշտ քանակությամբ և որակի մեքենա-մեխանիզմներով:

Քաղաքային աղբավայրում ջերմոցային գազերի արտանետումը, ինքնաբռնկման երևույթները կանխելու նպատակով 2009թ. Երևանի քաղաքապետարանը ճապոնական «Շիմիձու» ընկերության հետ կնքել է համաձայնագիր Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և

այրման ծրագրի իրականացման վերաբերյալ: Պայմանագրի գործողության ժամանակահատվածում մինչև 2023 թվականը, ըստ հաշվարկների, պետք է իրականացվի 512 հազար տոննա CO₂ գազին համարժեք արտանետումների սերտիֆիկացված կրճատում:

Հիմնախնդիրներ

1. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների անբավարար մակարդակ
2. Երևանի հանրային տարածքների մաքրման, աղբահանության և ձևամաքրման նոր մեխանիզմների անհրաժեշտություն
3. Բնակչության շրջանում աղբի տեսակավորման և տարբերակման մշակույթի ձևավորման անհրաժեշտություն
4. Երևանի քաղաքային նոր աղբավայրի կառուցման անհրաժեշտություն՝ ժամանակակից միջազգային չափանիշների խստագույն պահպանմամբ
5. Գործող աղբավայրերի մեկուսացման անհրաժեշտություն՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան
6. Մայրաքաղաքում աղբավերամշակման գործարանի կառուցման անհրաժեշտություն
7. Չսահմանված վայրերում աղբ թափելու նկատմամբ վերահսկողության խստացման անհրաժեշտություն

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Վերանայել Երևանի փողոցների մաքրման, աղբահանության և ձևամաքրման աշխատանքների կազմակերպման գործընթացը: Նախատեսվում է մայրաքաղաքում լիարժեք և արդյունավետ լուծում տալ աղբահանության, սանիտարական մաքրման և ձևամաքրման ոլորտի հիմնախնդիրներին և ապահովել եվրոպական չափանիշներին համապատասխան որակյալ ծառայություններ:
2. Բաց և թափանցիկ մրցույթի միջոցով ներգրավել նոր և/կամ երկրորդ օպերատոր:
3. Նախատեսվում է իրականացնել կոշտ թափոնների կառավարման բարեփոխումների ծրագրի 2-րդ և 3-րդ փուլերը, Երևան քաղաքում կառուցել միջազգային չափանիշներին համապատասխան նոր աղբավայր, բազմակողմ քննարկել աղբի տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցման ու արդյունավետ շահագործման անհրաժեշտությունը, մեկուսացնել, բարեկարգել Նուբարաշենի և Աջափնյակի գործող աղբավայրերը, կառուցել արտանետվող գազերի հավաքման և այրման կայան, տեղադրել գեներատոր էլեկտրաէներգիայի ստացման համար: Հին աղբավայրերի երկար տարիներ չշահագործվող տարածքներում կիրականացվեն մեկուսացման աշխատանքներ՝ ապահովելով բարեկարգ (կանաչ) տարածքների առկայությունը, իսկ մնացած հատվածներում կիրականացվի ժամանակավոր մեկուսացում, որտեղ նստեցումները դադարելուց հետո միայն կարող է առաջանալ վերջնական մեկուսացման անհրաժեշտություն: Նոր կառուցվող աղբավայրը կարող է ծառայել ինչպես Երևան քաղաքին, այնպես էլ հարակից 4 մարզերին՝ Արարատ, Արմավիր, Կոտայք և Արագածոտն: Ծրագիրը կիրականացվի Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման

Եվրոպական բանկի, Եվրամիության հարևանության գործիքի և Արևելյան Եվրոպային Էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի աջակցությամբ: Կոշտ թափոնների կառավարման բարեփոխումների ծրագրի 3-րդ փուլը՝ աղբի տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցումը, նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում՝ դրա իրագործելության արդյունավետության բազմակողմ ուսումնասիրությունից հետո:

4. Նախաձեռնել բազմաբնակարան շենքերի աղբամուղերի արդիականացման կամ դրանց փակման գործընթաց՝ ելնելով սանիտարահիգիենիկ, առողջապահական նկատառումներից

Արտաքին լուսավորություն

Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի զարգացման ծրագրերի գլխավոր նպատակն է մայրաքաղաքի բնակչության անվտանգ տեղաշարժման ապահովումը, արձանագրվող ճանապարհատրանսպորտային պատահարների կրճատումը, Էներգախնայող համակարգերի և լուսատուների կիրառման հաշվին լուսավորվող ժամանակահատվածի ավելացումը, ցանցի արտաքին տեսքի արդիականացումը, շահագործման դյուրինացումը:

Շահագործվող արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 1643կմ է:

Հիմնախնդիրներ

1. Բյուջեի խնայողությունների ապահովման անհրաժեշտություն
2. Երևան քաղաքում արտաքին լուսավորության ցանցի արդիականացման, կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն
3. Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների և խաղահրապարակների լուսավորման անհրաժեշտություն
4. Լուսատեխնիկական լաբորատորիայի բնականոն աշխատանքի ապահովման անհրաժեշտություն

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է Էներգախնայող և խելացի համակարգերի ներդրմամբ ապահովել բյուջեի ծախսերի խնայողություն:
2. Նախատեսվում է արևային Էներգիայի և Էներգախնայող համակարգերի օգտագործմամբ ընդլայնել փողոցների արտաքին լուսավորության համակարգը:
3. Նախատեսվում է արդիականացնել քաղաքային լուսավորության համակարգը, բարձրացնել կառավարման արդյունավետությունը՝ ապահովելով բոլոր փողոցների, բակային տարածքների և հանրային օգտագործման բոլոր տարածքների արտաքին լուսավորությունը:
4. Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի ֆինանսավորմամբ կիրականացվի Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության համակարգերի արդիականացում:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել լուսատուների փոխարինում էներգախնայող LED լուսատուներով, փոխարինել վթարային հենասյուները և բոլոր օդային մալուխներն անցկացնել ստորգետնյա կապուղիներով՝ ապահովելով անվտանգությունը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է՝

- վերակառուցել վերը նշված փողոցների հենասյուները՝ հաշվի առնելով լուսադիտողային լուսատուների լուսատեխնիկական տվյալները,
- անհրաժեշտության դեպքում վերանայել հենասյուների բարձրությունը և տեղադրման հեռավորությունը՝ երթևեկելի և հետիոտնի համար նախատեսված վայրերում ապահովելով առանց ստվերի լուսավորություն,
- փոխարինել նատրիումային լուսատուները ժամանակակից և որակյալ լուսադիտողային լուսատուներով,
- օդային մալուխներն անցկացնել ստորգետնյա եղանակով,
- ունենալ շահագործման հեռակառավարման համակարգ,
- հզորությունների կառավարմամբ ապահովել լուսավորության տևողության ավելացում:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երևան քաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկումն իրականացվում է ավտոբուսներով, միկրոավտոբուսներով, տրոլեյբուսներով և մետրոպոլիտենով:

Երևանի քաղաքային հասարակական տրանսպորտի համակարգն իր մեջ ներառում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲ ընկերությունները և թվով 53 մասնավոր կազմակերպություններ, որոնք պայմանագրային հիմունքներով կանոնավոր ուղևորափոխադրումներ են իրականացնում Երևանի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներում:

Երթուղային ցանց

Երևան քաղաքում գործող կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցով նախատեսված է 68 միկրոավտոբուսային (1421 միավոր շարժակազմ), 46 ավտոբուսային (616 միավոր շարժակազմ) և 10 տրոլեյբուսային երթուղի (108 միավոր շարժակազմ):

2017 թվականին Երևանի քաղաքապետարանը հայտարարել է Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների մեկնարկի մասին, ինչի շրջանակներում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական կազմակերպությունը լավագույն միջազգային փորձի հիման վրա մշակում է մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների փաթեթ, որն իրենից ենթադրում է հստակ հաշվարկների և չափորոշիչների հիման վրա նոր արդյունավետ երթուղային ցանցի նախագծում, հստակ պատկերացում տրանսպորտային պարկի քանակի և տեսականու, սպասարկման չափորոշիչների, ինչպես նաև ուղևորահոսքի մասին, միասնական էլեկտրոնային տոմսային համակարգերի ներդրման հնարավորության վերլուծություն, գեղչային համակարգի կիրառման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցություն, շահագործում և այլն:

Ավտոբուսային և միկրոավտոբուսային փոխադրումներ

Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրված է տարբեր մակնիշների և ուղևորատարողության շուրջ 620 ավտոբուսով: Ավտոբուսային երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և 18 մասնավոր կազմակերպությունների կողմից:

Երևան քաղաքում փաստացի գործում են 41 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է 430-440 միավոր շարժակազմ:

Մայրաքաղաքում փաստացի գործում է 72 միկրոավտոբուսային երթուղի: Միկրոավտոբուսային երթուղիներում օրական շահագործվում է 1000-1100 միավոր շարժակազմ: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են 39 մասնավոր կազմակերպություններ: Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում երթուղային նոր ցանցով նախատեսվում է առավելագույնի հասցնել ավտոբուսային երթուղիները, հնարավորինս բացառելով միկրոավտոբուսային երթուղիների առկայությունը:

Վերգետնյա էկեկտրատրանսպորտ

«Երևանի էկեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է 79 տրոլեյբուս: Ընկերության կողմից ներկայում սպասարկվում են 5 տրոլեյբուսային երթուղիներ, օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 45-48 միավոր շարժակազմ:

Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում, հաշվի առնելով մայրաքաղաքի բնապահպանական ծրագրերի գերակայությունը, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցության ու շահագործման համատեքստում նախատեսվում է համալրել տրոլեյբուսային հավաքակազմը և ավելացնել երթուղիները, միաժամանակ արդիականացնելով վերգետնյա էկեկտրատրանսպորտի արդյունավետ և անվտանգ գործունեությունն ապահովող ենթակառուցվածքները:

Մետրոպոլիտեն

Երևանի մետրոպոլիտենում առկա է 45 վագոն: Աշխատանքային օրերին գիծ է դուրս բերվում 26 վագոն (13 շարժակազմ), իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ 24 վագոն (12 շարժակազմ):

Մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ուղևորափոխադրումների ծավալում կազմում է մոտ 7.7%: Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցության և նոր երթուղային ցանցի ներդրման համատեքստում աշխատանքներ են իրականացվելու մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը և շահագործման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ՝ ապահովելով մետրոպոլիտենի արդիականացման, անվտանգության պահպանման և զարգացման ծրագրերի շարունակականությունը:

Հասարակական տրանսպորտի կանգառներ

Երևան քաղաքում սահմանված է հասարակական տրանսպորտի թվով 834 կանգառ, որոնցից 348-ում տեղադրված են կանգառապահներ և կանգառանշաններ, 486-ում՝ միայն կանգառանշաններ:

Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում վերենայվելու է կանգառների շահագործման գործող սկզբունքը, դրանց արդիականացմանը զուգընթաց հստակեցվելու է տեղաբաշխումն ըստ նոր երթուղային ցանցի:

Ավտոկայանատեղեր

Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունն իրականացվում է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշմամբ Երևան համայնքը ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունն իրականացնող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ բաժնետոմսերն ընդունեց որպես նվիրատվություն և ապա 100% բաժնեմատով համայնքային սեփականություն հանդիսացող այդ բաժնետոմսերը հանձնեց վերջինիս հավատարմագրային կառավարմանը:

Մայրաքաղաքի բնապահպանական խնդիրների լուծման համատեքստում Երևան քաղաքում էկեկտրամոբիլների տարածմանը խթանելու նպատակով Երևանի ավագանու որոշմամբ բացառապես էկեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների համար

սահմանվել է ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

Հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային սպասարկում

Հասարակական տրանսպորտի մատչելիությունն ապահովելու նպատակով բնակչության սակավաշարժ խմբերի համար հարմարեցվել է 25 ավտոբուս և 2 տրոլեյբուս, իսկ 75 ավտոբուսներում տեղադրվել են կանգառների ազդարարման ավտոմատ ձայնային համակարգեր: Նույն համատեքստում՝ թվով 101 վճարովի կայանատեղերում, համապատասխան կահավորանքի միջոցով, առանձնացվել են տեղեր հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային միջոցների համար:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. Միասնական տոմսային համակարգի բացակայություն:
2. Սպասարկման ձևի և որակի չափորոշիչների ոչ հստակ սահմանում:
3. Ոչ արդյունավետ գործող երթուղային ցանց:
4. Հասարակական տրանսպորտի ձևերի արդյունավետ փոխհամագործակցության ու շահագործման բացակայություն:
5. Վերգետնյա տրանսպորտի շարժակազմի տեսականու և դրանց տեխնիկական չափանիշների ոչ բարվոք վիճակ:
6. Սպասարկման համար գանձվող վճարի շրջանառության թափանցիկության բացակայություն:
7. Շահագործման մեխանիզմի կառավարման արդյունավետ մոդելի բացակայություն:
8. Կանգառների արդյունավետ տեղաբաշխման անհրաժեշտություն:
9. Միկրոավտոբուսների տեսակարար մեծ կշիռ:
10. Ոչ ժամանակակից տրանսպորտային միջոցների սպասարկման արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրներ:

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է արդիականացնել տրանսպորտային ցանցը՝ ներդրումների ներգրավմամբ, ամբողջությամբ փոխել շարժակազմը, ինչպես նաև վերանայել երթուղիներն ու կանգառները, ապահովել քաղաքային տրանսպորտի հասանելիությունը առնվազն մինչև 24:00: Նախատեսվում է ներդնել միասնական տոմսային համակարգ: Միաժամանակ նախատեսվում է նաև ուղևորների հատուկ խմբերի համար ներդնել զեղչային համակարգ: Նախատեսվում է մշակել և կիրառել Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի նոր և արդյունավետ երթուղային ցանց, ապահովել հասարակական տրանսպորտի՝ միջազգային չափանիշներով սպասարկման ծառայությունների մատուցում՝ կազմավորելով նոր օպերատոր: Միկրոավտոբուսների հնարավորինս բացառման գերակա սկզբունքով նախատեսվում է ձեռք բերել նոր երթուղային ցանցին համապատասխան, սպասարկման ժամանակակից պահանջները բավարարող մեծ և միջին տեղատարողության նոր ավտոբուսներ, ներդնել էլեկտրոնային և միասնական տոմսային նորագույն համակարգ՝ սոցիալական խմբերի համար հստակ զեղչային համակարգի կիրառմամբ:

2. Տրանսպորտային ցանցի ընդլայման նպատակով նախատեսվում է կառուցել մետրոյի առնվազն մեկ նոր կայարան: Կիրականացվի Երևանում մետրոպոլիտենի աշխատանքի որակի, հուսալիության և անխափան աշխատանքի ապահովում, էներգահամակարգի հուսալիության, ազդանշանային համակարգի, շարժասանդուղքների աշխատանքի հուսալիության բարձրացում, ուղևորների անվտանգության ապահովում, կայարանների և համալիրների վերանորոգում և պատշաճ տեսքի ապահովում, հարմարավետության և սպասարկման որակի բարձրացում: Նախատեսվում է արդիականացնել մետրոպոլիտենի 12 վագոն՝ 8 գլխամասային, 4 միջանկյալ: Նոր երթուղային ցանցի ներդրման համատեքստում կապահովվի մետրոպոլիտենի շահագործման արդյունավետության բարձրացումը:
3. Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել տրանսպորտի մատչելիություն և տարածական կողմնորոշման հնարավորություն, տեղաշարժի հարմարավետություն, հասարակական տրանսպորտում շարունակել կանգառների ձայնային ազդարարման համակարգերի, ինչպես նաև տեղաշարժը դյուրինացնող համապատասխան սարքավորումների տեղադրման գործընթացը, խաչմերուկներում կահավորել ձայնաազդանշանային լուսացույցներ:
4. Նախատեսվում է իրականացնել հասարակական տրանսպորտի կանգառների տեղաբաշխում և կահավորում, ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով: Նախատեսվում է արդիականացնել բոլոր կանգառասրահները համապատասխան կահավորանքով և նոր տեղաբաշխմամբ, տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ ապահովել երթուղիների, չվացուցակների, տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի և ժամանման իրական ժամանակի վերաբերյալ տեղեկությունների առցանց հասանելիությունը: Կիրականացվի ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ծանրաբեռնված փողոցներում դրանց կրճատման հնարավոր տարբերակների կիրառմամբ:
5. Նախատեսվում է նաև վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման որակի և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում նոր տրոլեյբուսների ձեռքբերում:
6. Նախատեսվում է այլընտրանքային, բնապահպանական տեսանկյունից անվտանգ տրանսպորտային միջոցների (էլեկտրամոբիլներ, էլեկտրաավտոբուսներ) կիրառում, էլեկտրատրանսպորտի խթանում:
7. 2019-2023 թվականներին նախատեսվում է ապահովել ավտոկայանատեղիների կանոնակարգման գործընթացի շարունակականությունը, մասնավորապես ծանրաբեռնված փողոցներում դրանց կրճատման հնարավոր տարբերակների կիրառմամբ:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են թվով 155 հանրակրթական և 160 նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Աշակերտների ընդհանուր թիվը՝ 2018թ.՝ 98802, մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը՝ 28429: Ներառական կրթություն է իրականացվում մայրաքաղաքի 54 դպրոցներում, որտեղ աշխատում են շուրջ 384 հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան և լոգոպետ:

Գործող դպրոցներից 140-ը հիմնական են, 11-ը՝ միջնակարգ դպրոց, 2-ը՝ կրթահամալիր («Հակոբ Կոջոյան» և Խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ.8 հատուկ) և 2 հատուկ դպրոց:

Հիմնախնդիրներ

- 1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային և բակային պայմանների բարելավման անհրաժեշտություն:*
- 2. Դպրոցներում մրցունակ կրթության ապահովմանն ուղղված միջոցառումներ իրականացման անհրաժեշտություն:*
- 3. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շինությունների և տարածքների քարտեզագրման անհրաժեշտություն:*
- 4. Վարձակալությամբ տրված նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի պայմանագրերի վերանայման անհրաժեշտություն:*
- 5. Էլեկտրոնային հերթագրման գործընթացի թափանցիկության և առցանց տիրույթում դրա հասանելիության ապահովման անհրաժեշտություն*
- 6. Դպրոցական կրթության համար մեկնարկային հավասար պայմանների ստեղծման անհրաժեշտություն*
- 7. Կրթական հաստատությունների մատչելիության ապահովման անհրաժեշտություն*
- 8. Ներառական կրթություն իրականացնող դպրոցների և մանկապարտեզների, հատուկ դպրոցների շենքային պայմանների համապատասխանեցում սովորողների ֆիզիկական կարիքներին:*
- 9. Դպրոցական ճաշարաններում սննդի վաճառքի կազմակերպման գործընթացում սննդի անվտանգության նորմերի խստիվ պահպանում:*

2019-2023 թվականներին նախատեսվող աշխատանքներ

1. Որակյալ կրթության և դաստիարակության ապահովման նպատակով նախատեսվում է ժամանակակից պահանջներին համապատասխան բարելավել նախադպրոցական հաստատությունների շենքային և բակային պայմանները՝ երեխաների համար ստեղծել առավել ապահով, անվտանգ և հարմարավետ միջավայր, խաղահրապարակներ և կանաչապատ տարածքներ:
2. Նախատեսվում է քարտեզագրել նախադպրոցական ուսումնական հաստատությունների շինություններն ու տարածքները, վերանայել վարձակալությամբ տրված նախադպրոցական շենքերի պայմանագրերը, և հնարավորության դեպքում, դրանք կրկին օգտագործել որպես նախադպրոցական ուսումնական հաստատություն:

3. Մանկապարտեզներում երեխաների ընդունելության կարգավորման նպատակով նախատեսվում է էլեկտրոնային հերթագրման գործընթացի թափանցիկության և առցանց տիրույթում դրա հասանելիության ապահովում:
4. Նախատեսվում է նախադպրոցական հաստատություններում յուրաքանչյուր երեխայի զարգացման, ունակությունների դրսևորման համար, հավասար պայմաններ ապահովում:
5. Նախատեսվում է դպրոցական բուժետներում աշակերտների համար սննդի վաճառքը կազմակերպել՝ հաշվի առնելով առողջ ապրելակերպի սկզբունքները՝ խստիվ պահպանելով սննդի անվտանգության նորմերը:
6. Նախատեսվում են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ կրթության որակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Սովորողների հետաքրքրությունը, կարողությունները և հմտությունները զարգացնելու համար կարևոր է դասապրոցեսում տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային կիրառման ապահովումը:
7. Մանկավարժների մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով նախատեսվում է համագործակցության, փորձի փոխանակման ծրագրերի իրականացում: Կազմակերպվեն հանդիպումներ կրթության ոլորտի զարգացման խնդիրներով զբաղվող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Փորձի փոխանակման նպատակով շարունակվելու են ուսուցիչների և մանկապարտեզների դաստիարակների փոխայցելություններ Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ, Հայաստանի Հանրապետության մարզեր՝ իրականացնելով նաև աշակերտների և ուսուցիչների ճանաչողական փոխայցելություններ: Նախատեսվում է նաև Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի ստեղծման նպատակով: Կիրականացվի համագործակցություն ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզների, դպրոցների և ծնողների միջև՝ երեխայի կարիքով պայմանավորված աշխատանքների շարունակականության ապահովման նպատակով:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող շուրջ 420 կազմակերպություն: Օդի և հողի աղտոտման հիմնական պատճառներից են շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները, հաշվառված է շուրջ 200 000 ավտոմեքենա: Շրջակա միջավայրի վրա ոչ պակաս ազդեցություն ունի մայրաքաղաքի ջրային ավազանի էկոլոգիական վիճակը:

Նշված գործոնների ազդեցությամբ է պայմանավորված ածխաթթու գազի ավելացումը մոտ 10 անգամ:

Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում հողերը բնութագրվում են աղտոտման գումարային գործակցի (ԱԳԳ) բարձր մակարդակով:

Նման անցանկալի երևույթները մեղմելու և կանխելու առումով մեծ դերակատարություն ունեն կանաչ տնկարկները:

Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 862.0 հա:

Համեմատության համար պետք է նշել, որ 1990թ. մայրաքաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքը կազմել է 908.3 հա, իսկ 2003 թվականին՝ 540.0 հա:

2017թ. գույքագրման տվյալների համաձայն Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը կազմում է 862.0հա, որից զբոսայգիներ և պուրակներ՝ 213հա, սիզամարգեր՝ 165հա, ծաղկանոցներ՝ 7,3հա, Հրազդանի կիրճ՝ 248,1հա, անտառպուրակներ՝ 228,6հա:

Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական իրավիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, որը ենթադրում է մի շարք փուլերի հաջորդական իրականացում՝ ուղղված տարբեր տեսակի կայուն քաղաքային տնկարկների ստեղծմանը և ընդունակ ոչ միայն պահպանելու դեկորատիվությունը և հարատևությունը, այլև հնարավորինս առջացնելու կենսամիջավայրը:

Երևան քաղաքում մեկ բնակչին ընկնող կանաչ տարածքը կազմում է 7,8 քմ, իսկ ոռոգելի տարածքի մակերեսը՝ 517 քմ:

Հիմնախնդիրներ

1. Երևանում հանրային կանաչապատ տարածքների ընդլայնման անհրաժեշտություն
2. Նոր ոռոգման ցանցերի ստեղծման անհրաժեշտություն
3. Շների զբոսանքի համար նախատեսված տարածքների ստեղծման անհրաժեշտություն
4. Շրջակա միջավայրի տարրերի (օդ, ջուր, հող) աղտոտվածության նվազեցմանն ուղղված մեխանիզմների և միջոցառումների մշակման և իրականացման անհրաժեշտություն
5. Կանաչ տարածքների հետևողական վերականգնման և ընդլայնման անհրաժեշտություն
6. Նոր հանգստի գոտիների հիմնման, գոյություն ունեցող հանգստի գոտիների բարեկարգման անհրաժեշտություն
7. Մայրաքաղաքի բնապահպանական վիճակը բարելավելու նպատակով պաշտպանիչ կանաչ բուֆերային գոտիների ստեղծման անհրաժեշտություն

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է տնկել 500,000 ծառ մայրաքաղաքի տարբեր հատվածներում: Նախատեսվում է ստեղծել ոռոգման համակարգ և կանաչապատել «Նորքի անտառները» և Մարալանջ փողոցին հարակից տարածքները: Ծանր մետաղներով աղտոտված տարածքներում կտնկվեն դրանք չեզոքացնելու հատկություն ունեցող բուսատեսակներ:
2. Նախատեսվում է բարեկարգել և ընդլայնել հանրային կանաչ տարածքները: Մայրաքաղաքի բնապահպանական վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է 2019-2023թթ. ընթացքում ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածի ավելացում՝ նոր սիզամարգերի ստեղծման, ծառատունկի, ծաղկապատման շնորհիվ:
3. Նախատեսվում է վարչական բոլոր շրջաններում հատկացնել վայրեր՝ շների զբոսանքի համար:
4. Նախատեսվում է մաքրել հանրային նշանակության տարածքները, այդ թվում՝ Հրազդանի կիրճը, Երևանյան լիճը և դրա շրջակայքը:
5. Նախատեսվում է հանգստի նոր գոտիների ստեղծում և առկա հանգստի գոտիների վերականգնում: Կհիմնվեն ժամանակակից պահանջներին համապատասխանող կանաչապատման էլեմենտների կիրառմամբ նոր զբոսայգիներ և պուրակներ:
6. Կիրականացվեն Օիժենակաբերդի անտառպուրակի վերականգնման աշխատանքներ: Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է կատարել ոռոգման ցանցի մասնակի նորոգում, հզոր պոմպակայանի ստեղծում, ծառերի առողջացման նպատակով մասսայական էտ, բուժման և ծառատունկի աշխատանքներ:
7. Նախատեսվում է Երևան քաղաքի բուֆերային գոտու ձևավորում: Բուֆերային գոտու հիմնական նպատակն է մեղմացնել մայրաքաղաքը քամիների ազդեցությունից: Տնկվող ծառատեսականին օժտված կլինի փոշեկլանիչ և վնասակար արտանետումները կլանող հատկություններով: Այդ նպատակով բուֆերային գոտի հանդիսացող տարածքներում նախատեսվում է իրականացնել մասսայական ծառատնկման, նոր ոռոգման ցանցերի և պոմպակայանների ստեղծման, ծառերի սանիտարական էտման և այլ աշխատանքներ:
8. Նախատեսվում է կանաչապատ տարածքների խնամքի իրականացում նորագույն մոտեցումներով: Կկիրառվեն կանաչ տարածքների խնամքի և սպասարկման նորագույն մոտեցումներ, մասնավորապես՝ կաթիլային ոռոգում: Նախատեսվում է նաև ստեղծել ծաղկանոցներ, որոնք համալրված կլինեն բազմամյա ծաղկասածիլներով:
9. Նախատեսվում է կանաչապատման ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում, կառավարման մոդելի փոփոխություն՝ Երևանում կանաչապատ տարածքների որակյալ խնամքի և սպասարկման, մատուցվող կանաչապատման ծառայությունների որակի բարձրացման նպատակով:
10. Նախատեսվում է կանաչապատման սակավ հնարավորությամբ տարածքներում կիրառել այլընտրանքային կանաչապատում՝ Երևան քաղաքի ինտենսիվ կառուցապատման պայմաններում կանաչապատման ոլորտում հույժ կարևոր միջոցառում հանդիսացող ուղղաձիգ կանաչապատման կիրառմամբ: Մագլցող, փաթաթվող բույսերի տնկման միջոցով կիրառել ուղղաձիգ կանաչապատում, ստեղծել միայնակ կամ խմբակային եղանակով տնկարկներով կանաչ հատվածներ, ռոկարիաներ (քարե պարտեզ):
11. Նախատեսվում է շների զբոսանքի համար հատուկ տարածքներ հատկացնել բոլոր վարչական շրջաններում: Թափառող շների գլխաքանակի կառավարման համար կկիրառվի բացառապես ստերջացման մեթոդը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտի գերակայությունը առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, մատչելիության ապահովումը, սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումը, վերազինումը:

Առողջապահության ոլորտի կարևորագույն հիմնախնդիրներն են սանիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, բնակչության առաջնային և մասնագիտացված բժշկական օգնության ու ծառայությունների ապահովման կազմակերպումը, մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը, բնակչության առողջության բարելավման միջոցառումների կազմակերպումը և առողջական վիճակի ուսումնասիրությունը, հաշմանդամության ու մահացության նվազեցման ծրագրերի մշակումը և իրագործումը:

Երևանի ենթակայությամբ գործում են 31 առողջապահական կազմակերպություն, որոնցից 4-ը բժշկական կենտրոն են (այդ թվում՝ 1 մասնագիտացված հիվանդանոց, 3 ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց), 2-ը՝ դիսպանսեր, 1-ը՝ շտաբուժօգնության ծառայություն, 1-ը՝ գիտահետազոտական ինստիտուտ-մասնագիտացված հիվանդանոց, 1-ը՝ ծննդատուն և 22-ը՝ պոլիկլինիկա: Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններից 24-ը մատուցում է ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն:

Հիմնախնդիրներ

- 1. Առողջապահական համակարգի արդիականացման անհրաժեշտություն,*
- 2. Բժշկական հաստատությունների շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն,*
- 3. Մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարձրացում, սարքավորումների և գույքի արդիականացում, աշխատավարձերի բարձրացում,*
- 4. Երևան քաղաքի բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների անցկացման մատչելիության ապահովման անհրաժեշտություն /համակարգչային տոմոգրաֆիկ հետազոտություն և մագնիսառեզոնանսային հետազոտություն/,*
- 5. Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող բժիշկների, բուժքույրերի և դեղագետների վերապատրաստում,*
- 6. Բժշկական սարքավորումների արդիականացման անհրաժեշտություն,*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում: Վաղ շրջանում հիվանդությունների

հայտնաբերման և դրանց հետագա բարդությունների կանխարգելման և արդյունավետ բուժման նպատակով նախատեսվում է ձեռք բերել և Երևանի ենթակայության բուժհաստատություններին տրամադրել լաբորատոր-գործիքային հետազոտություններ իրականացնող սարքավորումներ, այդ թվում՝ ռենտգեն ախտորոշիչ ապարատ, իսկ արդյունավետ բուժման կազմակերպման նպատակով ֆիզիոթերապևտիկ և այլ բժշկական սարքավորումներ, արդյունքում կունենանք որակյալ, ավելի մատչելի և հասանելի բուժօժանդություններ, իսկ բուժհաստատությունները կդառնան ավելի մրցունակ:

2. Նախատեսվում է բնակչությանը տրամադրել կոմպյուտերային և մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայության՝ անվճար հիմունքերով: Կոմպյուտերային (ԿՏ) և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի (ՄՌՏ) հետազոտությունները շատ կարևոր են առանձին հիվանդությունների ախտորոշման և արդյունավետ բուժման կազմակերպման համար: Նշված ծառայությունների ձեռքբերումը հնարավորություն կտա որոշ չափով մեղմել սոցիալական լարվածությունը, ինչպես նաև ապահովել առանձին խմբերում ընդգրկված անձանց համար նշված ծառայության սպառումը:

3. Առողջ ապրելակերպի քարոզչության իրականում և Երևան քաղաքի բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծառայությունների բարելավում՝ ներառյալ առաջնային կանխարգելումը, վաղ հայտնաբերումը, բուժումը՝ շեշտը դնելով սրբինինգային կամ այլ բժշկական ծրագրերին, ինչն էլ կնպաստի առաջնային օղակում տրամադրվող բուժօգնության որակի բարձրացմանը:

4. Նախատեսվում է Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող բժիշկների, բուժքույրերի և դեղագետների վերապատրաստման կազմակերպում՝ համագործակցելով ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ:

5. Նախատեսվում է բարելավել պոլիկլինիկաների շենքային պայմանները և ապահովել պոլիկլինիկաների հիմնանորոգման ծրագրի իրականացում: Երևանի ենթակայության բուժհաստատություններում վերանորոգման աշխատանքների արդյունքում կապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման մատչելիությունը: Կկատարվեն տանիքների հիմնանորոգման և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ ըստ անհրաժեշտության:

6. Նախատեսվում է Պետություն-մասնավոր հատված գործընկերության ամրացում՝ մասնավոր հատվածի ռեսուրսների ներգրավմամբ Երևանի քաղաքապետարանի ենթակայության հիվանդանոցային առողջապահական կազմակերպությունների զարգացման, նյութատեխնիկական բազայի վերազինման, հագեցման, հիմնանորոգման և ընթացիկ վերանորոգման նպատակով՝ հավատարմագրային կառավարում/:

7. Բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարձրացման նպատակով նախատեսվում է այցելուների նախնական գրանցման, հերթերի կառավարման և սպասարկման որակի բարելավման մեխանիզմների կիրառում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Հասարակության սոցիալական պաշտպանությունը պետության կարևոր ֆունկցիաներից մեկն է: Սոցիալական ապահովության բնագավառում Երևանի քաղաքապետարանի ռազմավարությունն ուղղված է քաղաքացիների սոցիալական երաշխիքների պաշտպանությանը՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերի իրականացմամբ, սոցիալական ռիսկերի արդյունավետ կառավարմանը, դրանց հնարավոր նվազեցմանը և հանդիսանում է նպատակային սոցիալական քաղաքականության ազդեցիկ գործիք մայրաքաղաքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորման համար: Ամուր և արդյունավետ սոցիալական պաշտպանության սիստեմի համար ամուր և զարգացած տնտեսություն է պետք: Մեզ մոտ գործում է սոցիալական պաշտպանության համակարգ, որը տնտեսության զարգացմանն համաքայլ կատարելագործման և ուժեղացման կարիք ունի: Հաշվի առնելով երկրում աղքատության զգալի մակարդակը և այն, որ հասարակության կարիքավոր խավը որպես կանոն ավելի շատ է ենթակա ռիսկերի, քանի որ դրանց դիմակայելու համար չունի անհրաժեշտ չափով ռեսուրսներ, ուստի Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրում նախատեսված՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերը նպատակաուղղված են լինելու ռիսկերի կանխարգելմանը՝ ընտանիքի աղքատության, հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, ծնողազրկության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու և այլ պատճառների հետևանքներով կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց աջակցությանը՝ դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու նպատակով: Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանազուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից: Հենց այստեղ է ծագում պետության /տվյալ դեպքում համայնքի/ կարգավորիչ դերը:

Սոցիալական պաշտպանության համակարգը բազմաբնույթ է և ներկայումս գտնվում է բարեփոխումների շրջանում: Հաշվի առնելով սոցիալական պետության առջև

դրված խնդիրները, սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքում արձանագրվող գործընթացները անհրաժեշտ է կատարելագործել սոցիալական համագործակցության համակարգերը, որը կնպաստի համակարգի արդյունավետությանը: ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ 2015 թվականից ներդրվել է «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության» կանոնակարգը, որի նպատակը բազմամասնագիտական աշխատանքային խմբի կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց ընտանիքների հայտնաբերումն է, անհատական սոցիալական ծրագրերի կազմումն ու դրա իրականացումը, այդ թվում և խնդրահարույց դեպքերում սոցիալական դեպքի վարման կարգի լայնորեն կիրառումը, որը կարող է անհատական սոցիալական ծրագրով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի /ընտանիքների/ սոցիալական կարիքների գնահատման հիման վրա հասանելի ռեսուրսների որոնման միջոցով իրականացնել սոցիալական տարաբնույթ ծառայությունների և սոցիալական աջակցությունների տրամադրման ծրագրեր, քանի որ միայն պետական նպաստները և համայնքային ֆինանսական միջոցները բավարար չեն վերը նշված ընտանիքների բազմաբնույթ սոցիալական խնդիրների լուծման համար: Կարևոր խնդիր է նաև սոցիալական աջակցության համակարգի մի շարք խնդիրների /վարչական շրջանների սոցիալական բաժինների աշխատողների՝ ժամանակակից սոցիալական աշխատանքի, սոցիալական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների կիրառման վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպումը, նրանց և ՄՍՏԲ-ների մասնագետների՝ տունայցի դեպքերում գործուղման ծախսերի նախատեսումը, յուրաքանչյուր վարչական շրջանում առնվազն մեկական «Սոցիալական աշխատողի» հաստիքների ստեղծումը՝ սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումը, քանի որ հասարակության գերակշիռ մեծամասնությունը սոցիալական աշխատանքն ընկալում է որպես դրամական վճարների նշանակում/ լուծումը: Սոցիալական աշխատողների կրթական ցենզի բարձրացումը և դերային բաշխվածությունը նպաստելու է պետության ազգային սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացմանը, քաղաքացիների սոցիալական իրավունքների իրացմանը:

Պետք է հասնել նրան, որ սոցիալական աշխատողը կարողանա օգտագործել շահառուի իրավունքների գերակայությունը, ռեսուրսների սակավության պայմաններում հատկապես, երբ սոցիալական աշխատողը կրում է մասնակի կամ լրիվ պատասխանատվություն ռեսուրսների բաշխման նկատմամբ:

Սոցիալական աշխատանքի դերը, բովանդակությունը, ինչպես նաև լիազորությունների շրջանակը ավելի հստակ սահմանելու և «չափելի» դարձնելու համար գնալով ավելի հրատապ և արդիական է դառնում սոցիալական ծառայությունների ինտեգրումը Երևանի 12 վարչական շրջաններում: Ներկայումս Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջաններում գործում են սոցիալական ծառայություններ մատուցող համալիր կենտրոններ, որոնք հարմարավետ են և մատչելի՝ բնակչության համար ծառայությունների մատուցման տեսանկյունից: Մակայն դեռևս խնդիր է այդ ծառայությունների ոչ միայն ֆիզիկական, նաև տեխնիկական և

տեղեկատվական հոսքերի փոխանակման տեսանկյունից, որպեսզի համակարգի ներդրման շրջանակներում վերաիմաստավորվի սոցիալական աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև սոցիալական աշխատողի տեղն ու դերը հասարակական հարաբերություններում:

2019 թվականին նախատեսվում է Շենգավիթի համալիր կենտրոնի բացումը, մյուս վարչական շրջաններում նույնպես խնդիրը օրակարգային է:

Ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Երևանի քաղաքապետարանը, վարչական շրջանների համապատասխան բաժինները համագործակցում են սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող ակտիվ հասարակական կազմակերպությունների հետ՝ համատեղ սոցիալական ծրագրերի իրականացման նկատառումով: Մասնավորապես՝ Գերմանական Կարմիր Խաչի հայաստանյան մասնաճյուղի հետ, Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորմամբ գործում են Քանաքեռ-Զեյթունի «Հուսո տունը» /բարեգործական ճաշարան և ցերեկային կենտրոն/, Էրեբունի, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում «արտագնա խոհանոց»: «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ 6 վարչական շրջաններում Երևան համայնքի կողմից անվարձահատույց տրամադրված տարածքներում կազմակերպվել են բարեգործական ճաշարաններ, բացառությամբ Աջափնյակ վարչական շրջանի, որտեղ տեղի վարձավճարը տրամադրվում է Երևան համայնքի կողմից: «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» ԲՀ հետ Արաբկիրի բարեգործական ճաշարանը, որին տրամադրվում է համաֆինանսավորում կոմունալ ծախսերի փոխհատուցման համար: Մալաթիա-Սեբաստիայի, Արաբկիրի և Նոր Նորքի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գտնվող բարեգործական ճաշարաններին համաֆինանսավորում չի տրամադրվում, սակայն կա փոխգործակցություն:

Նմանօրինակ համագործակցության արդյունքում կարիքավոր շուրջ 2300 շահառուներ տաք ճաշ են ստանում:

2018 թվականի տվյալներով մայրաքաղաքում հաշվառված են ավելի քան 57000 հաշմանդամություն ունեող անձիք, որոնցից ավելի քան 2300 երեխաներ են, ընդհանուր թվից ավելի քան 27000-ը իգական սեռի ներկայացուցիչներ են: Հաշմանդամության ոլորտում իրականացվող քաղաքականությունը, հիմնական մոտեցումները և նպատակային ծրագրերը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, հավասար պայմանների ու հնարավորությունների ապահովմանը, նրանց սոցիալական ներառմանը: Մայրաքաղաքում հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծման նպատակով Երևանի քաղաքապետարանում գործում է «Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի Երևանի քաղաքային հանձնաժողով»: Հաշմանդամություն ունեցող անձանց անարգել տեղաշարժն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը, հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ներկայացված առաջնահերթությամբ, մայրաքաղաքի հանրային նշանակության տարբեր վայրերում կառուցում է թեքահարթակներ, աշխատանքներ են իրականացվում նաև հանրային

տրանսպորտը վերջիններիս համար մատչելի դարձնելու ուղղությամբ, կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվում են տարաբնույթ սոցիալական աջակցության ծրագրեր /2013-2018թթ. կառուցվել են շուրջ 5000 թեքահարթակներ, որից շուրջ 300-ը մասնավորի կողմից, քաղաքապետարանի առաջարկությամբ ՃՈ կողմից 61 խաչմերուկներում տեղադրվել են փողոցային ձայնային ազդանշաններով լուսացույցներ, 128 հատվածներում տեղադրվել են գոգավոր սալիկներ և այլն/:

Աշխատանքներ են իրականացվում մայրաքաղաքի փողոցներից, կիսակառույցներից կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անօթևանների, մուրացկանությամբ զբաղվող անձանց հայտնաբերման և ժամանակավոր կացարանում տեղավորման ուղղությամբ՝ Հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: Նրանց տրամադրվում են սոցիալական տարաբնույթ աջակցություններ /սոցիալ-հոգեբանական, սոցիալ-բժշկական, սոցիալ-վերականգնողական-մասնագիտացված հաստատությունների միջոցով, իրավական, սոցիալ-աշխատանքային և այլն/:

Հիմնախնդիրներ

1. *Բնտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման անհրաժեշտություն*
2. *Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ձևավորման և նրանց՝ հասարակությանն աստիճանական ինտեգրման անհրաժեշտություն*
3. *Տարեցների շրջանում աղքատության հաղթահարում անհրաժեշտություն*
4. *Տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալ-վերականգնողական կենտրոնների ստեղծման անհրաժեշտություն*
5. *Բազմազավակ ընտանիքների բնակարանային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման անհրաժեշտություն*
6. *Տեղահանված սիրիահայերի հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրերի իրականացման անհրաժեշտություն*
7. *Անօթևան անձանց հիմնախնդիրների լուծման անհրաժեշտություն*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Կիրականացվեն պետական սոցիալական օժանդակության ծրագրեր: Ծրագրով նախատեսվում է պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում, աջակցություն ՄԱՏԲ-ների կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության տարբեր խմբերի հաշվառմանը, փաստագրմանը: Նախատեսվում է նաև սոցիալական ոլորտում բարեփոխումների արդյունքում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում, որը կնպաստի սոցիալական ծառայությունների մատուցման մատչելիությանը, կմեծացնի հասցեականությունը:
Կիրականացվի համագործակցություն միջգերատեսչական սոցիալական համագործակցության շրջանակներում աջակցող ցանցի միջոցով, ինչպես նաև

բազմամասնագիտական խմբի գործընթացի կազմակերպում, այդ թվում խնդրահարույց դեպքերում սոցիալական դեպքի վարման կազմակերպում:

2. Տոնական և հիշատակի օրերի /կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի, մայրության և գեղեցկության օրվա՝ ապրիլի 7-ի, ապրիլի 24-ի հիշատակի օրվա, մայիսի 8-ի, 9-ի՝ Շուշիի ազատագրության, ինչպես նաև Մեծ հայրենականում տարած հաղթանակի, ընտանիքի օրվա՝ մայիսի 15-ի, տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի, հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա՝ դեկտեմբերի 3-ի/ կապակցությամբ նախատեսվում են իրականացնել սոցիալական նշանակության տարաբնույթ ծրագրեր՝ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անձանց, ընտանիքների համար, որոնց կտրամադրվեն նաև տարաբնույթ /դրամական, պարենային, սոցիալ-մշակութային/ աջակցություններ:
3. Ժամկետային զինձառայողներ ունեցող երևանաբնակ ավելի քան 2500 ծնողների համար կկազմակերպվեն այցելություններ՝ ՀՀ և Արցախի Հանրապետության գորամասեր՝ իրենց զինվոր որդիներին տեսակցության նպատակով:
4. Նախատեսվում է աջակցություն ռիսկային իրավիճակներում հայտնված և սոցիալապես խոցելի մարդկանց (տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, տեղահանվածների՝ սիրիահայերի, անօթևանների, ազատագրված վայրերից ազատ արձակված անձանց) և այլ սոցիալական խմբեր ներկայացնող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց:
5. Հաշվի առնելով հասարակական կառույցների՝ մարդկանց աջակցելու յուրահատուկ փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա, նախատեսվում է աջակցություն ցուցաբերել և խրախուսել հասարակական կազմակերպություններին, կամավորականներին /ընդլայնելով նրանց շրջանակը/ համատեղ սոցիալական խնդիրների լուծման, ծրագրերի արդյունավետ իրագործման, բնակիչների իրազեկվածության բարձրացման նկատառումով:
6. Տարեցների համար սոցիալական ծառայությունների մատուցման ծրագրերի իրագործման շրջանակում հոգածություն կդրսևորվի տարեց քաղաքացիների, այդ թվում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների նկատմամբ: Բացի այդ՝ իրենց գործունեությունը կշարունակեն տարեցների ցերեկային խնամքի կենտրոնները, բարեգործական ճաշարանները: Պետություն - հասարակական կառույցներ - համայնք համագործակցությամբ կշարունակվի տարեցների սոցիալական սպասարկման, աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործումը՝ ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո՝ տուն-ինտերնատների միջոցով:
7. Կիրականացվեն տեղահանված փախստականների (սիրիահայերի) հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրեր: Կշարունակվի կարիքավոր սիրիահայ ընտանիքներին տարաբնույթ սոցիալական աջակցությունների տրամադրումը: Մասնավորապես՝ երեխաներին արտահերթ հիմունքներով ՆՈՒՀ-երում և դպրոցներում ընդգրկումը և հասարակական կյանքին աստիճանական ինտեգրումը և այլն:

8. Նախատեսվում է սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով հաշվառման իրականացում, անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորում:
9. Կկազմակերպվի սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգիստը: Սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքների ավելի քան 1200 երեխաներ (7-13 տարեկան) իրենց ամառային հանգիստը կանցկացնեն Ծաղկաձորի, Հանքավանի և առողջարարական ճամբարներում:

ՄՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄՊՈՐՏ

Երևան քաղաքում գործում է մարզական 4 միություն, 12 մարզական ակումբ, 16 լողավազան, ֆուտբոլի 11 մարզադաշտ, թենիսի 24 կորտ, 4 հրաձգարան, 5 ստադիոն, 37 մարզադահլիճ, 1 նետաձգարան, 1 աթլետիկական մանեժ, 1 հեծանվահրապարակ, թիավարության ու վինդսերֆինգի 3 ջրամբար, մարզամշակութային 2 կենտրոն, հավաքական թիմերի ուսումնամարզական 1 կենտրոն, 1 ձիարշավարան, 137 փոքր դաշտ և տարբեր գերատեսչական ենթակայության 60 մարզադպրոցներ:

Երևան համայնքի ենթակայությամբ գործում է 41 մարզադպրոց:

Յուրաքանչյուր տարի անցկացվում են 40 մարզաձևերի Երևան քաղաքի առաջնություններ, առողջարարական, հանրային, Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար 8 մարզաձևերից կազմված բակային փառատոն և ըմբշամարտի միջազգային մրցաշար:

Հիմնախնդիրներ

1. Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի զարգացման, մասսայականացման, բնակության և հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմանների ստեղծման, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման անհրաժեշտություն
2. Ազգաբնակչության լայն զանգվածների համար մարզական ակումբներից, մարզաբազաններից օգտվելու մատչելիության ապահովում՝ մասնավորապես աթլետիկական վազքուղիները, լողավազաններն ու մարզադահլիճները:
3. Պետական, համայնքային, հասարակական ու մասնավոր մարզական կազմակերպությունների փոխգործակցության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն
4. Տարածաշրջանային և միջազգային մարզական շարժումների հետ համագործակցության հաստատման և ընդլայնման անհրաժեշտություն
5. Հաշմանդամություն ունեցող մանուկների և պատանիների համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծման անհրաժեշտություն

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Նախատեսվում է արտադպրոցական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի սերմանում, Երևանի ու Հայաստանի հավաքական թիմերի համալրում բարձրակարգ մարզիկներով: Ծրագրի շրջանակում նախապատրաստվում է ուսումնամարզական գործընթացում ընդգրկված մարզիկ մարզուհիների նախապատրաստում համապատասխան միջին ու բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելուն, Երևան քաղաքի ու Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի համար բարձրակարգ մարզիկների նախապատրաստում և այլն:
2. Նախատեսվում է տարաբնույթ սպորտային միջոցառումների կազմակերպում: Ծրագրով նախատեսվում է՝ Երևան քաղաքի առողջարարական, հանրային, մարզական

միջոցառումների տարեկան պլանով նախատեսված Երևան քաղաքի առաջնությունների, մարզաառողջարարական, հանրային միջոցառումների կազմակերպում, Հայաստանի Հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում Երևան քաղաքի հավաքական թիմերի, երևանյան թիմերի ու մարզիկ-մարզուհիների մասնակցության ապահովում, Երևանի թիմերի և երևանցի մարզիկների համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում՝ հանրապետական և միջազգային մրցաշարերին նախապատրաստվելու և պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով և այլն:

3. Նախատեսվում է արտադպրոցական կազմակերպությունների շենքերի վերանորոգում, գույքի ձեռքբերում: Ծրագրով նախատեսվում է Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների շենքերի վերանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովման աշխատանքների իրականացում:
4. Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզական միջոցառումների, հաշմանդամություն ունեցող անձանց սպարտակիադաների, փառատոների, ստեղծագործական ցուցահանդեսների կազմակերպում:
5. Նախատեսվում է ստեղծել նոր հեծանվուղիներ: Ծրագրի շրջանակում նախատեսվում է ստեղծել նոր հեծանվային մայրուղիներ և արահետներ, ինչպես նաև կայանատեղեր, որը կնպաստի հեծանվային տրանսպորտի զարգացմանը, քաղաքացիների առողջ ապրելակերպի բարելավմանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երևանի քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 46-Ն որոշմամբ ստեղծվել է Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը: Երևանի քաղաքապետարանում գործում է երիտասարդական կենտրոն՝ սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ անցկացնելու համար անհրաժեշտ պայմաններով: Խորհուրդը նաև ներգրավվում է համաքաղաքային գրեթե բոլոր ծրագրերին, տարաբնույթ տոնական ու մեծ միջոցառումների կազմակերպչական և կամավորական աշխատանքներին:

Հիմնախնդիրներ

1. *Մայրաքաղաքի երիտասարդների սոցիալ-տնտեսական գործունեության, զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումների անցկացման անհրաժեշտություն*
2. *Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման անհրաժեշտություն*
3. *Համապատասխան ընկերությունների համագործակցությամբ՝ Երևանի և Մփյուռքի դպրոցների միջև կկազմակերպվի հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի զարգացման նպատակով:*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել համատեղ միջոցառումներ երիտասարդության մասնակցությամբ:
2. Կընդլայնվի միջազգային կազմակերպությունների և դեսպանությունների հետ համագործակցության շրջանակը:
3. Արդյունավետ համագործակցություն կիրականացվի մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, սփյուռքի և հանրապետության մարզերի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային երիտասարդական կառույցների հետ:

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանը, ելնելով Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և նրանց ընտանիքների բացահայտման, նրանց խնդիրների գնահատման և մասնագիտական աջակցությանն ուղղված գործառնություններ՝ նախապատվություն տալով երեխայի լավագույն շահերի, ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի ապահովմանը: Իրականացնում է խնամատար և որդեգրման ինստիտուտի բարեփոխման գործընթացները և տարաբնույթ միջոցառումներով նպաստում նմանատիպ ընտանիքների թվի ավելացմանը դիտարկելով այն որպես հաստատություններում երեխաների խնամքի այլընտրանքային լավագույն տարբերակ: Երևան քաղաքում իրականացնում է որդեգրողների, խնամատար ծնողների, խնամակալների կամ հոգաբարձուների ընտանիքներում դաստիարակության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ վերահսկողություն:

Հիմնախնդիրներ

1. Խնամատար ինստիտուտի դերի բարձրացման և խրախուսման անհրաժեշտություն:
2. Վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հնաձևաժողովների աշխատանքների կանոնակարգման և մասնագիտական համալրման անհրաժեշտություն:
3. Կրթությունից դուրս մնացած, առանց ծնողական խնամքի մնացած, ծննդյան վկայական չունեցող, հակասոցիալական վարք դրսևորող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, կրթական համակարգում ընդգրկման և կրթության շարունակության ապահովման, փաստաթղթերի ձեռքբերմանն ուղղված բազմամասնագիտական ծառայությունների տրամադրման անհրաժեշտություն:
4. Խնամակալության տակ գտնվող երեխաների և նրանց ընտանիքներին հաշվառման և աջակցության անհրաժեշտություն:
5. Սոցիալական տարբեր խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին քաղաքային կրթամշակութային, սպորտային միջոցառումներին ընդգրկման անհրաժեշտություն:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Ապահովելով երեխայի՝ ընտանիքում ապրելու կարևորագույն իրավունքի իրացումը, մանկատներում երեխաների թվի նվազումը, շարունակական աշխատանքներ են տարվելու որդեգրության և խնամատարության ինստիտուտների աջակցման ուղղությամբ:
2. Նախատեսվում է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների պաշտպանության միջոցառումների անցկացում: Շահագրգիռ կառույցների հետ համատեղ կիրականացվեն կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և նրանց կրթական համակարգում ընդգրկելու ուղղությամբ աշխատանքներ, ծննդյան վկայական չունեցող երեխաների տվյալների հավաքագրման, վկայականների ձեռքբերման գործընթացին աջակցման աշխատանքներ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման, կարիքների գնահատման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունների տրամադրման աշխատանքները: Աշխատանքներ կիրականացվեն կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին խնամքի և պաշտպանության հաստատություններում տեղավորման ուղղությամբ և այլն:
3. Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ նախատեսվում է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ այցելություններ ծննդատներ, խնամքի և պաշտպանության հաստատություններ:
4. Կիրականացվեն տարաբնույթ միջոցառումներ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների համար՝ ծնողավարման հմտությունների ձեռքբերման, պատմամշակութային և ազգային արժեքների ծանոթացման, խնամատար ընտանիքների խրախուսման և ընտանիքի դերի բարձրացման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող շնորհալի երեխաների բացահայտման, հասարակության մեջ նրանց ինտեգրման ուղղությամբ:

ՄՇԱԿՈՒՅԹ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 25 երաժշտական և արվեստի ու 1 կերպարվեստի դպրոցներ, 19 գրադարան, 15 մշակույթի, գեղագիտական կենտրոններ և տներ, 5 թանգարան, 3 թատրոն, 2 մանկական ֆիլիարմոնիաներ, «Երևան» փողային նվագախումբ, Արաբկիրի մշակութային կենտրոն, Կենդանաբանական այգի ՀՈԱԿ-ները և «Հայ-Արտ» ՓԲԸ-ն: 2015 թվականին Երևան համայնքի կողմից հիմնադրվել և գործում են «Ֆ. Նանսենի անվան թանգարանը» և «Արաբկիրի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ները: Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ է գործում նաև Երևանի կենդանաբանական այգին:

Հիմնախնդիրներ

1. Արվեստի և երաժշտական դպրոցներում ներգրավվածության ու հասանելիության խթանման անհրաժեշտություն
2. Տոնավաճառների և փառատոնների կազմակերպման ուղղված աշխատանքների ակտիվացման անհրաժեշտություն
3. Գրադարանային գույքի և շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն
4. Երիտասարդ ստեղծագործողների համար նոր մշակութային կենտրոնների ստեղծման անհրաժեշտություն
5. Մշակույթի բնագավառում տեղեկատվական-հաղորդակցական, նորագույն տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման և կիրառման, ինչպես նաև մշակութային արժեքների թվայնացման գործընթացի խթանման անհրաժեշտություն

6. Գրադարաններում, թանգարաններում, թատրոններում տեխնիկական-տեղեկատվական բազայի վերազինման և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման անհրաժեշտություն
7. Թանգարանային նմուշների ամրակայում, վերականգնում, ֆոնդապահոցներում և ցուցադրությունում թանգարանային առարկայի անվտանգ և անհրաժեշտ պայմանների ապահովման անհրաժեշտություն
8. Թանգարաններում ֆոնդապահոցների ջերմախոնավային համակարգի ստեղծման և առկա համակարգերի բարելավման և վերազինման անհրաժեշտություն
9. Վերականգնման արվեստանոցների՝ նյութերով և տեխնիկայով վերազինման անհրաժեշտություն
10. Թանգարանային գիտաշխատողների՝ արտերկրի հեղինակավոր թանգարաններում վերապատրաստման անհրաժեշտություն
11. Թանգարանային հավաքածուների և արխիվի գիտական հետազոտության և ուսումնասիրման, արդյունքների հանրությանը ներկայացման անհրաժեշտություն
12. Թատրոններում նոր ստեղծագործություններով խաղացանկի համալրման անհրաժեշտություն
13. Երաժշտական և արվեստի դպրոցները անհրաժեշտ գույքով և երաժշտական գործիքներով ապահովման անհրաժեշտություն
14. Երաժշտական դպրոցներու անհրաժեշտ գույքի, երաժշտական գործիքների, սարքավորումների ապահովման և համալրման անհրաժեշտություն
15. Մշակութային ծրագրերին բնակչության ինտեգրման անհրաժեշտություն
16. Կենդանաբանական այգում կենտրոնացված ջեռուցման համակարգի ներդրման անհրաժեշտություն
17. Կենդանաբանական այգու վերակառուցման և արդիականացման ծրագրի շարունակության ապահովման անհրաժեշտություն

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է տարաբնույթ մշակութային միջոցառումների կազմակերպում: Երևան քաղաքում պետական, ազգային և այլ միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ նվիրված Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, «Գարնանամուտ», Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան և այլն:
2. Նախատեսվում է ընդգրկուն ծրագրերի ներդրման միջոցով արվեստի և երաժշտական դպրոցներում խթանել հասանելիությունն ու ներգրավվածությունը:
3. Ծրագրով նախատեսվում է խթանել տոնավաճառային և փառատոնային մշակույթը՝ տեղական արտադրողների ու ստեղծագործողների համար:
4. Նախատեսվում է գրադարանային գույքի և շենքային պայմանների բարելավում: Գրադարաններում տեխնիկական-տեղեկատվական բազայի վերազինում և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում:
5. Նախատեսվում է ստեղծել մշակութային կենտրոններ, որտեղ երիտասարդ ստեղծագործողները հնարավորություն կունենան մատչելի պայմաններով վարձակալել արվեստանոցներ և կազմակերպել ցուցահանդեսներ, համերգներ և այլ միջոցառումներ:
6. «Արտադպրոցական դաստիարակության» ծրագրի իրականացումն անհրաժեշտ է նախատեսվում է երաժշտական և արվեստի դպրոցներում դպրոցահասակ երեխաների

մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացում:

7. Նախատեսվում է համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում: Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության միջոցով երեխաների, պատանիների և մեծահասակների համար ազատ ժամանցի կազմակերպում, նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ապահովում:
8. Երաժշտական և արվեստի դպրոցների աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով նախատեսվում է անհրաժեշտ գույքով՝ երաժշտական գործիքներով և համապատասխան գույքով ապահովում:
9. Նախատեսվում է ժամանակակից և միջին սերնդի արվեստի գործերի ցուցադրություն, գիտական, կրթական գործունեության իրականացում, Երևան քաղաքի պատմությունը, կենցաղն ու մշակույթը ներկայացնող թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրում, թանգարանային ֆոնդի համալրում՝ գնման, հնագիտական պեղումների, նվիրատվությունների հաշվին, ինչպես նաև թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կազմակերպվում են նոր ցուցադրություններ:
10. Նախատեսվում է «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի վերակառուցում և արդիականացում: Նախատեսվում է վերականգնել թանգարանի շենքը և միջնաբերդը, Խալդի աստծո տաճարը, Արգիշտի արքայի պալատը, զիկուրատը, կարասային սրահը, ամֆիթատրոնը, որտեղ կբեմադրվեն թատերականացված ներկայացումներ Երևան քաղաքի պատմական անցյալի վերաբերյալ, հանգստի գոտին, որտեղ կստեղծվի ուրարտական ժամանակաշրջանի խոհանոցի ներկայացման հնարավորություն, ինչպես նաև ուրարտական մշակույթին բնորոշ և պատմական միջավայրը ցուցադրող այլ տարրեր, վարչական շենքը, հուշանվերների խանութը, ցանկապատը, ավտոկայանատեղին:
11. Նախատեսվում է ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է 9-10 նոր ներկայացումների բեմադրում:
12. Կիրականացվեն կենդանաբանական այգու վերակառուցման ուղղված աշխատանքներ: Նախատեսվում է այգու արդիականացման գործընթացի իրականացում, նոր ազատավանդակների կառուցում և տարածքի ընդլայնում, առկա ջրային ռեսուրսների վերամշակման և վերօգտագործման կենտրոնի ստեղծում, կենտրոնացված ջեռուցման համակարգի ներդրում և այլն:
13. Նախատեսվում է երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում: Նախատեսվում է ազգային երաժշտական կատարողական արվեստի ավանդույթների պահպանում, տարածում ու զարգացում, դասական և ժամանակակից երաժշտական ստեղծագործությունների կատարում:
14. Նախատեսվում է «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի հիմնադրում: «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի համար նախատեսված շենքի կառուցման ավարտից հետո նախատեսվում է հիմնադրել նշված մշակութային կենտրոն-թանգարանը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը աշխարհի հնագույն բնակավայրերից է: Երևանը, որպես համայն հայության մայրաքաղաք, գիտակրթական, մշակութային և հոգևոր զարկերակ, իր մեջ ներառում է հանրապետության գիտական, կրթական, մշակութային, բազմաթիվ կենտրոններ:

Երևանը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային շուկայում կարևոր դեր և նշանակություն ունի. այն ոչ միայն բազային զբոսաշրջային կենտրոն է հանդիսանում, այլև պետության հիմնական մշակութային և զբոսաշրջային ենթակառուցվածքների կենտրոն: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2016թ. Հայաստան է ժամանել 1 259 657 զբոսաշրջիկ: 2015թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ այս ցուցանիշն աճել է 5.7%-ով: 2017թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ է ժամանել 622 381 զբոսաշրջիկ կամ 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 24.2%-ով: Հայաստան ժամանող զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը հանդիսանում է զբոսաշրջիկների առաջին հյուրընկալը և հիմնական հանգրվանը, որտեղ զբոսաշրջիկների մեծ մասն այցելում է մայիս-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Զբոսաշրջային ծառայությունների արագ աճող պահանջարկը վերջին տարիներին հանգեցրեց հյուրանոցների թվի աճին: 2017թ. հուլիս ամսվա դրությամբ Երևանում գործում է 200 հյուրանոցային տնտեսության օբյեկտ՝ 13,5% գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Մայրաքաղաքի հյուրանոցային տնտեսության օբյեկտներն ապահովում են 4594 համար և 8014 ննջատեղ:

Հիմնախնդիրներ

1. *Երևանի քաղաքի զբոսաշրջային բրենդի բացակայություն*
2. *Երևանի հնավայրերի վերականգնման անհրաժեշտություն*
3. *Երևանում թեմատիկ երթուղիների բացակայություն*
4. *Զբոսայգիների վերականգնման անհրաժեշտություն՝ մասնավոր ներդրումների միջոցով*
5. *Հանրային զուգարանների հիմնախնդրի լուծման անհրաժեշտություն*
6. *Երևանի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի ոչ բավարար չափով զովագրում և ներկայացում միջազգային շուկայում*
7. *Մայրաքաղաքի զբոսաշրջային ենթակառուցվածքների և հետաքրքրություն ներկայացնող վայրերի ոչ բավարար հագեցվածություն՝ միջազգային զբոսաշրջիկների պահանջներին համապատասխան:*
8. *Զբոսաշրջիկներին անհրաժեշտ տեղեկատվության ոչ բավարար մակարդակ*
9. *Երևան ժամանող միջազգային ավիաընկերությունների բարձր գնային քաղաքականություն*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. *Նախատեսվում է մշակել Երևան քաղաքի զբոսաշրջային բրենդը: Ընդ որում նախատեսվում աշխատանքները իրականացնել հանրային բաց քննարկումների և մրցույթների միջոցով:*

2. Նախատեսվում է նախաերևանյան շրջանից մինչև խորհրդային ժամանակաշրջանի մոդեռնիզմի նմուշներ պարունակող Շենգավիթի հնավայրը, Էրեբունի ամրոցը, Կարմիր բլուրը և Երևանի պատմական այլ միջավայրերը դարձնել գրավիչ՝ թեմատիկ զբոսաշրջային այցերի համար:
3. Նախատեսվում է մշակել և ներդնել զբոսաշրջային թեմատիկ երթուղիներ Երևանի համակողմանի ճանաչման համար:
4. Նախատեսվում է վերակառուցել և արդիականացնել Հաղթանակ զբոսայգին: Ընդ որում՝ աշխատանքները նախատեսվում է իրականացնել մասնավոր ընկերությունների ներգրավման միջոցով:
5. Բացօթյա սրճարանների հետ համագործակցության միջոցով նախատեսվում է ապահովել զուգարաններից օգտվելու հնարավորություն՝ զբոսաշրջիկների և քաղաքի բնակիչների համար:
6. Կարևորելով Երևանի դերը՝ մեծ ուշադրություն է դարձվում մայրաքաղաքի հանրահռչակմանն ուղղված աշխատանքներին միջազգային հարթակներում: Սույն ուղղությունն իր մեջ ներառում է՝ Երևանի մասին տեղեկատվության տրամադրում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան զանազան ամսագրերին և թերթերին, մայրաքաղաքի մասին հոդվածների պատրաստում, Երևանը՝ որպես զբոսաշրջային արդյունք, դիրքավորումը՝ գովազդում և ներկայացում: Կարևորվում է նաև օդանավակայանում, քաղաքի մուտք համարվող խոշոր մայրուղիներում և Երևանի մետրոպոլիտենում սոցիալական գովազդի պատրաստումն ու տեղադրումը, ուղղորդիչ ցուցանակների տեղադրման կազմակերպումը:
7. Նախատեսվում է «Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու կատարելագործում ու արդիականացում, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում ինչպես մայրաքաղաքի հյուրերի, այնպես էլ բնակիչների շրջանում: Իրականացվելու են տոն և հիշատակի օրերին նվիրված (անվճար ակցիաներ՝ մասնակից դարձնելով երեխաներին, սոցիալապես անապահով խավերին և հաշմանդամություն ունեցող անձանց):
8. Նախատեսվում է զարգացնել «Երևանյան ամառ» եռամսյա միջոցառումների ծրագիրը, որի շրջանակում արդեն ավանդական են դարձել «Համով-հոտով Երևան» տոնածիսական փառատոնը, Երևան տարազ ֆեստը, Երևանի գարեջրի փառատոնը, մշակութային, գործարար բացօթյա ցուցահանդեսները, թեմատիկ տոնավաճառները, զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող սեզոնային փառատոնները, համերգները: Նախատեսվում է նաև Երևանյան մթնոլորտը լավագույնս բնութագրող միջոցառումների և փառատոների կազմակերպում:
9. Կիրականացվեն զբոսաշրջիկների տեղեկատվական աջակցության միջոցառումներ: Սույն ծրագիրը նախատեսում է Երևանի վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում ինչպես հայերեն, այնպես էլ բոլոր այն լեզուներով, որոնք օգտակար կլինեն թիրախային լսարանի համար:
10. Նախատեսվում է միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացման ուղղված աշխատանքներ զբոսաշրջության ոլորտում: Սույն ուղղությունը ենթադրում է տարաբնույթ միջոցառումների մշակում և իրականացում մի շարք քույր և գործընկեր քաղաքների հետ, մասնավորապես գործարար հանդիպումների, ճանաչողական այցերի, փորձի փոխանակման, սեմինարների, կոնֆերանսների, կլոր-սեղանների կազմակերպում՝ պետական և մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:

ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ

Աշխարհում ընթացող տեխնոլոգիական զարգացումներն ու նորարարական լուծումները լայն հնարավորություններ են ստեղծում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում ավելի արդյունավետ կառավարում ապահովելու և քաղաքային ենթակառուցվածքների զարգացման համար:

2017թ. Երևանի քաղաքապետի որոշմամբ ստեղծվել է «Երևան խելացի քաղաք» ծրագրի մշակման և իրականացման հանձնաժողով, որի առաքելությունն է տեղեկատվական բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ Երևան քաղաքի բնակիչների և մայրաքաղաքի հյուրերի կյանքի որակի բարելավումը, սպասարկման արդյունավետության բարձրացումն ու կարիքների բավարարումը:

Հանձնաժողովի նպատակն է Երևան քաղաքի խնդիրների և առօրյա կենսագործունեության ապահովման նորարարական լուծումների մշակումը, որոնց հիմնական գաղափարը տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ICT) և բանացանցի (Internet of Things, IoT) ինտեգրումն է քաղաքային տնտեսության կառավարման բնագավառում:

Ուսումնասիրությունների շրջանակը ներառում է Երևան քաղաքի բոլոր ոլորտները, մասնավորապես՝ տեղեկատվական համակարգը, կրթությունը, առողջապահությունը, զբոսաշրջությունը, տրանսպորտը, կապը, էլեկտրամատակարարումը, ջրամատակարարումը, թափոնների վերամշակումը, իրավապահ մարմինները և այլ ոլորտներ:

Երևանի քաղաքապետարանում ներդրվել է մայրաքաղաքում գովազդների գույքագրման միասնական բազա, որի հիման վրա առաջին քայլերն արվեցին նաև թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային եղանակին անցնելու համար, ինչն էականորեն կրճատել է գովազդի թույլտվություն ստանալու ժամանակն ու խոչընդոտները: Մշակվել և ներդրվել է «Մանկապարտեզ» կառավարման և էլեկտրոնային հերթագրման համակարգը, դիսպետչերական կենտրոն՝ խոսքի և լսողության սահմանափակում ունեցող մարդկանց համար, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման և «Էլփաս 2» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգեր, ինչպես նաև քաղաքապետարանի կողմից տրամադրվում են քաղաքաշինական թույլտվություններ էլեկտրոնային տարբերակով:

Հիմնախնդիրներ

1. Քաղաքային ենթակառուցվածքներում և մատուցվող ծառայությունների գործընթացում էլեկտրոնային համակարգերի և նորագույն տեխնոլոգիաների կիրառության ցածր մակարդակ:
2. Առկա համակարգերի վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության և իրազեկվման ցածր մակարդակ:
3. Խելացի քաղաք տարրերի ինտեգրված համակարգի բացակայություն:

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Շարունակել Երևանի փոխակերպումը «Խելացի քաղաքի»՝ ներդնելով նորագույն տեխնոլոգիաներ. Ստեղծել միասնական տվյալների բազա, երթևեկության հոսքերի

կառավարում, իրական ժամանակում արտակարգ պատահարների մշտադիտարկում և համակարգված որոշումների ընդունում:

2. Քաղաքի առջև ծառայած մարտահրավերների լուծում՝ հիմնված նորարարական մոտեցումների վրա:
3. Քաղաքացիների արդյունավետ մասնակցության ապահովում քաղաքի զարգացման և կառավարման գործընթացներին:
4. Տեղեկատվական և նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ դիմակայուն և անվտանգ միջավայրի ամրապնդում:
5. Տեղեկացվածության և իրազեկման մակարդակի բարձրացում:
6. Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ քաղաքացիների կենսամակարդակի բարձրացում:
7. Տեխնոլոգիաների ներդրման և կիրառման փորձի փոխանակում:
8. **Նախատեսվում է ներդնել «Ակտիվ քաղաքացի» համակարգը, որի միջոցով քաղաքացիները հնարավորություն կունենան:**

- մասնակցելու Երևան քաղաքի համար առանցքային որոշումների կայացմանը՝ առցանց տարբերակով,
- մասնակցելու Երևանի առաջնահերթությունների սահմանմանը,
- հաշվետվություններ ստանալու՝ կատարված աշխատանքների և դրանց ընթացքի մասին,
- առաջարկություններով հանդես գալու և մասնակցելու դրանց իրականացմանը: Քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում բարեփոխումներ իրականացնելու ժամանակ նախատեսվում է ստեղծել իրազեկման և փոխգործակցության մի շարք հարթակներ, որոնք ապահովելու են մասնակցային կառավարումն ու հանրային լայն նշանակություն ունեցող որոշումների ընդունման մեջ քաղաքացիների ներգրավվածությունը:

Քաղաքապետարանի պաշտոնական կայքը հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին իրենց առաջարկությունները և հարցերը առցանց ուղարկել Երևանի ավագանու ադամներին, խմբակցություններին և մշտական հանձնաժողովներին՝ ապահովելով քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: Շարունակվելու են նաև ավագանու նիստերի ուղիղ հեռարձակումը պաշտոնական կայքում:

Շարունակվելու է iYerevan.am հարթակի գործունեությունը՝ Երևանի բարեկարգմանն ուղղված ծրագրերի մշակման, քննարկման և իրականացման համար քաղաքացիների առաջարկները, տեսակետներն ու կարծիքները ստանալու նպատակով:

Իր գործենությունն է շարունակելու նաև Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների հանրային փոխգործակցության հարթակը, որի նպատակն է ապահովել բարեփոխումների գործընթացի մասին իրազեկվածությունն ու քաղաքացիական մասնակցությունը: transport.yerevan.am-ը կայքում առկա են տեղեկություններ բարեփոխումների ամբողջ գործընթացի, մասնագիտական խմբի աշխատանքի, ինչպես նաև միջազգային խորհրդատու կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ: Հարթակում ընթանում են առցանց քննարկումներ ու քվեարկություն՝ հնարավորություն տալով քաղաքացիներին իրենց

մասնակցությունն ունենալու որոշումների կայացման գործընթացին էլեկտրոնային կառավարման ժամանակակից գործիքների միջոցով:

2019-2023 թվականներին նախատեսվում է մշակել և ներդնել աղբահանության, կոմունալ խնդիրների, բարեկարգման խնդիրների, բնակֆոնդի պահպանման, համատիրությունների գործունեության և մի շարք այլ ոլորտների փոխգործակցության հարթակներ՝ ավելի հարմարավետ Երևան ունենալու համար:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի ներդրումային դաշտի բարելավման և համայնքի զարգացման նպատակով Երևանի քաղաքապետարանն ակտիվ համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ: Քաղաքապետարանը անդամակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների («Քաղաքապետերը հանուն խաղաղության», «ԱՊՀ երկրների, մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային համաժողով», «Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհուրդ», «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքների կազմակերպություն», «Ֆրանսախոս քաղաքապետերի միջազգային ասոցիացիա», «Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիա», «Սևծովյան մայրաքաղաքների ասոցիացիա», «Եվրոսիթիս» ասոցիացիա), ինչպես նաև միացել է Եվրոպական Միության «Քաղաքապետների դաշնագիր» և «Համայնքների ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնություններին:

Հիմնախնդիրներ

1. *Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատման, շարունակման և ակտիվացման անհրաժեշտություն*
2. *Քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում միջազգային արդյունավետ կառավարման փորձի ուսումնասիրության և կիրառման անհրաժեշտություն*
3. *Երևանում իրագործվող միջազգային ծրագրերի համակարգման հարթակի բացակայություն*
4. *Քաղաքում ոլորտային ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով՝ բարձրաստիճան մասնագետների հետ կապի հաստատման և միջազգային փորձ ունեցող էքսպերտների ներգրավման անհրաժեշտություն*

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է ակտիվացնել միջազգային համագործակցությունը, քաղաքային կառավարման արդյունավետ միջազգային փորձը տեղայնացնել և ներդնել Երևանում:
2. Նախատեսվում է ստեղծել Երևանում իրագործվող միջազգային ծրագրերի համակարգման հարթակ: Ծրագրով նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ խորհրդի ստեղծում, որը կհամախմբի արդեն իսկ իրագործվող միջազգային ծրագրերը, կհամակարգի և կտրամադրի տեղեկատվություն:
3. Նախատեսվում է մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում: Ծրագրի նպատակն է ներգրավել օտարերկրյա ներդրումներ, ինչպես նաև աջակցել զբոսաշրջության զարգացմանը:
4. Նախատեսվում է համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների կազմակերպում և փորձագիտական աջակցություն, անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուների դասընթացների կազմակերպում:

ԳԼՈՒԽ 4 ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԵՐ

ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աջափնյակ վարչական շրջանն իր մեծությամբ 12 վարչական շրջաններից երրորդն է՝ 2582 հա, իսկ բնակչության տեսակարար կշիռը մայրաքաղաքի բնակչության թվաքանակում կազմում է 10.1%՝ 109.3 հազ. մարդ: Այն սահմանակից է Արաբկիր, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների հետ:

Վարչական շրջանի 435 բազմաբնակարան շենքերից 163-ը բարձրահարկ են, որտեղ գործում են 368 վերելակներ: 162 շենքերի տանիքները հարթ են՝ 115085քմ, իսկ լանջավոր տանիքների մակերեսը կազմում է 216284քմ: Մինչև 5 հարկ 272 բազմաբնակարան շենքերում հաշվառված է 4056 պատշգամբ: Ընդհանուր առմամբ վարչական շրջանում առկա են 1325 շքամուտք: Փողոցների ընդհանուր երկարությունը 66.67կմ է: Արտաքին լուսավորության ցանցը կազմում է 171կմ, առկա է 150 բակային այգի, 17500 հատ ծառ, կանաչ տարածքները կազմում են 40.11 հա, իսկ ոռոգման ջրագծի երկարությունը 39կմ է:

Վարչական շրջանում գործում է 20 հանրակրթական դպրոց, որոնցից 4-ը ավագ դպրոցներ են, 1-ը՝ միջնակարգ, իսկ 15-ը հիմնական: Առկա է նաև 3 ԲՈՒՀ, 1 ուսումնարան, 2 մասնավոր վարժարան, 16 նախադպրոցական հիմնարկներ, 1 արտադպրոցական կազմակերպություն, 2 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց, 2 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 գրադարանային կենտրոնացված համակարգ, 1 մշակութային կենտրոն, 1 մանկապատանեկան համալիր մարզադպրոց և 1 շախմատի դպրոց: Այստեղ է գտնվում նաև Թումո կենտրոնը, որը լայն հարթակ է հանդիսանում երեխաների և ուսանողների համար՝ ընդլայնելու մտահորիզոնը և միջոցներ տրամադրելու իրենց լիարժեք ստեղծագործական ներուժը բացահայտելու համար:

Աջափնյակ վարչական շրջանում գործում է հարապետական նշանակության 6 հիվանդանոց, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանը, 2 ամբուլատոր պոլիկլինիկա:

Հիմնախնդիրներ

1. Աղբավայրի մեկուսացման անհրաժեշտություն
2. Փողոցների, այգիների, բակային տարածքների մաքրման, աղբահանության և ձևամաքրման աշխատանքների կազմակերպման անհրաժեշտություն:
3. Կոյուղագծերի հիմնանորոգման անհրաժեշտություն:
4. Թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն
5. Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման անհրաժեշտություն:
6. Վերգետնյա և ստորգետնյա անցումների ոչ բավարար քանակ:
7. Բոլոր մանկապարտեզների բավարար շենքային պայմանների բացակայություն:
8. Վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն:
9. Կանաչ տարածքների, հանգստյան գոտիների ոչ բավարար մակարդակ:
10. Համատիրությունների գործունեության խիստ վերահսկման անհրաժեշտություն:
11. Դպրոցների ճաշարանների վերահսկման անհրաժեշտություն:
12. Ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի և վարչական շրջանի ենթակայության հիմնարկների շենքային պայմանների ոչ բավարար մակարդակ
13. Գյուղատնտեսական նշանակության շուկայի և ստորգետնյա ավտոկայանատեղի անհրաժեշտություն:

2019-2023 նախատեսվող ծրագրեր

1. Տարածքների բարվոք տեսքը և բնակիչների անվտանգությունն ու բարեկեցիկ կյանքն ապահովելու համար պարբերաբար կիրականացվեն բակային տարածքների, փողոցների, հանգստյան գոտիների մաքրման, աղբահանության և ձնամաքրման աշխատանքներ:
2. Կվերանորոգվեն բազմաբնակարան շենքերի տանիքները:
3. Կիրականացվի վերելակների հիմնանորոգում, անհրաժեշտության դեպքում նորերի տեղադրում:
4. Կընդլանվեն կանաչ տարածքները, կստեղծվեն նոր հանգստյան գոտիներ, կտնկվեն նոր ծառեր:
5. Կիրականացվեն առկա շատրվանների վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կստեղծվեն նորերը:
6. Նախատեսվում է հիմնանորոգել բոլոր մանկապարտեզները:
7. Ընտանի կենդանիների զբոսանքը կազմակերպելու համար կտրամադրվի հատուկ տարածք:
8. Կվերանորոգվեն բազմաբնակարան շենքերի շքամուտքերը, կամրացվեն պատշգամբները:

ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ավան վարչական շրջանը գտնվում է մայրաքաղաքի հյուսիսարևելյան մասում, տարածքը կազմում է 726 հա, բնակչությունը՝ 52.8 հազ. մարդ: Սահմանակից է Քանաքեռ-Զեյթուն, Նոր Նորք, Արաբկիր վարչական շրջանների և Կոտայքի մարզի հետ:

Վարչական շրջանի 237 բնակելի շենքերում առկա են թվով 330 վերելակներ, հաշվառված է անհատական բնակելի 1007 տուն: Բազմաբնակարանային շենքերի կառավարումն իրականացվում է 9 համատիրությունների միջոցով: Փողոցների երկարությունը կազմում է 52,39 կմ:

Ավան վարչական շրջանում կա 95 բակային տարածք, որտեղ առկա են 93 խաղահրապարակ և 12 մինի ֆուտբոլի դաշտ, 340 խաղեր և կարուսելներ, 220 մարզասարքեր, 67 գրուցատաղավարներ:

Ավան վարչական շրջանում առկա է 34 զբոսայգի և 18 խաղահրապարակ: Վարչական շրջանի կանաչ գոտին կազմում է 27,97 հա, ոռոգման ցանցի երկարությունը 28,8 կմ է:

Վարչական շրջանում գործում է 1 մշակութային կենտրոն, 1 արվեստի դպրոց, 1 մարզադպրոց, մինի ֆուտբոլի 12 դաշտ, 1 շախմատի դպրոց, 7 մանկապարտեզ, 9 դպրոց, 2 ԲՈՒՀ, 1 գրադարան:

Ավան վարչական շրջանում գործում է 11 առողջապահական կազմակերպություն:

Հիմնախնդիրներ

1. Բակային տարածքների բարեկարգման, ասֆալտապատման, միջբակային հատվածների արտաքին լուսավորության ապահովման, վթարային հենասյուների փոխարինման, խաղահրապարակների ստեղծման և կանաչապատման անհրաժեշտություն:

2. Կանաչապատ տարածքների ընդլայնման, սանմաքրման, աղբահանության որակի բարելավման անհրաժեշտություն:

3. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, շքամուտքերի վերանորոգման և հիմնանորոգման, ներքին կոյուղատար խողովակաշարերի նորոգման, նոր վերելակների ձեռքբերման անհրաժեշտություն:

4. Դպրոցական և նախադպրոցական ուսումնական, մշակութային հաստատությունների հիմնանորոգման և ընթացիկ նորոգման, գույքի թարմացման, բակերի ոռոգման ցանցերի արդիականացման, նորերի կառուցման, կանաչապատման անհրաժեշտություն:

5. Նոր հանգստի գոտիների ստեղծման, այգիների բարեկարգման և կանաչապատման անհրաժեշտություն:

6. Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ ու բավարար պայմանների ոչ բարձր մակարդակ:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների նորոգման, առկա խնդիրների վերացման, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովման և

բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանմանն ուղղված աշխատանքներ:

2. Նախատեսվում է մասնակի կամ ամբողջական ասֆալտապատման աշխատանքներ իրականացնել շենքերի բակերում, միջբակային տարածքներում, փողոցներում:
3. Նախատեսվում է վերելակների մաշված և շարքից դուրս եկած պահեստամասերի նորոգում և փոխարինում նորերով:
4. Նախատեսվում են կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, կանաչապատում և ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգում, ծառատունկերի կազմակերպում:
5. Վարչական շրջանի բնակչության հանգստի պատշաճ կազմակերպման նպատակով վարչական շրջանում կիրականացվեն մշակութային միջոցառումներ:
6. Կրթելավվեն նախադպրոցական հաստատությունների շենքային և բակային պայմանները, կիրականացվեն վերանորոգման աշխատանքներ:
7. Դպրոցական ճաշարաններում նախատեսվում է ապահովել առողջ սննդի մատակարարում՝ խստիվ պահպանելով անվտանգության նորմերը
8. Նախատեսվում է սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության տրամադրում:

ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Արաբկիր վարչական շրջանը՝ զբաղեցնելով 1329 հա տարածք, գտնվում է Երևան քաղաքի հյուսիսարևելյան հատվածում: Ունի ընդհանուր սահմաններ Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների և Կոտայքի մարզի հետ: Արաբկիրը Երևանի ամենախիտ բնակեցված վարչական շրջաններից է: Վարչական շրջանի բնակչությունը կազմում է 114.7 հազ. մարդ, իսկ տեսակարար կշիռը Երևանի բնակչության թվաքանակում կազմում է 10,8%:

Վարչական շրջանում հաշվառված են 692 բազմաբնակարան բնակելի շենքեր՝ 1978 մուտքերով և 459 վերելակներով: Կանաչ տարածքները կազմում են 72.09 հա, պուրակները, այգիները և հանգստի գոտիները 4-ն են, գործող ռոռզման համակարգի երկարությունը՝ 74.5կմ: Արաբկիր վարչական շրջանում է գտնվում «Բարեկամություն» մետրոյի կայարանը:

Արաբկիր վարչական շրջանում գործում է 21 ուսումնական հաստատություն, հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված երեկոյան միջնակարգ դպրոց, 2 երաժշտական դպրոց, 13 մանկապարտեզ, 2 մարզադպրոց, 1 բարեգործական ճաշարան, 3 պոլիկլինիկա և 3 հիվանդանոց, ինչպես նաև բազմաթիվ այլ բժշկական ծառայություններ մատուցող կառույցներ, խոշոր առևտրային և մանրածախ առևտրի կենտրոններ:

Հիմնախնդիրներ

- 1. Կանաչապատ տարածքների ընդլայնման, հանգստյան գոտիների և ջրավազանների ստեղծման, ռոռզման ցանցի արդիականացման անհրաժեշտություն:*
- 2. Վերգետնյա և ստորգետնյա անցումների ոչ բավարար քանակ:*
- 3. Հարթ և թեք տանիքների, շքասպաստշգամբների նորոգման անհրաժեշտություն:*
- 4. Վարչական շրջանի կենտրոնական փողոցների բեռնաթափման նպատակով ճանապարհային ցանցի ընդլայնման անհրաժեշտություն (Ա. Խաչատրյան և Մամիկոնյանց փողոցների միացնող հատված):*
- 5. Խցանումներից խուսափելու նպատակով տրանսպորտային նոր հանգույցների բացակայություն*
- 6. Բնակչությանը մատուցվող բուժհաստատություններում ծառայությունների որակի ոչ բավարար մակարդակ կապված շենքային պայմանների հետ:*
- 7. Մանկապարտեզների և դպրոցների, ինչպես նաև մարզական և մշակութային հաստատությունների շենքային պայմանների ոչ բավարար մակարդակ:*
- 8. Վերելակային տնտեսության արդիականացման, վթարայնություն ունեցող շենքերի ամրացման անհրաժեշտություն:*
- 9. Արտաքին լուսավորության ցանցի արդիականացման անհրաժեշտություն:*
- 10. Նոր մանկապարտեզի կառուցման անհրաժեշտություն:*
- 11. Բակային տարածքների ամբողջական բարեկարգման, միջբակային տարածքների ասֆալտապատման և լուսավորման, մինի ֆուտբոլի դաշտերի ավելացման անհրաժեշտություն:*

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր.

1. Վարչական շրջանի բնակիչների բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով կիրականացվեն հանգստյան գոտիների, բակային տարածքների, միջբակային տարածքների հետևողական մաքրման և նորգման աշխատանքներ:
2. Բակային տարածքներում և փողոցներում կիրականացվեն ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ:
3. Կվերանորոգվեն փողոցների, բակային տարածքները մայթերի եզրաքարերը:
4. Կիրականացվեն շենքերի հարթ և թեք տանիքների և մուտքերի նորոգում:
5. Նախատեսվում է ընդլայնել կանաչ տարածքները, կտնկվեն նոր ծառեր:
6. Կիրականացվեն վերելակների հիմնանորոգման աշխատանքներ:
7. Ընտանի կենդանիների զբոսանքը կազմակերպելու համար կտրամադրվի հատուկ տարածք:
8. Նախատեսվում է հիմնանորոգել բոլոր մանկապարտեզները:
9. Վարչական շրջանի կանաչ տարածքների մշտական, ոռոգման նպատակով կիրականացվեն ոռոգման ցանցերի նորոգման աշխատանքներ:
10. Սոցիալապես անապահով տարբեր խոցելի խմբերին ուշադրության կենտրոնում մշտապես պահելու նպատակով կկատարվեն բազմաբնույթ աշխատանքներ:
11. Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար կստեղծվեն անհրաժեշտ ու բավարար պայմաններ, կկառուցվեն թեքահարթակներ:
12. Կկառուցվեն նոր վերգետնյա և ստորգետնյա անցումներ:

ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դավթաշեն վարչական շրջանի տարածքը կազմում է 647 հա, որտեղ բնակվում է Երևան քաղաքի բնակչության 3.9%-ը՝ 42.5 հազ. մարդ: Վարչական շրջանը սահմաններ ունի Աջափնյակ և Արաբկիր վարչական շրջանների հետ:

Վարչական շրջանում առկա է 192 բազմաբնակարան շենք, որտեղ հաշվառված է 383 շքամուտք և 415 վերելակ: Շահագործվող բակային տարածքները թվով 65-ն են, իսկ փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 67կմ: Կանաչապատ տարածքը կազմում է 31.9 հա, իսկ ռոռզման ցանցն էրկարությունը՝ 35.3 կմ:

Դավթաշեն վարչական շրջանում գործում է 6 դպրոց, որից 4-ը հիմնական, 1-ը միջնակարգ, 1-ը ավագ, 5 մանկապարտեզ, 1 գրադարան, 1 շախմատի դպրոց, 1 արվեստի դպրոց, 1 հանդբոլի և խաղային այլ մարզաձևերի դպրոց: Այստեղ գործում է նաև 1 ամբուլատոր բժշկական կենտրոն:

Դավթաշեն վարչական շրջանում է գտնվում «Դիակոնյա» հիմնադրամի կողմից կառուցված «Հուլյսի Ավան» թաղամասը, որը զբաղեցնում է 14.0 հա տարածք: Թաղամասում կա 1-2 հարկից բաղկացած 80 տուն, որտեղ արդեն ապրում են 78 բազմազավակ ընտանիքների 500 անդամներ:

Հիմնախնդիրներ

1. Նոր ճանապարհների կառուցման անհրաժեշտություն՝ մանավորապես. Սասնա Ծռեր-Աղաբաբյան փողոցները կապող հատված, Տ.Պետրոսյանի վերջնամասից 2-րդ թաղամասի ետնամասով Աղաբաբյան փողոց տանող շրջանցիկ հատված:
2. Փողոցների, այգիների, բակային տարածքների մաքրման, աղբահանության և ձնամաքրման աշխատանքների կազմակերպման ոչ բարձր մակարդակ:
3. Մեյքուփի սեփական սեկտորի 1-ին և 2-րդ թաղամասերի վերին հատվածի, Զոր-2-ի, 3-րդ թաղամասի, գյուղի սեփական սեկտորի տարածքում ջրահեռացման համակարգի ստեղծման, արտաքին լուսավորության անցկացման, ինչպես նաև գրունտային ճանապարհների ասֆալտապատման անհրաժեշտություն:
4. Ռոռզման ցանցի արդիականացման անհրաժեշտություն:
5. Վերելակների վերանորոգման անհրաժեշտություն:
6. Կանաչ տարածքների ընդլայնման, ծառերի տնկման, հանգստյան գոտիների ստեղծման անհրաժեշտություն:
7. Համատիրությունների գործունեության խիստ վերահսկման անհրաժեշտություն:
8. Դպրոցների ճաշարանների վերահսկման անհրաժեշտություն:
9. Տանիքների վերանորոգման անհրաժեշտություն:
10. Վերգետնյա և ստորգետնյա անցումների ոչ բավարար քանակ:

2019-2023 նախատեսվող ծրագրեր

1. Կիրականացվեն բակային տարածքների, փողոցների, հանգստյան գոտիների մաքրման, աղբահանության և ձնամաքրման աշխատանքներ:
2. Կվերանորոգվեն բազմաբնակարան շենքերի տանիքները:
3. Կիրականացվի բակերի, միջբակային ճանապարհների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում:
4. Կիրականացվեն բազալտե եզրաքարերի վերանորոգում և փոխարինում:

5. Գիրականացվեն վնասված տանիքների վերանորոգման աշխատանքներ, կվերանորոգվեն շքամուտքերը:
6. Գիրականացվի վերելակների հիմնանորոգում, անհրաժեշտության դեպքում նորերի տեղադրում:
7. Կընդլանվեն կանաչ տարածքները, կստեղծվեն նոր հանգստյան գոտիներ, կտնկվեն նոր ծառեր:
8. Գիրականացվեն առկա շատրվանների վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կստեղծվեն նորերը:
9. Նախատեսվում է հիմնանորոգել բոլոր մանկապարտեզները և ամբուլատոր պոլիկլինիկաները:
10. Դպրոցական ճաշարաններում կապահովվի առողջ սննդի մատակարարումը՝ խստիվ պահպանելով անվտանգության նորմերը:
11. Սոցիալապես անապահով ընտանիքներին կտրամադրվեն սննդի փաթեթներ, երեխաները կապահովվեն դպրոցական պարագաներով:

Է Բ Ե Բ ՈՒ Ն Ի Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն

Էրեբունի վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Կենտրոն, Նորք-Մարաշ, Նոր Նորք, Շենգավիթ և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի և Արարատի մարզերին: Վարչական շրջանն ընդգրկում է Երևան քաղաքի հարավարևելյան հատվածը՝ զբաղեցնելով 4749 հա տարածք և ունի 127.9 հազ. բնակչություն:

Էրեբունի վարչական շրջանում առկա է 261 բազմաբնակարան շենք, 80 բարձրահարկ, 181 ցածրահարկ, գործում է 218 վերելակ: Փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 101.9 կմ: Գործում է 3 մասնավոր և 22 պետական հանրակրթական դպրոց (3 ավագ, 16 հիմնական, 3 միջնակարգ), Երևանի ենթակայության 12 մանկապարտեզ, 4 գրադարան, 1 մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, 1 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց:

Կանաչապատ տարածքի մակերեսը՝ 20,6 հա, պուրակների, այգիների և հանգստի գոտիների քանակը 2 է, ոռոգման ցանցի երկարությունը՝ 19,5 կմ:

Վարչական շրջանի տարածքում գործում է «Մուրացան» համալսարանական հիվանդանոցը, ՀՀՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալը, 6 ամբուլատոր պոլիկլինիկա, ատամնաբուժարաններ, շտապ օգնության ենթակայան, ինչպես նաև 2 բժշկական կենտրոն՝ «Էրեբունի» և «Գրիգոր Նարեկացի», որոնք ընդգրկում են 2 ծննդատուն:

Հիմնախնդիրներ

- 1. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների և վթարային պատշգամբների վերանորոգման, շենքերի հարթ տանիքներին կանաչապատ տարածքների ստեղծման, շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման անհրաժեշտություն:*
- 2. Վթարային շենքերից բնակչության վերաբնակեցման կամ շենքերի ամրացման անհրաժեշտություն:*
- 3. Ոռոգման ցանցի մասնակի և հիմնական վերանորոգման, ինչպես նաև կոյուղագծերի և նստած դիտահորերի նորոգման անհրաժեշտություն:*
- 4. Հասարակական նշանակության կառույցների շրջակայքում կանաչապատ տարածքների ստեղծման, հանգստի և ակտիվ ժամանցի կազմակերպման համար նոր գոտիների ստեղծման, կանաչ տարածքների ընդլայնման անհրաժեշտություն:*
- 5. Միջբակային տարածքների ասֆալտապատման և լուսավորման, բակային տարածքների բարեկարգման անհրաժեշտություն:*
- 6. Մանկապարտեզների ոչ բավարար քանակ:*
- 7. Ժամանակակից չափորոշիչներին համապատասխան բազմաֆունկցիոնալ սպորտդպրոցի բացակայություն:*
- 8. Գրադարանների արդիականացման, նոր գրադարանային գույքի համալրման անհրաժեշտություն:*

9. Միայնակ սոցիալապես անապահով թոշակառուներին՝ առողջական և սոցիալական խնդիրների լուծման, արտոնությունների տրամադրման և հատուկ ծրագրերի թականացման հարցում շարունակական աջակցության անհրաժեշտություն:
10. Թեքահարթակների ոչ բավարար քանակ:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Նախատեսվում է փողոցների, մայթերի և բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի մասնակի վերանորոգում: Ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացող փոսերի, անհարթությունների վերանորոգում:
2. Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների նորոգում:
3. Նախատեսվում է իրականացնել վերելակային տնտեսության արդիականացում՝ բազմահարկ շենքերի վերելակների հիմնանորոգում և առանձին հատվածների ընթացիկ նորոգում:
4. Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի մուտքերի և աստիճանավանդակների պատշաճ տեսքի ապահովում: Նախատեսվում է անբարեկարգ մուտքերում՝ թեքահարթակների պատրաստում, սալապատում, պատերի և առաստաղների, դռների և պատուհանների վերանորոգում կամ փոխարինում նորերով:
5. Նախատեսվում է նախադպրոցական 12 հաստատություններում իրականացնել թեք և հարթ տանիքների, իչպես նաև առանձին հատվածների հիմնանորոգում և վերանորոգման աշխատանքներ:
6. Զբոսաշրջության խթանման նպատակով նախատեսվում է Էրեբունի ամրոցի գրավչությանն ուղղված աշխատանքների կազմակերպում:
7. Կիրականացվեն տոն և հիշատակի օրերին նվիրված մշակութային, ինչպես նաև սպորտային միջոցառումներ:
8. Նախատեսվում է նոր կանաչ տարածքների ստեղծում, առկա կանաչապատ տարածքների վերականգնում, պահպանում և բարեկարգում, ինչպես նաև տարածքների մաքրության, ծառերի երիտասարդացման աշխատանքների կազմակերպում:
9. Նախատեսվում է ստեղծել հատուկ տարածքներ՝ շների զբոսանքի կազմակերպման համար:
10. Պարբերաբար կիրականացվեն հուշարձանների և մշակութային արժեքների պահպանում և վերանորոգում:
11. Նախատեսվում է ոռոգման ցանցի կառուցում, ընդլայնում և առկա ցանցի պահպանում:
12. Կիրականացվեն սոցիալապես անապահով ընտանիքներին տարաբնույթ օգնության տրամադրման աշխատանքներ:

ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Կենտրոն վարչական շրջանը, զբաղեցնելով 1335 հա տարածք, սահմանակից է Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին: Վարչական շրջանի բնակչությունը կազմում է 125,4 հազ. մարդ:

Կենտրոն վարչական շրջանի բնակելի 807 շենքերի և անհատական բնակելի 8300 տների կառավարումն իրականացվում է 42 համատիրությունների և 28 լիազորագրային կառավարման միջոցով: Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 106,0 կմ է: Վարչական շրջանում հաշվառված է 825 վերելակ: Վարչական շրջանում առկա է 425 բակային տարածք, որտեղ կան 120 մարզասարքեր և 114 գրուցատաղավարներ:

Վարչական շրջանում գործում է 9 կրթական-մշակութային հաստատություն, 19 թատրոն, 5 մշակութային կենտրոն, 34 մանկապարտեզ, 6 ավագ և 25 հիմնական դպրոցներ, 2 միջնակարգ մասնագիտական ուսումնարան, 23 ԲՈՒՀ, 2 մարզադպրոց, 31 թանգարան և ցուցասրահ, 4 գրադարան, 7 արվեստի և երաժշտական դպրոց:

Կենտրոն վարչական շրջանում առկա են 22 զբոսայգիներ, 18 հա հանգստյան գոտիներ, 49 հա կանաչապատ տարածքներ, 120 հա մերձակա անտառային գոտի, ոռոգման ցանցի երկարությունը 50,1 կմ է:

Կենտրոն վարչական շրջանում գործում է 29 առողջապահական կազմակերպություն, Գերմանական Կարմիր Խաչի բարեգործական ճաշարանը:

Հիմնախնդիրները

1. Կանաչապատ տարածքների ավելացման և պահպանման, հանգստի գոտիների ստեղծման անհրաժեշտություն:
2. Տրանսպորտային հանգույցների ոչ բավարար քանակ:
3. Բակային և միջբակային տարածքների բարեկարգման, կանաչապատման և լուսավորման, ասֆլտապատման, մայթերի մասնակի կամ կապիտալ վերանորոգման, ոռոգման ցանցերի վերանորոգման, խաղահրապարակների ստեղծման անհրաժեշտություն:
4. Արտաքին լուսավորության ապահովման, վթարային հենասյուների արդիականացման անհրաժեշտություն:
5. Թեքահարթակների ստեղծման անհրաժեշտություն:
6. Վերգետնյա և ստորգետնյա անցումների ոչ բավարար քանակ:
7. Հնամաշ վերելակների նորոգման, նոր վերելակների տեղադրման անհրաժեշտություն:
8. Թեք և հարթ տանիքների, կախովի պատշգամբների, շքամուտքերի վերանորման, ներքին ջրագծերի ու կոյուղագծերի նորոգման անհրաժեշտություն:
9. Նոր վերելակների ոչ բավարար քանակ:
10. Տրանսպորտային հոսքերի բեռնաթափման անհրաժեշտություն:
11. Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավման անհրաժեշտություն:
12. Մարզական և մշակութային, կրթական օջախների շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Նախատեսվում է իրականացնել միջբակային տարածքների լուսավորում, կանաչապատում, խաղահրապարակների բարեկարգում, նոր աղբամանների տեղադրում:
2. Վարչական շրջանի կենտրոնական փողոցները բեռնաթափելու նպատակով կստեղծվեն տրասպորտային նոր հանգույցներ:
3. Բնակչության շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման նպատակով կնորոգվեն մարզասարքերը, խաղահրապարակները, ինչպես նաև կտեղադրվեն նորերը:
4. Շրջակա միջավայրի պահպանության և բնակչության բարեկեցության ապահովման նպատակով կիրականացվեն, ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում:
5. Կիրականացվեն բնակելի շենքերի տանիքների նորոգման և հիմնանորոգման, ինչպես նաև դռների և պատուհանների փոխարինման աշխատանքներ:
6. Նախատեսվում է իրականացնել կրթոջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում:
7. Հաշմանդամություն ունեցող անձանց համար կստեղծվեն նոր թեքահարթակներ, կիրականացվեն հների հետևողական վերանորոգման աշխատանքներ:
8. Մշտական ուշադրության կենտրոնում կլինեն սոցիալապես անապահով տարբեր խմբերի ներկայացուցիչների խնդիրները, կտրվեն հնարավորինս արագ և ամբողջական լուծումներ:

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՐԱՍԽԱ ՎԱՐՇԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը սահմանակից է Աջափնյակ, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջաններին: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի և Արմավիրի մարզերին: Տարածքը կազմում է 2516 հա, բնակչությունը՝ 137.8 հազ. մարդ:

Վարչական շրջանն ունի 5597 բնակելի տուն և 589 բազմաբնակարան բնակելի շենք, որոնցից 495-ը բարձրահարկ են: Թեք տանիքների թիվը 92 է, հարթ տանիքներինը՝ 497, վերելակներինը՝ 996: Վարչական շրջանում կա 122 փողոց, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 97,79 կմ: Կանաչապատ տարածքի մակերեսը կազմում է 90.01հա, այգիների և պուրակների թիվը 9 է, ռոտոման ցանցի երկարությունը՝ 40.7 կմ: Շրջանում գործում է 24 դպրոց, 4 մարզադպրոց, 24 մանկապարտեզ, 3 մշակութային օջախ և գրադարան, 2 ԲԿ, 1 ծննդատուն և թվով 6 պոլիկլինիկաներ:

Հիմնախնդիրներ

1. *Լուսավորության ցանցի արդիականացման, միջբակային տարածքների լուսավորման, վթարային հենասյուների փոխարինման անհրաժեշտություն:*
2. *Բակային տարածքների բարեկարգման, խաղահրապարակների հիմնման անհրաժեշտություն:*
3. *Ասֆալտբետոնե ծածկի նորոգման, մայթերի մասնակի և կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն:*
4. *Ջրոսպյոցի ստեղծման և բարեկարգման, կանաչ տարածքների ավելացման անհրաժեշտություն:*
5. *Աղբահանության որակի բարձրացման, սանմաքրման աշխատանքների պատշաճ կազմակերպման անհրաժեշտություն:*
6. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, շքամուտքերի վերանորոգման, վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն:*
7. *Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի բարելավման, ռոտոման ցանցի ընդլայնման անհրաժեշտություն:*
8. *Վերգետնյա և ստորգետնյա անցումների և թեքահարթեակների ոչ բավարար քանակ:*

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Նախատեսվում է ասֆալտապատման աշխատանքների իրականացում, փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, եզրաքարերի նորոգում:
2. Կիրականացվեն բակային տարածքների կապիտալ վերանորոգման և բարեկարգման, միջբակային տարածքների լուսավորման, կանաչապատման, ինչպես նաև խաղահրապարակների ասֆալտապատման և ընդարձակման աշխատանքներ:
3. Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման և արդիականացման աշխատանքներ:
4. Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների նորոգման աշխատանքներ:
5. Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքներ՝ մասնավորապես, կիրականացվի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում, սալիկապատում, աստիճանների վերանորոգում և ներքին հարդարման այլ աշխատանքներ:

6. Նախատեսվում է ընդլայնել կանաչ տարածքները, բարելավել ոռոգման ցանցը, իրականացնել ծառատունկ և այլ բնապահպանական աշխատանքներ:
7. Մանկապարտեզներում կիրականացվեն վերանորոգման աշխատանքներ՝ մասնավորապես նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել բակային տարածքները:
8. Տոն և հիշատակի օրերին նախատեսվում է կազմակերպել մշակութային և սպորտային մի շարք միջոցառումներ:
9. Նախատեսվում է վարչական շրջանում գրանցված սոցիալապես անապահով անձանց ցուցաբերել սոցիալական աջակցություն, մասնավորապես՝ ֆինանսական և պարենային:

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նոր Նորք վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիսարևելյան հատվածում, սահմանակից է Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին, արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Բնակչությունը կազմում է 131.8 հազ. մարդ, տարածքը կազմում է 1411.0 հա, որը Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 15.4% է: Փողոցների և ճանապարհների երկարությունը 87.4 կմ է, շրջանում հաշվառված է 681 բազմաբնակարան շենք, գործում է 593 վերելակ: Բազմաբնակարանային շենքերի կառավարումն իրականացվում է 30 համատիրությունների միջոցով:

Վարչական շրջանում առկա է 335 բակային տարածք, 143 խաղահրապարակ և 18 մինի ֆուտբոլի դաշտ, տեղադրված են 307 խաղեր, 150 մարզասարքեր, 126 զրուցատաղավարներ, 700 նստարաններ: Կանաչ տարածքների մակերեսը՝ 65,2 հա, առկա է 23 զբոսայգի և պուրակ: Ոռոգման ցանցի երկարությունը 35.1 կմ է:

Շրջանում գործում է 22 մանկապարտեզ, 20 դպրոց, 4 մարզադպրոց, 1 ԲՈՒՀ, 1 արվեստի և 1 երաժշտական դպրոց, միջին մասնագիտական 2 քոլեջ, 1 ուսումնարան, 1 հատուկ դպրոց, 1 ճեմարան, 1 գրադարան, 1 մշակույթի կենտրոն, 1 թանգարան, 1 հայրերի ցածրագրական կենտրոն: Գործում է 4 մշակութային հաստատություն, 2 եկեղեցի և 1 թանգարան, «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը, 5 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 6 բարեգործական ճաշարան:

Հիմնախնդիրներ

1. Շենքերի միջբակային տարածքներում և փողոցներում լուսավորության ցանցի արդիականացման և ասֆալտապատման անհրաժեշտություն:
2. Բակային տարածքների բարեկարգման անհրաժեշտություն:
3. Մայրերի մասնակի և կապիտալ վերանորոգման, վթարային հենասյուների փոխարինման անհրաժեշտություն:
4. Հանգստյան գոտիների ոչ բավարար քանակ:
5. Խաղահրապարակների ոչ բավարար քանակ:
6. Ներքին կոյուղագծերի և ջրագծերի նորոգման, նոր ոռոգման ցանցի կառուցման անհրաժեշտություն:
7. Թեքահարթակների ոչ բավարար քանակ:
8. Բազմաբնակարան շենքերում սանիտարական նորմերի պատշաճ մակարդակի ապահովման անհրաժեշտություն:
9. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, արտաքին պատերի և կախովի պատշգամբների վերանորոգման, շքամուտքերի պատուհանների փոխարինման անհրաժեշտություն:
10. Վերելակային տնտեսության արդիականացման, նոր վերելակների ձեռքբերման և տեղադրման անհրաժեշտություն:
11. Դպրոցների, մանկապարտեզների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Նախատեսվում է իրականացնել 9000քմ ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ: Վերանորոգման աշխատանքները ներառում են ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում և փոսերի ասֆալտապատում:
2. Նախատեսվում է 5 և ավելի բակային տարածքների կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում՝ աստիճանների, եզրաքարերի վերանորոգում, գույքի թարմացում, լուսավորության ցանցի ապահովում, մանկական խաղերի տեղադրում, հնի նորոգում, կանաչապատում, ջրագծերի վերականգնում:
3. Կիրականացվեն 2000քմ թեք տանիքների և 9000քմ հարթ տանիքների իզոգամով նորոգման աշխատանքներ:
4. Նախատեսվում է բազմաբնակարան շենքերի 5 և ավել վերելակների նորոգում և հիմնանորոգում, շարքից դուրս եկած դետալների և հանգույցների, ճոպանների փոխարինում նորերով, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով:
5. Կիրականացվեն 80 շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ:
6. Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսում է 75 նստարանի, 8 զրուցատաղավարի տեղադրում, առկա նստարանների և զրուցարանների վերանորոգում և ներկում:
7. Նախատեսվում է կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, կանաչապատում և ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգում: Կիրականացվեն տարեկան 3500 ծառերի և թփերի տնկման աշխատանքներ, ինչպես նաև հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:
8. Նախատեսվում է իրականացնել ոռոգման ցանցերի նորոգում՝ շարքից դուրս եկած փականների փոխարինում նորերով, խողովակների ներկում:
9. Յուրաքանչյուր տարի նախատեսվում է իրականացնել 2 և ավել մանկապարտեզների վերանորոգում:
10. Կկազմակերպվեն ՀՀ պետական տոներին և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ, 5 սպորտային միջոցառումներ և հուշամրցաշարեր, ինչպես նաև այլ ծրագրեր:
11. Անապահով ընտանիքներին կտրամադրվի տարաբնույթ սոցիալական աջակցություն: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ պայուսակներ և գրենական պիտույքներ: Կկազմակերպվի երեխաների ամառային հանգիստը ճամբարում՝ 3 հերթափոխով, յուրաքանչյուր հերթափոխում՝ 35 երեխա:

ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նորք-Մարաշ վարչական շրջանը իր տարածքով ամենափոքր վարչական շրջանն է, զբաղեցնում է 476 հա տարածք: Տեսակարար կշիռը Երևանի բնակչության թվաքանակում կազմում է 1.1%՝ 11.6 հազ. մարդ: Վարչական շրջանում հիմնականում մասնավոր տնային տնտեսություններ են, առկա է ընդամենը 11 բնակելի շենք, որոնք կառուցված են մասնավոր ներդրումների հաշվին: Վարչական շրջանի փողոցների երկարությունը կազմում է 49.0 կմ, հասարակական նշանակության գոտին կազմում է 1.51 հա, իսկ ոռոգման ցանցի երկարությունը՝ 14.8 կմ:

Վարչական շրջանում առկա է 335 բակային տարածք, 143 խաղահրապարակ և 18 մինի ֆուտբոլի դաշտ, տեղադրված են 307 խաղեր, 150 մարզասարքեր, 126 գրուցատաղավարներ, 700 նստարաններ:

Վարչական շրջանի կանաչ տարածքների մակերեսը կազմում է 65,2 հա, առկա է 23 զբոսայգի և պուրակ, 15 հուշարձան: Ոռոգման ցանցի երկարությունը 35.1 կմ է:

Շրջանում գործում է 22 մանկապարտեզ, 20 հանրակրթական դպրոց, 1 ԲՈՒՀ, 4 մարզադպրոց, 2 ոչ պետական լիցենզավորված հանրակրթական ուսումնական հաստատություն, 1 արհեստագործական ուսումնարան, 1 արվեստի և 1 երաժշտական դպրոց, միջին մասնագիտական 2 քոլեջ, 1 հատուկ դպրոց, 1 ճեմարան, 1 գրադարան, 1 մշակույթի կենտրոն, 1 թանգարան, 1 հայրողաց տուն, 2 եկեղեցի, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը, 2 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 6 բարեգործական ճաշարան:

Հիմնախնդիրներ

12. Շենքերի միջբակային տարածքներում և փողոցներում լուսավորության ցանցի արդիականացման և ասֆալտապատման անհրաժեշտություն:
13. Բակային տարածքների բարեկարգման անհրաժեշտություն:
14. Մայրերի մասնակի վերանորոգման և հիմնանորոգման, վթարային հենասյուների փոխարինման անհրաժեշտություն:
15. Հանգստի գոտիների ոչ բավարար քանակ:
16. Խաղահրապարակների ոչ բավարար քանակ:
17. Ներքին կոյուղագծերի և ջրագծերի նորոգման, նոր ոռոգման ցանցի կառուցման անհրաժեշտություն:
18. Թեքահարթակների ոչ բավարար քանակ:
19. Բազմաբնակարան շենքերում սանիտարական նորմերի պատշաճ մակարդակի ապահովման, աղբահանության որակի բարելավման անհրաժեշտություն:
20. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, արտաքին պատերի և կախովի պատշգամբների վերանորոգման, շքամուտքերի վերանորոգման և պատուհանների փոխարինման անհրաժեշտություն:
21. Վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն:
22. Դպրոցների, մանկապարտեզների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն:
23. Անապահով ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրման անհրաժեշտություն:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 9000քմ ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ: Վերանորոգման աշխատանքները ներառում են ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում և փոսերի ասֆալտապատում:

2. Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է 5 և ավել բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ աստիճանների, եզրաքարերի վերանորոգում, գույքի թարմացում, լուսավորության ցանցի ապահովում, մարզասարքերի և մանկական խաղերի տեղադրում, կանաչապատում, ջրագծերի վերականգնում:

3. Տարեկան ծրագրի շրջանակներում կիրականացվեն 2000քմ թեք տանիքների և 9000քմ հարթ տանիքների նորոգման աշխատանքներ:

4. Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է բազմաբնակարանային շենքերի 5 և ավել վերելակների ընթացիկ վերանորոգում և հիմնանորոգում: Վերանորոգման աշխատանքները ներառում են վերելակների շարքից դուրս եկած դետալների և հանգույցների, ճուպանների փոխարինում նորերով, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով:

5. Տարեկան ծրագրի շրջանակներում կիրականացվեն 80 շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ:

6. Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է 75 նաստարանի, 8 զրուցատաղավարի տեղադրում, առկա նստարանների և զրուցատաղավարների վերանորոգում և ներկում:

7. Նախատեսվում է կանաչ տարածքների պահպանում և ընդլայնում, տարեկան 3500 ծառերի և թփերի տնկման աշխատանքներ, ինչպես նաև հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:

8. Նախատեսվում է իրականացնել ոռոգման ցանցի նորոգում՝ շարքից դուրս եկած փականների փոխարինում նորերով, խողովակների ներկում:

9. Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2 և ավել մանկապարտեզների վերանորոգում:

10. Կկազմակերպվեն ՀՀ պետական տոներին և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ, 5 սպորտային միջոցառումներ և հուշամրցաշարեր, ինչպես նաև այլ ծրագրեր:

11. Անապահով ընտանիքներին կտրամադրվի տարաբնույթ սոցիալական աջակցություն, սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին կտրամադրվեն պայուսակներ և գրենական պիտույքներ: Կկազմակերպվի երեխաների ամառային հանգիստը՝ մարզաառողջարանային ճամբարում, 3 հերթափոխով, յուրաքանչյուր հերթափոխում ընգրկելով 35 երեխա:

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նուբարաշեն վարչական շրջանը արտաքին սահմաններով հարում է Կոտայքի և Արարատի մարզերին և սահմանակից է Շենգավիթ ու Էրեբունի վարչական շրջաններին: Տարածքը կազմում է 1724 հա, բնակչությունը՝ 9.8 հազ. մարդ: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը 7,7% է, իսկ բնակչության թվաքանակում՝ 0,9%:

Վարչական շրջանում հաշվառված է 1512 սեփական տնտեսություն, 35 բազմաբնակարան շենք, գործում է 6 վերելակ: Փողոցների և ճանապարհների երկարությունը՝ 20,9 կմ է, ոռոգման ցանցի երկարությունը՝ 6,4 կմ է իսկ կանաչապատ տարածքները՝ 4,9 հա: Բակային տարածքներում տեղադրված է 8 խաղահրապարակ, 16 մարզասարք, 30 զբոսատաղավար, 10 կարուսեղ: Առկա է մինի ֆուտբոլի 3 դաշտ, 4 զբոսայգի և 10 խաղահրապարակ:

Վարչական շրջանի տարածքում գործում է 1 մանկապարտեզ, 1 նախակրթարան, 2 հանրակրթական դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 շախմատի մանկապատանեկան կենտրոն, 1 մարզամշակութային կենտրոն, 1 գրադարան, ընտանիքի և երեխաների աջակցման կենտրոն, մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ. 11 օժանդակ (գիշերօթիկ) դպրոց, «Նուբարաշենի մարզառազմական հատուկ մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ և 2 առողջապահական կազմակերպություն:

Հիմնախնդիրներ

1. Միջազգային չափանիշներին համապատասխանող նոր աղբավայրի կառուցման, գործող աղբավայրի մեկուսացման անհրաժեշտություն:
2. Ասֆալտապատման, ոռոգման ցանցի ընդլայնման, բակերում և միջբակային տարածքներում արտաքին լուսավորության ցանցի արդիականացման, վթարային հենապուլների փոխարինման անհրաժեշտություն:
3. Առկա հանգստի գոտիների ոչ բավարար քանակ:
4. Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների և շքամուտքերի նորոգման անհրաժեշտություն:
5. Շենքերի կոյուղագծերի, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի նորոգման անհրաժեշտություն:
6. Վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն:
7. Մշակութային օջախների շենքային պայմանների բարելավման, թարմացման, բակերի կանաչապատման անհրաժեշտություն:
8. Բնակելի շենքերի կառուցում ոչ պակաս, քան 250-300 բնակարաններով:
9. Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համար նոր շենքի կառուցում:
10. Մանկապարտեզի կառուցում:
11. Թիվ 175 միջնակարգ դպրոցի վերանորոգում:
12. Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 95 միջնակարգ դպրոցի հիմնանորոգում:
13. Պողոս Նուբար Նուբարյանի թանգարանի կառուցում:
14. Ներդրումների շնորհիվ աշխատատեղերի ավելացում ոչ պակաս քան 1000 հոգու համար:
15. Ժամանցային կենտրոնի ստեղծում:
16. Նուբարաշենի պոլիկլինիկայի շենքային պայմանների և տեխնիկական սարքավորումների բարելավում:

17. Վարչական շրջանում գործող տրանսպորտային միջոցների պայմանների բարելավում:

18. Վարչական շրջանում անվտանգության բարձրացում:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր՝

1. Նախատեսվում է իրականացնել փողոցների, մայրերի և միջբակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի մասնակի և կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ ներառյալ դիտահորերի և անձրևոսիչների նիշերի վերատեղադրում:
2. Նախատեսվում է բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների հիմնանորոգում և վերանորոգում՝ ցինկապատ, պրոֆիլավորված հարթ թիթեղներով:
3. Կիրականացվեն վերելակային տնտեսության արդիականացմանն ուղղված աշխատանքներ: Նախատեսվում է վերելակների հիմնանորոգում և վերանորոգում, դետալների ձեռքբերում:
4. Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի բակերում թվով 16 հատ խաղահրապարակների կառուցում, կանաչապատ տարածքների ստեղծում, նոր զրուցարանների և նստարանների տեղադրում, ինչպես նաև հանգստի գոտիների բարեկարգման աշխատանքներ:
5. Նախատեսվում է վերանորոգել բազմաբնակարան շենքերի 75 շքամուտք, իրականացնել ներշենքային պայմանների պատշաճ տեսքի բերման, աստիճանների և բազրիքների վերանորոգման աշխատանքներ:
6. Նախատեսվում է արտաքին լուսավորության ցանցի ստեղծում բակային տարածքներում, զբոսայգիներում և նորաստեղծ թաղամասերում, ինչպես նաև եղած և ստեղծվող արտաքին լուսավորության ցանցի արդիականացում՝ ժամանակակից լեդ լուսատուներով:
7. Նախատեսվում է հատուկ տարածքների հատկացում՝ շների զբոսանքի կազմակերպման համար:
8. Կիրականացվի կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և խնամք, ծաղկապատում, ծառատունկի կազմակերպում: Պարբերաբար կիրականացվեն հուշարձանների պահպանման և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:
9. Նախատեսվում է կազմակերպել մշակութային և մարզական միջոցառումներ, երեխաների համար բակային ճամբարներ և տարաբնույթ այլ ծրագրեր:
10. Կիրականացվեն աշխատանքներ ուղղված սոցիալապես անապահով անձանց խնդիրների լուծման և աշխատանքի տեղավորման նպատակով:
11. 20-րդ և 21-րդ շենքերի աջակողմյան ձորակում նախատեսվում է իրականացնել աստիճանավանդակների, ճաղավանդակների և արտաքին լուսավորության անցկացման աշխատանքներ:
12. Նախատեսվում է իրականացնել Նուբարաշենի հիմնադրման հետ կապված ամենամյա միջոցառումների կազմակերպում:
13. Վարչական շրջանի տարածքում առկա բնակելի, բայց ոչ սեփականաշնորհված շինությունների օրինականացում /որի հիման վրա կավելանան վարչական շրջանի եկամուտները/:
14. Նախատեսվում է Նուբարաշեն 6-րդ փողոցի սպայական հանրակացարանի բնակիչներին բնակարաններով ապահովում /գտնվում են վթարային վիճակում և կարելի է ներդրումների արդյունքում նոր շենք կառուցել/:
15. Նախատեսվում է երեխաների համար ժամանցային և ուսուցողական կենտրոնների ստեղծում և զարգացում:

16. Նախատեսվում է մշակութային օջախների շենքային պայմանների բարելավվում և նոր ծրագրերի իրականացում:
17. Նախատեսվում է Նուբարաշենի պոլիկլինիկայի տեխնիկական սարքավորումների հագեցվածության և շենքային պայմանների բարելավվում:
18. Նախատեսվում է «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն»-ի շենքային պայմանների բարելավում և աջակցություն:
19. Օժանդակել տրանսպորտային պայմանների բարելավմանը:
20. Կրթական օջախների շենքային և բակային տարածքների բարելավվում:
21. Նախկին «Տրիկոտաժի ֆաբրիկայի» վերագործարկման աջակցություն:
22. Նախատեսվում է փողոցի անվանակոչում Պողոս Նուբար Նուբարյանի անունով:

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Շենգավիթ վարչական շրջանի տարածքը կազմում է 4060 հա, բնակչությունը՝ 140.0 հազ. մարդ: Վարչական շրջանը սահմանակից է Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջաններին և Արարատի մարզին: Բազմաբնակարան բնակելի շենքերի քանակը՝ 636 է, 138-ը՝ բարձրահարկ, 279 վերելակ: Հաշվառված է 5 գետնանցում, 3 վերգետնյա անցում: Փողոցների երկարությունը կազմում է 147,7կմ: Առկա է 87960քմ հարթ տանիք և 394070քմ՝ թեք: Գործում է 29 դպրոց, 22 մանկապարտեզ, որից 1-ը՝ քաղաքային ենթակայության, 4 գրադարան, 4 մարզադպրոց, 1 մարզակումբ, 2 երաժշտական և 3 կրթամշակութային դպրոց:

Կանաչապատ տարածքների մակերեսը՝ 62,58 հա, ոռոգման ցանցի երկարությունը՝ 105,3 կմ, պուրակները, այգիները և հանգստի գոտիները 4 են: Ջրամատակարարումը իրականացվում է 5 աղբյուրներից, շրջանում գործում է 1 ջրամբար:

Վարչական շրջանի տարածքում գործում են 2 բժշկական կենտրոն, 2 ստամոքսաբուժական պոլիկլինիկա, Հիգիենիկ և հակահամաճարակային կենտրոնը: «Առաքելություն Հայաստան» ՀԿ ենթակայությամբ գործում է բարեգործական ճաշարան, որից օգտվում են շուրջ 151 շահառուներ:

Հիմնախնդիրներ

1. Արտաքին լուսավորության արդիականացման անհրաժեշտություն:
2. Բարեկարգման աշխատանքների իրականացման անհրաժեշտություն՝ բակային տարածքներում:
3. Հանգստի գոտիների, այգիների և պուրակների ստեղծման անհրաժեշտություն:
4. Առկա կանաչապատ տարածքներում ոռոգման ցանցի փոխարինման անհրաժեշտություն:
5. Վերգետնյա և ստորգետնյա անցումներում թեքահարթակների ոչ բավարար քանակ:
6. Վթարային շքապատշգամբների բարեկարգման, շենքերի գեղարվեստական ձևավորման անհրաժեշտություն:
7. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգման անհրաժեշտություն:
8. Վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն:
9. Մասնագիտական փորձաքննության կազմակերպման անհրաժեշտություն՝ շենքերի տեխնիկական վիճակի գնահատման նպատակով:
10. Կոյուղու, ջրամատակարարման և ջրահեռացման նոր ցանցի կառուցման և գործող ցանցի վերակառուցման անհրաժեշտություն:
11. Սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավման, գույքի արդիականացման, վերազինման անհրաժեշտություն: Բնակչության առողջապահության որակի բարձրացման անհրաժեշտություն:
12. Մարզական և մշակութային հիմնարկների, կրթօջախների ընթացիկ նորոգման և հիմնանորոգման, գույքի թարմացման անհրաժեշտություն:

13. Հողային տարածքների արդյունավետ օգտագործում և քաղաքաշինական միջավայրի բարելավման անհրաժեշտություն:
14. Նոր Խարբերդ թաղամասի գազիֆիկացան անհրաժեշտություն:
15. Ճանապարհների կառուցան և ասֆալտապատման անհրաժեշտություն՝ նոր կառուցապատվող թաղամասերում:

2019-2023թթ. նախատեսվող ծրագրեր

1. Կիրականացվեն ճանապարհների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման, վերանորոգման, պահպանման և փոսալցման աշխատանքներ:
2. Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի շարքից դուրս եկած հարթ տանիքների վերանորոգում՝ իզոգամի մասնակի նորոգում կամ հին, վնասված իզոգամի փոխարինում նորով:
3. Կիրականացվեն թեք տանիքների ծածկանյութի (ազբոշիֆեր կամ թիթեղ) փոխարինում նորով, ինչպես նաև հիմնանորոգման ընթացքում՝ փայտյա կարկասի փոխարինում:
4. Ասֆալտապատմանը զուգահեռ կիրականացվեն ճանապարհների, մայրերի եզրաքարերի վերանորոգում:
5. Կիրականացվեն հենապատերի վերանորոգման աշխատանքներ ըստ անհրաժեշտության՝ ամրացում, ինչպես նաև բացակայող երեսպատման սալերի տեղադրում:
6. Բոլոր բազմաբնակարան շենքերում կիրականացվեն վերելակների վերանորոգում, բեռնատար վերելակներում կիրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ՝ բեռնախցիկի, ճոպանների փոխարինում, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով:
7. Նախատեսվում է հատուկ տարածքներ հատկացնել՝ շների զբոսանքի կազմակերպման համար:
8. Կիրականացվեն վթարային պատշգամբների վերանորոգում և հիմնանորոգում, աշխատանքներ կտարվեն մուտքերի պատշաճ տեսքի ապահովման համար:
9. Կիրականացվեն մանկական խաղերի, նստարանների ու աղբամանների տեղադրում, կստեղծվեն ասֆալտապատ անցուղիներ: Տարածքներում կիրականացվեն կանաչապատման, ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ: Բարեկարգված բակային տարածքներում ու խաղահրապարակներում կիրականացվի կանաչապատ տարածքների խնամք, գույքի ընթացիկ վերանորոգում:
10. Կիրականացվեն գլխավոր փողոցների գեղարվեստական լուսավորման աշխատանքներ, կտեղադրվեն համապատասխան լուսատուներ:
11. Նախատեսվում է իրականացնել կրթօջախների շենքային պայմանների բարելավում, մասնավորապես՝ տանիքի, ջրագծերի և կոյուղագծերի ներքին ցանցի և ջերմամեկուսացման և էներգախնայողության աշխատանքների իրականացում:
12. Կիրականացվեն աշխատանքներ ուղված գրադարանային պայմանների բարելավմանը, նախատեսվում է գրքային ֆոնդի թարմացում, պահպանում, հասանելիության բարձրացում:
13. Ըստ ժամանակացույցի նախատեսվում է կազմակերպել մշակութային և սպորտային միջոցառումներ:

14. Նախատեսվում է իրականացնել ծառատունկ, այգիների և պուրակների խնամք: Մշտապես կիրականացվեն հուշարձանների մաքրման և շրջակա տարածքի ծաղկապատման աշխատանքներ, կկազմակերպվեն շաբաթօրյակներ:
15. Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող, անապահով ընտանիքների երեխաների և սոցիալապես անապահով ընտանիքների աջակցության տրամադրում:

ՔԱՆԱՔԵՌ-ՁԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը գտնվում մայրաքաղաքի հյուսիսարևելյան հատվածում և զբաղեցնում է 773 հա տարածք: Սահմանակից է Ավան, Արաբկիր, Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջաններին: Բնակչությունը կազմում է 73.9 հազ. մարդ:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 68,6 կմ է: Բակային տարածքների թիվը կազմում է 353, որտեղ առկա են 78 խաղահրապարակներ, մինի ֆուտբոլի 7 բազմաֆունկցիոնալ և 7 սաֆալտապատ դաշտեր, 399 խաղեր և մարզասարքեր, 52 տաղավարներ:

Վարչական շրջանում հաշվառված է բնակելի 361 շենք, որտեղ առկա է 236 վերելակ, սեփական տների քանակը կազմում է 3140: Բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է 23 համատիրությունների և 5-ը՝ լիազորագրային կառավարման միջոցով:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործում է 15 մանկապարտեզ, 9 հիմնական դպրոց, 3 ավագ դպրոց, 1 մասնագիտացված կրթահամալիր՝ խոսքի ծանր խանգարումներով երեխաների համար, 1 հատուկ ֆիզմաթ դպրոց, ՌԴ ՊՆ 1 միջնակարգ դպրոց, 1 կերպարվեստի դպրոց, 2 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 կենտրոնացված գրադարանային համալիր՝ 2 մասնաճյուղով, 1 մարզադպրոց, 1 մշակութային կենտրոն, 1 շախմատի դպրոց, 3 թանգարան, 5 ԲՈՒՀ, 2 քուլեջ, միջնակարգ մասնագիտական 1 ուսումնարան:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում կանաչ տարածքները կազմում են 52 հա, առկա է 1 զբոսայգի և 5 պուրակ, որոնց ոռոգումն իրականացվում է 17,5 կմ ոռոգման ջրագծի միջոցով:

Վարչական շրջանում գործող 3 բարեգործական ճաշարաններից օգտվում է մոտ 450 շահառու: Վարչական շրջանում է գտնվում «Սոցիալական տունը», որտեղ ժամանակավոր կացարան է հատկացվել մոտ 45 անօթևանների: Վարչական շրջանի տարածքում գործում է 7 հիվանդանոց և 2 պոլիկլինիկա:

Հիմնախնդիրներ

1. *Սաֆալտապատման աշխատանքների իրականացման անհրաժեշտություն:*
2. *Արտաքին լուսավորության ցանցի արդիականացման անհրաժեշտություն:*
3. *Բազմաբնակարանային շենքերի տանիքների նորոգման, կախովի պատշգամբների վերանորոգման անհրաժեշտություն:*
4. *Բազմաբնակարանային շենքերի շքամուտքերի վերանորոգման անհրաժեշտություն:*
5. *Վերելակների հիմնանորոգման անհրաժեշտություն:*
6. *Բակային տարածքների բարեկարգման, մանկական խաղերի, մարզական սարքավորումների, նստարանների և աղբամանների վերանորոգման անհրաժեշտություն:*
7. *Կանաչապատ տարածքների ոչ բավարար քանակ:*
8. *Միջշենքերի և շենքերի հարակից տարածքներում բետոնե աստիճանների նորոգման, հենապատերի և ցանկապատերի կառուցման և վերանորոգման, մայրերի եզրաքարերի տեղադրման անհրաժեշտություն:*
9. *Ոռոգման ցանցի ընդլայնման անհրաժեշտություն:*
10. *Դպրոցական և նախադպրոցական ուսումնական, մարզական և մշակութային հաստատությունների շենքային պայմանների և հարակից տարածքների բարելավման անհրաժեշտություն:*

11. Ժամանակավոր կացարանների կամ մատչելի սոցիալական բնակարանների կառուցման անհրաժեշտություն՝ բնակարանների կարիք ունեցող սոցիալապես անապահով ընտանիքների համար:

2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում:

2. Վարչական շրջանի տարածքում նախատեսվում է առանձնացնել հատուկ տարածքներ՝ նախատեսված շների զբոսանքի կազմակերպման համար:

3. Նախատեսվում է իրականացնել կանաչապատ տարածքների ընդլայնում, ծառերի տնկում, ինպես նաև առկա կանաչ տարածքների պահպանում և խնամք:

4. Վարչական շրջանի բնակիչների հանգստի համար առավել հարմարավետ պայմանների ստեղծման նպատակով, նախատեսվում է իրականացնել բակային տարածքների բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ:

5. Նախատեսվում է բազմաբնակարան շենքերի թեք և հարթ տանիքների նորոգման աշխատանքների իրականացում:

6. Վերելակային տնտեսության անվտանգ շահագործման նպատակով, նախատեսվում է վերելակային տնտեսության արդիականացում:

7. Բազմաբնակարան շենքերում նախատեսվում է իրականացնել վթարային պատշգամբների, շքամուտքերի վերանորոգման աշխատանքներ:

8. Նախատեսվում է իրականացնել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի փողոցների և բակային տարածքների լուսավորության ցանցի ընդլայնում:

9. Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել սոցիալապես անապահով անձանց և ընտանիքներին, կազմակերպել անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգիստը:

10. Առողջ ապրելակերպի խրախուսման նպատակով նախատեսվում է տարբեր տարիքային խմբերի ընգրկում՝ մարզաառողջարանական ծրագրերում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առաջարկության և/կամ առարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1	2	3	4	5
1.	<p>Արթուր Տեր-Գրիգորյան</p> <p>(առցանց դիմում՝ ստացված www.yerevan.am կայքով 23.11.2018թ. S-767 դիմում)</p>	<p>Հնգամյա ծրագրի «ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ» հատվածի 6.1 ժողովրդագրական իրավիճակը, 10-րդ էջ. աղյուսակ 2-ի տակ նշված է «Երևանի բնակչության դինամիկան կայուն աճ է արձանագրել: Բացառությամբ Նորք-Մարաշ վարչական շրջանի՝ մյուս վարչական շրջաններն ունեցել են բնակչության աճի դրական միտում»: Սակայն, փաստացի, աղյուսակում կարելի է տեսնել, որ բացասական միտում ունեն նաև Ավան, Արաբկիր, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վ/շ-ները, իսկ Դավթաշեն վ/շ-ում ստաբիլ վիճակ է:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Հնգամյա ծրագրի «ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ» հատվածի 6.1 ժողովրդագրական իրավիճակը, 10-րդ էջից հանվել է «Երևանի բնակչության դինամիկան կայուն աճ է արձանագրել: Բացառությամբ Նորք-Մարաշ վարչական շրջանի. մյուս վարչական շրջանները ունեցել են բնակչության աճի դրական միտում:» նախադասությունը:</p>
2.		<p>7.1 Շինարարություն, 12-րդ էջ. գծանկար 4-ը վնասված է:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:</p>
3.		<p>Տեխնիկական նկատառումներ</p> <p>8 Գրվածքների տեղաբաշխում.</p> <p>8.1 էջ 10-ի ստորին մասում գտնվող «Գծանկար 3» գրվածքն իջեցնել հաջորդ՝ 11-րդ էջի վերին մաս:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:</p>

		<p>8.2 Էջ 11-ի ստորին մասում գտնվող «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2016թ. Երևանի շինարարության ծավալները կազմել են ամբողջ հանրապետության ծավալի շուրջ 61.0%-ը:» հատվածն իջեցնել հաջորդ` 12-րդ էջի վերին մաս:</p> <p>8.3 Էջ 14-ի ստորին մասում գտնվող «Աղյուսակ 3» գրվածքն իջեցնել հաջորդ` 15-րդ էջի վերին մաս: Ինչպես նաև շարադրել «Աղյուսակ 5»:</p>		
--	--	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	--

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության և/կամ առարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4	5
1.	<p>Ա. Կարապետյան, Գ. Վարդանյան, Գ. Մելքոնյան, Կ. Անտաշյան, Ս. Մկրտչյան «Իմ քայլը» խմբակցության անդամներ</p> <p>14.12.2018թ. գրություն</p> <p>01/26</p>	<p>«հանրապետություն» բառն իներցիայով մնացել է Խորհրդային ժամանակներից, երբ Հայաստանը Սոցիալիստական հանրապետություններից մեկն էր, և տեքստերում նշում էին «հանրապետության»: Հիմա պետք է նշել «երկրի» կամ եթե նշում ենք «հանրապետություն», ապա պետք է լինի Հայաստանի Հանրապետություն:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Ծրագրում կատարվել է համապատասխան փոփոխություն: Ավելացվել է «Հայաստանի» բառը:</p>
2.		<p><i>բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում:</i></p> <p>Գերակայություններում այս ձևակերպումն անորոշ է, և պարզ չէ թե ինչ նկատի ունենք</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում՝ գերակայության իմաստը հետևյալն է՝ Շենքերի և բակային տարածքների</p>	<p>Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:</p>

			բարեկարգման և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովմանն ուղղված աշխատանքները հանդիսանում են գերակա ուղղություն:	
3.		«Գլխավոր հատակագիծ» չէ, պետք է մշակվի գոտեւորման հատակագիծ (Zonning plan), ավելի ճիշտ, մեկնարկեն մշակման աշխատանքները	Առաջարկն ընդունվել է: Մակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
4.		Ոչ մի գլխավոր հատակագիծ, այլ գոտեւորման: Պետք է անցում կատարել քաղաքաշինական ոլորտում նախագծման, կառավարման եւ որոշումներ կայացնելու ժամանակակից եղանակների: Գոտեւորման (zonning) գործիքների միջոցով ցանկացած հողակտոր կամ կառույց կստանա կարգավիճակ, որի մասին տեղեկությունը կլինի բաց եւ հասանելի, կնվազեն կոռուպցիոն ռիսկերը, ցանկացած ներդրող հստակ կտեղեկանա ինչ հնարավորություններ եւ սահմանափակումներ կան քաղաքի ցանկացած հատվածում:	Առաջարկը ընդունվել է: Մակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
5.		<i>Մայրաքաղաքի ճարտարապետական կերպարի ձևավորման անհրաժեշտություն</i> Անհասկանալի ձեւակերպում է: Քաղաքը արդեն ունի կերպար:	Առաջարկն ընդունվել է: Այո քաղաքն ունի կերպար, բայց խոսքը վերաբերվում է մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և

			ստացած հատվածներին, որոնք անհրաժեշտ է հնարավորության դեպքում ներդաշնակեցնել քաղաքի կերպարին, կամ գտնել լուծումներ դրանք ամբողջականացնելու համար:	շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն:
6.		<p>շենքերի արտաքին տեսքի կարգաբերման ծրագրերի իրականացման անհրաժեշտություն:</p> <p>Անհասկանալի եզր է, ի՞նչ է նշանակում, կարգի՞ բերել</p>	Առաջարկն ընդունվել է:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն:
7.		<p>Նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացառելու հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատումը և դրա արդյունքում հանրային շահի ոտնահարումը:</p> <p>Առաջարկում ենք լրացնել այսպես. Բացառվելու է կապիտալ շինարարությունը հանրային տարածքներում եւ կանաչ գոտիներում: Հանրային կանաչ տարածներում նախկինում տրված վարձակալման պայմանագրերը կուսումնասիրվեն: Կմեկնարկի պուրակների եւ այգիների մաքրման եւ տարատեսակ կառույցներից ազատելու երկարաժամկետ փուլային ծրագիր, որպես պիլոտային նախագիծ գործընթացը կսկսվի Օդակաձեւ այգուց, Մոսկովյան-Տերյան պուրակից եւ Հրազդանի կրճից: Բացառվելու է որեւէ ծրագրի իրականացում համայնքային</p>	<p>Առաջարկն ընդունելի է մասամբ: Առաջին նախադասությամբ արտահայտված առաջարկը ընդունելի է: Երկրորդ նախադասությամբ՝ բնակիչների համաձայնության հետ կապված թեմայի վերաբերյալ տեղկացնենք, որ գործում է ՀՀ կառավարության կողմից ընդունված 28.10.1998թ. N660 որոշումը «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» , հետևաբար այս հարցը պետք է քննարկել նաև այդ որոշմամբ հաստատված կարգի դիտարկմամբ և</p>	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		ընդհանուր օգտագործման տարածքներում (բակերում)՝ առանց բնակիչների մեծամասնության գրավոր համաձայնության	այլ նոր, պարզ մշակվելիք մեխանիզմների կիրառմամբ:	
8.		<i>Կբացառվի ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը նոր կառուցվող ապօրինի կառույցների նկատմամբ:</i> 2019-ից հետո՝ կառուցվող, ժամանակահատվածը պարզ չէ: Նաև պարզ չէ, թե արդյոք միայն կառուցման ժամանակի, թե՛ նաև վայրի կամ այլ չափորոշիչներով է բացառվելու օրինականացումը: Առաջարկում եմ հստակեցնել	Առաջարկն ընդունվել է: Սկսած 2019թ. վերանայվելու նախկինում գործընթացի հիմք հանդիսացող ՀՀ կառավարության որոշումը:	
9.		Նախատեսվում է մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն (<i>City Development Strategy</i>), Առաջարկվում է լրացնել հետևյալ անգլերեն ձևակերպումը նախադասության մեջ:	Առաջարկն ընդունվել է: Առաջարկվող լրացման՝ «City Development Strategy» կատարումն ընդունելի է:	Ավելացվել է նախադասությունում (City Development Strategy) անգլերեն տերմինը:
10.		<i>Անցումները հարմարեցված կլինեն հաշմանդունություն ունեցող անձանց համար, կլինեն լուսավորված և անվտանգ:</i> Ժամանակակից քաղաքներում վաղուց փորձարկվել է լայնորեն կիրառվում են փողոցների վերակառուցման եւ վերակահավորման արդի մեթոդներ, որոնց արդյունքում մայրերը լայնանում են, ավելանում է կանաչապատ տարածքը, մեքենաների կայանելը դառնում է անվտանգ եւ հարմար,	Առաջարկն ընդունվել է:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		<p>հատկացվում են արահեռներ հեծանիվների համար: Քննարկվելու է երկարաժամկետ եւ փուլային ծրագիր իրականացնելու հնարավորությունը: Քննարկել որոշ փողոցները մշտապես կամ պարբերաբար հետին դարձնելու հնարավորությունը</p>		
11.		<p><i>Նախատեսվում է իրականացնել Երևանի «Փոքր կենտրոնի» սահմանների նախագծի մշակում («Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հաստատումից հետո):</i> Անիմաստ բան է Եթե մշակվի գոտեւորման հատակագիծ, բոլոր հարցերի պատասխանները հստակ կձեւակերպվեն, բոլոր չափանիշները, սահմանները եւ այլն ստատումից հետո):</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Մակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:</p>	<p>Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:</p>
12.		<p><i>Ֆասադային հատվածների, կամարանցումների վերանորոգման, նկարազարդման անհրաժեշտություն</i> Ֆասադային բառը փոխարինել ճակատային բառով:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Նշված նախադասության մեջ ֆասադային բառը փոխարինվել է ճակատային բառով:</p>
13.		<p><i>Նախատեսվում է իրականացնել համապատասխան աշխատաքներ ուղղված արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնի կազմակերպմանը:</i> Պարզ չէ թե այս փառատոնն ինչով է քաղաքի համար կարևոր, առաջարկում եմ պարզաբանել</p>	<p>Առաջարկն ընդունված է: Արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնը ծանոթությունների հարթակ է միջազգային հեղինակավոր գովազդային կազմակերպությունների հետ: Կազմակերպվող վարպետության դասերի ընթացքում ուսանողները, գովազդային կազմակերպությունների</p>	<p>Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:</p>

			ներկայացուցիչները ծանոթնում են գովազդային նոր ուղղություններին:	
14.		<p>Կշարունակվեն օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքները, կշարունակվի խիստ հսկողությունը մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:</p> <p>Անհրաժեշտ է նաև հանել փողոցներում տեղադրված այն վահանակները, որոնք խանգարում են քաղաքի կարևոր առանցքների և համայնապատկերի միասնական ընկալմանը: Քննարկել ճարտ. վարչության և գլխ. ճարտարապետի հետ</p>	<p>Առաջարկն ընդունված է:</p> <p>Աշխատանքներն ընթացիկ են և ուղղված են ինքնակամ կամ ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերմանը և ապամոնտաժմանը:</p> <p>Նախատեսվում է մշակել Երևան քաղաքի գովազդի սխեման, որտեղ կվերանայվեն գովազդի չափորոշիչները: Գովազդի սխեմայի մշակման ընթացքում նախատեսվում է համագործակցել գլխավոր ճարտարապետի, գովազդային, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:</p>	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
15.		<p>Մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է մետաղյա հենասյուները գերծ պահել գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշաներ և հայտարարություններ կպցնելուց, կպահպանվի նաև սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ազրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:</p> <p>Ինդրում եմ հստակեցնել, ինչ երեսպատելու մասին է խոսքը:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p> <p>Հենասյուները ներկվում են հատուկ ներկով, որը հնարավորինս բացառում է ինքնակայուն կամ սոսնձի օգտագործմամբ հայտարարությունների փակցնելուն:</p>	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում «երեսպատել» բառը փոխարինվել է «ներկվել» բառով:

16.		<p>Միգրացիոն, հատուկ ներկի՞</p> <p><i>Ավելացնել նոր կետ</i></p> <p>Առաջարկում եմ վերանայել շինհրապարակների պարիսպների վրա փակցվող պաստառների ձևն ու բովանդակությունը, օրինակ վերցնելով արտասահմանյան հաջողված փորձը, այդ պաստառները պետք է տան ապագա կառույցի լիարժեք պատկերը, կարևոր գծագրերը, պատվիրատուների, նախագծողների, կապալառուների մասին ամբողջական տեղեկություններ</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p> <p>Շինհրապարակներն առանձնացնող պաստառների ձևավորման մեջ ներառվում է նաև որպես պարտադիր պայման տեղեկատվություն կառուցապատողի, նախագիծը կատարող կազմակերպության, կապալառուի, տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների անվանումները, ինչպես նաև ներկայացվում է ապագա կառույցի լիարժեք պատկերը:</p>	<p>Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:</p>
17.		<p><i>Կիրականացվի թափառող կենդանիների հիմնախնդրի լուծման ձևաչափի կիրառում՝ հանրային կարծիքից ելնելով:</i></p> <p>Ի՞նչ ձևաչափի մասին է խոսքը: Մեր նախընտրական ծրագրում ամրագրված էր ստերջացման մեթոդը, որը միջազգայնորեն ընդունված ամենաարդյունավետ և հումանիստական մեթոդն է: Ստերջացումն են խորհուրդ տալիս միջազգային ճանաչված կազմակերպությունները, կիրառում՝ զարգացած երկրները: Առաջարկում եմ նոր լուծումներ չփնտրել, վերջնականապես հստակեցնել, որ խոսքը ստերջացման մասին է (եթե մասնագետները խորհուրդ կտան, որոշ, հստակ սահմանված դեպքերում նաև քննեցման):</p>	<p>Առաջարկը ընդունվել է:</p>	<p>Բնապահպանության ոլորտում նախադասությունը վերախմբագրվել է հետևյալ կերպ: «Թափառող շների գլխաքանակի կառավարման համար կկիրառվի բացառապես ստերջացման մեթոդը:»</p>

18.		<p><i>Սոցիալական ապահովության տեքստից տպավորություն է ստեղծվում, որ Երևանում խոցելի խումբ են միայն հաշմանդամություն ունեցող անձինք և անօթևանները:</i></p>	Առաջարկն ընդունվել է:	<p>Փոփոխությունները կատարվել են ծրագրի համապատասխան մասերում:</p> <p>Ծրագրում ավելացվել է հետևյալը.</p> <p>Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանագուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից:</p>
19.		<p>Ինչպիսի՞ սոցիալական խնդիրներ են առանձնացված, որո՞նք են ռիսկի խմբերը, ի՞նչ վիճակագրություն կա: Այստեղից հասկանալի չի դառնում, թե ինչ իրավիճակ ունենք հիմա և ինչ է պետք անենք, որպեսզի այն շտկվի:</p>	Առաջարկն ընդունվել է:	<p>Փոփոխությունները կատարվել են ծրագրի համապատասխան մասերում:</p> <p>Մասնավորապես՝</p> <p>Հաշվի առնելով երկրում աղքատության զգալի մակարդակը և այն, որ հասարակության կարիքավոր խավը</p>

				<p>որպես կանոն ավելի շատ է ենթակա ռիսկերի, քանի որ դրանց դիմակայելու համար չունի անհրաժեշտ չափով ռեսուրսներ, ուստի Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրում նախատեսված՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերը նպատակաուղղված են լինելու ռիսկերի կանխարգելմանը՝ ընտանիքի աղքատության, հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, ծնողազրկության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու և այլ պատճառների հետևանքներով կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց աջակցությանը՝ դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու նպատակով: Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց,</p>
--	--	--	--	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

				<p>առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միաձնող ընտանիքների, բնակարանագուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից:</p>
20.		<p>Ծրագրում ոչ մի խոսք չկա սոցիալական աջակցության համակարգի խնդիրների և դրանց կայացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Ողջ քաղաքն ունի ընդամենը մեկ սոցիալական աշխատող, մինչդեռ գործուն սոցիալական աջակցության համակարգ ստեղծելու համար էական է սոցիալական աշխատողների թվի մեծացումը: Մեկ այլ կարևոր բաղադրիչ է սոցիալական աջակցության տարածքային բաժինների և վարչական շրջանների սոցիալական հարցերով բաժինների սերտ համագործակցությունը սոցիալական աջակցության դեպքի վարման և համագործակցության ցանցերի շրջանակներում: Վարչական շրջանների համապատասխան բաժինների աշխատակիցներն ունեն</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Ներկայացված են առկա խնդիրները և ձուլվածությունը կատարված է ծրագրի համապատասխան մասերում</p> <p>Ծրագրում ավելացվել է հետևյալը.</p> <p>Կարևոր խնդիր է նաև սոցիալական աջակցության համակարգի մի շարք խնդիրների /վարչական շրջանների սոցիալական բաժինների աշխատողների ժամանակակից սոցիալական աշխատանքի, սոցիալական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների կիրառման վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպումը, նրանց և ՄԱՏԲ-ների մասնագետների տունայցի դեպքերում գործուղման ծախսերի նախատեսումը, յուրաքանչյուր վարչական շրջանում առնվազն մեկական «Սոցիալական աշխատողի» հաստիքների ստեղծումը՝</p>

		<p>սոցիալական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների մասին ուսուցման կարիք: Ողջ համակարգը խարսխված է դրամական աջակցություն տրամադրելու սկզբունքի վրա, մինչդեռ բնակիչների խնդիրները դրանով չեն լուծվում:</p>		<p>սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումը, քանի որ հասարակության գերակշիռ մեծամասնությունը սոցիալական աշխատանքն ընկալում է որպես դրամական վճարների նշանակում/ լուծումը: Սոցիալական աշխատողների կրթական ցենզի բարձրացումը և դերային բաշխվածությունը նպաստելու է պետության ազգային սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացմանը, քաղաքացիների սոցիալական իրավունքների իրացմանը:</p>
21.		<p><i>Ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Երևանի քաղաքապետարանը համագործակցում է սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ:</i> Որոնք են այդ կազմակերպությունները, ի՞նչ հիմքով է համագործակցությունը. ֆինանսական, մասնագիտական, այլ:</p>	Առաջարկն ընդունվել է:	<p>Ներկայացված են կազմակերպությունները և համագործակցության սկզբունքները : Ծրագրում ավելացվել է հետևյալը.</p> <p>Ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Երևանի քաղաքապետարանը, վարչական շրջանների համապատասխան բաժինները համագործակցում են սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող ակտիվ հասարակական կազմակերպությունների հետ՝ համատեղ սոցիալական ծրագրերի իրականացման նկատառումով: Մասնավորապես՝ Գերմանական Կարմիր Խաչի հայաստանյան մասնաճյուղի հետ, Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորմամբ գործում են</p>

				<p>Քանաքեռ-Զեյթունի «Հուստ տունը» /բարեգործական ճաշարան և ցերեկային կենտրոն/, Էրեբունի, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում «արտագնա խոհանոց»: «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ 6 վարչական շրջաններում Երևան համայնքի կողմից անվարձահատույց տրամադրված տարածքներում կազմակերպվել են բարեգործական ճաշարաններ, բացառությամբ Աջափնյակ վարչական շրջանի, որտեղ տեղի վարձավճարը տրամադրվում է Երևան համայնքի կողմից: «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» ԲՀ հետ Արաբկիրի բարեգործական ճաշարանը, որին տրամադրվում է համաֆինանսավորում կունունալ ծախսերի փոխհատուցման համար: Մալաթիա-Սեբաստիայի, Արաբկիրի և Նոր Նորքի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գտնվող բարեգործական ճաշարաններին համաֆինանսավորում չի տրամադրվում, սակայն կա փոխգործակցություն:</p> <p>Նմանօրինակ համագործակցության արդյունքում կարիքավոր շուրջ 2300 շահառուներ տաք ճաշ են ստանում:</p>
22.		<p>Հաշմանդամություն ունեցող քանի անձ է հաշվառված Երևանում և ինչ են ներառում տարաբնույթ սոցիալական ծրագրերը:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Ծրագրում ավելացվել է հետևյալը.</p> <p>2018 թվականի տվյալներով մայրաքաղաքում հաշվառված են ավելի քան 57000 հաշմանդամություն ունեող անձիք, որոնցից ավելի քան 2300 երեխաներ են, ընդհանուր թվից ավելի</p>

				քան 27000-ը իգական սեռի ներկայացուցիչներ են:
23.		Քանի հատ թեքահարթակ է կառուցվել մինչ օրս:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելացվել է հետևյալը. 2013-2018թթ. կառուցվել են շուրջ 5000 թեքահարթակներ, որից շուրջ 300-ը մասնավորի կողմից, քաղաքապետարանի առաջարկությամբ ՃՈ կողմից 61 խաչմերուկներում տեղադրվել են փողոցային ձայնային ազդանշաններով լուսացույցներ, 128 հատվածներում տեղադրվել են գոգավոր սալիկներ և այլն/:
24.		Սոցիալական ապահովության հիմնախնդիրները չեն կապվում վերևում նկարագրված տեքստի հետ. տարեցների, սիրիահայերի, բազմազավակ ընտանիքների մասին որևէ խոսք չկա:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելացվել է հետևյալը. Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանագուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության

				<p>համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից: Հենց այստեղ է ծագում պետության /տվյալ դեպքում համայնքի/ կարգավորիչ դերը:</p>
25.		<p><i>Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման անհրաժեշտություն</i> Քանի վարչական շրջանում ներդրման մասին է խոսքը:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Ավելացվել է պարբերություն հետևյալ խմբագրությամբ:</p> <p>Սոցիալական աշխատանքի դերը, բովանդակությունը, ինչպես նաև լիազորությունների շրջանակը ավելի հստակ սահմանելու և «չափելի» դարձնելու համար գնալով ավելի հրատապ և արդիական է դառնում սոցիալական ծառայությունների ինտեգրումը Երևանի 12 վարչական շրջաններում: Ներկայումս Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում գործում են սոցիալական ծառայություններ մատուցող համալիր կենտրոններ, որոնք հարմարավետ են և մատչելի՝ բնակչության համար ծառայությունների մատուցման տեսանկյունից: Սակայն դեռևս խնդիր է այդ ծառայությունների ոչ միայն ֆիզիկական, նաև տեխնիկական և տեղեկատվական հոսքերի փոխանակման տեսանկյունից, որպեսզի համակարգի ներդրման շրջանակներում վերաիմաստավորվի սոցիալական աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև սոցիալական աշխատողի տեղն ու դերը հասարակական հարաբերություններում:</p>

				2019 թվականին նախատեսվում է Շենգավիթի համալիր կենտրոնի բացումը, մյուս վարչական շրջաններում նույնպես խնդիրը օրակարգային է:
26.		<p><i>Տոնական և հիշատակի օրերի /կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի, մայրության և գեղեցկության օրվա՝ ապրիլի 7-ի, ապրիլի 24-ի հիշատակի օրվա, մայիսի 8-ի, 9-ի՝ Շուշիի ազատագրության, ինչպես նաև Մեծ հայրենականում տարած հաղթանակի, ընտանիքի օրվա՝ մայիսի 15-ի, տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի, հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա՝ դեկտեմբերի 3-ի/ կապակցությամբ նախատեսվում են իրականացնել սոցիալական նշանակության տարաբնույթ ծրագրեր՝ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անձանց, ընտանիքների համար, որոնց կտրամադրվեն նաև աջակցություններ: Կրկին՝ ի՞նչ ծրագրերի մասին է խոսքը, և ի՞նչ է նշանակում՝ կտրամադրվեն աջակցություններ</i></p>	Առաջարկն ընդունվել է:	<p>Պարբերությունը խմբագրվել է հետևյալ կերպ:</p> <p>Տոնական և հիշատակի օրերի /կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի, մայրության և գեղեցկության օրվա՝ ապրիլի 7-ի, ապրիլի 24-ի հիշատակի օրվա, մայիսի 8-ի, 9-ի՝ Շուշիի ազատագրության, ինչպես նաև Մեծ հայրենականում տարած հաղթանակի, ընտանիքի օրվա՝ մայիսի 15-ի, տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի, հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա՝ դեկտեմբերի 3-ի/ կապակցությամբ նախատեսվում են իրականացնել սոցիալական նշանակության տարաբնույթ ծրագրեր՝ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անձանց, ընտանիքների համար, որոնց կտրամադրվեն նաև տարաբնույթ /դրամական, պարենային, սոցիալ-մշակութային/ աջակցություններ:</p>
27.		<p><i>Տարեցների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործման շրջանակում հոգածություն կդրսևորվի տարեց քաղաքացիների, այդ թվում՝ հայրենական պատերազմի վետերանների նկատմամբ: Բացի այդ՝ իրենց գործունեությունը կշարունակեն</i></p>	Առաջարկն ընդունվել է:	<p>Պարբերությունները խմբագրել են հետևյալ կերպ.</p> <p>Տարեցների համար սոցիալական ծառայությունների մատուցման ծրագրերի իրագործման շրջանակում հոգածություն կդրսևորվի տարեց քաղաքացիների, այդ թվում՝ Հայրենական</p>

		<p><i>տարեցների գերեկային խնամքի կենտրոնները, բարեգործական ճաշարանները:</i></p> <p>Ի՞նչ է նշանակում հոգակցություն կորսնորվի, անհասկանալի, ընդհանրական ձևակերպում է</p>		<p>Մեծ պատերազմի վետերանների նկատմամբ: Բացի այդ՝ իրենց գործունեությունը կշարունակեն տարեցների գերեկային խնամքի կենտրոնները, բարեգործական ճաշարանները:</p> <p>Պետություն - հասարակական կառույցներ - համայնք համագործակցությամբ կշարունակվի տարեցների սոցիալական սպասարկման, աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործումը՝ ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո՝ տուն-ինտերնատների միջոցով:</p>
28.		<p><i>Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել հասարակական կազմակերպություններին:</i></p> <p>Ի՞նչ է նշանակում, աջակցություն ինչպես և ինչի համար է ցուցաբերվելու: Անհրաժեշտ է պարզաբանել</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ.</p> <p>Հաշվի առնելով հասարակական կառույցների՝ մարդկանց աջակցելու յուրահատուկ փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա համատեղ սոցիալական նշանակության ծրագրերի իրականացման համար նախատեսվում է մասնագիտական, գույքային և հնարավոր այլ միջոցներով աջակցություն ցուցաբերել և խրախուսել հասարակական կազմակերպություններին, կամավորականներին /ընդլայնելով</p>

				նրանց շրջանակը/ համատեղ սոցիալական խնդիրների լուծման, ծրագրերի արդյունավետ իրագործման, բնակիչների իրազեկվածության բարձրացման նկատառումով:
29.		Նախատեսվում է մշակել և ներդնել աղբահանության, կոմունալ խնդիրների, բարեկարգման խնդիրների, բնակֆոնդի պահպանման, համատիրությունների գործունեության և մի շարք այլ ոլորտների փոխգործակցության հարթակներ՝ ավելի հարմարավետ Երևան ունենալու համար: Կարելի է համագործակցել նաև citybug-ի հետ, որ գործարկվելուց հետո բավական լավ էր գործում http://yerevan.citybugs.am/	Առաջարկն ընդունվել է Երևանի քաղաքապետարանը բաց է համագործակցության քաղաքային տնտեսության բոլոր որոշումներում նորարարական լուծումներ առաջարկող ընկերությունների, հասարակական կազմակերպությունների և ինովացիոն գաղափարներով անհատների համար: Մենք մեծ տեղ ենք հատկացնում ազգային գիտական պոտենցիալի օգտագործմանը և մասնակցային կառավարմանը քաղաքային տնտեսության բարելավման և որոշումների ընդունման հարցերում: Նմանատիպ առաջարկները, որոնք համահունչ կլինեն Երևանի քաղաքապետարանի զարգացման ծրագրերին և պահանջներին, կյանքի կոչվելու հնարավորություն կստանան:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹԹ. ՀՆԳԱՍՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ԶԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն	Պարզաբանում/ Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4	5
1.	<p>Մարինե Նալբանդյան</p> <p>(առաջարկը ստացված է Իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 26.11.2018թ.)</p>	<p>Ինձ՝ որպես ջրային փորձագետի, անհանգստացնում է Երևանյան լճի էկոլոգիական ու ափամերձ տարածքների ոչ բարեկարգ վիճակը: Ուստի առաջարկում եմ կազմակերպել քննարկում տարբեր մասնագետների մասնակցությամբ լուծումներ որոնելու ուղղությամբ՝ այդ տարածքը դարձնելու ռեկրեացիոն հանգստի գոտի երևանցիների համար:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչությունը պատրաստակամ է քննարկումներ կազմակերպել համապատասխան ծրագրի առկայության դեպքում: Ծրագրի վերաբերյալ քննարկումների կազմակերպման մասին կտեղեկացվի բոլոր շահագրգիռ կողմերին:</p>	
2.	<p>Միլվա Այվազյան</p> <p>«Երևանի Օրհուս կենտրոնի» համակարգող</p>	<p>Նախատեսվող աշխատանքների մեջ (6-րդ կետ) նշվում է նաև, որ ծառերի առողջացման նպատակով կիրականացվի մասսայական էտ: Առաջարկում եմ էտման աշխատանքներն իրականացնել նեղ մասնագետների ընդգրկմամբ: Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառը քաղաքային էկոհամակարգում նախ հանդիսանում է թթվածնի աղբյուր, հետո փոշու կլանիչ՝ այն պետք է ստվեր և գեղեցկություն ապահովի և այս ամենի արդյունքում</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Ծառերի խորը էտման աշխատանքները ազրոկանոններով ընդունված աշխատանք է: Խորը էտման միջոցով ավելանում է ծառերի կենսունակությունը, հյութաշարժը, ակտիվանում է պսակի մակերևույթի շիվերի աճը, մեծանում են տերևների չափերը և կարճ ժամանակահատվածում</p>	

		<p>ծառը պետք է բնական միջավայր ստեղծի, առաջարկում են զերծ մնալ խորը էտման գործընթացներից, քանի որ խորը էտման ժամանակ առնվազն 2 տարի ծառը զրկվում է թվարկված հատկություններից:</p>	<p>/անգամ առաջին տարվա ընթացքում/ մթնոլորտը զգալի չափով ավելանում է թթվածնով՝ ստեղծելով բարենպաստ միկրոկլիմա: Ինչ վերաբերում է սաղարթի ձևավորմանը, ապա այն տեղի ունենում է տումից 2-3 ամիս անց: Նշված աշխատանքներն իրականացվում է նաև այլ երկրներում, ինչպես նաև հարևան Վրաստանում և Ռուսաստանում:</p>	
3.		<p>Հանրային քննարկման ներկայացված Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի նախագծի բնապահպանական հիմնախնդիրների մեջ նշվում է՝ Երջակա միջավայրի տարրերի (օդ, ջուր, հող) աղտոտվածության նվազեցմանն ուղղված մեխանիզմների և միջոցառումների մշակման և իրականացման անհրաժեշտության մասին (4-րդ կետ): Սակայն հարկ է նշել, որ նախատեսվող աշխատանքների մեջ, հաշվի չեն առնված քաղաքի էկոլոգիական վիճակի՝ մասնավորապես քաղաքի օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողերի բարելավմանն ուղղված գործողություններ:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Քաղաքի էկոլոգիական վիճակի՝ մասնավորապես քաղաքի օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողերի բարելավմանն ուղղված գործողությունները ներառված են Երևան քաղաքի ավազանու 12.09.2017թ. հ.21-Ա որոշմամբ հաստատված Երևանի «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագրում:</p>	
4.		<p>Առաջարկում են զարգացման պլանում ընդգրկել օդային և ջրային ավազաններն (Գետառ, Հրազդան, Երևանյան լիճ) աղտոտող աղբյուրների գույքագրման գործողություններ՝ ըստ աղտոտման աղբյուրների և աղտոտիչների տեսակի ու քանակի, միաժամանակ հաշվի առնելով դրանց նվազեցմանն ուղղված համապատասխան գործողություններ:</p> <p>Առաջարկում են նաև նախագծում Հրազդանի կիրճը և Երևանյան լճի ափամերձ տարածքը քաղաքացիների համար հանգստի գոտու վերածելու աշխատանքներ նախատեսել, որը կնպաստի նաև</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ կքննարկվի և կուսումնասիրվի դոնոր կազմակերպության կամ ֆինանսավորող ֆոնդերի ներգրավման հնարավորությունը:</p>	

		տուրիզմի զարգացմանը:		
5.	Լիլիթ Սահակյան Աշխ. գիտ. թեկ. Էկոկենսորոնի գիտական գծով փոխտնօրեն (առցանց դիմում՝ ստացված www.yerevan.am կայքով 22.11.2018թ. Մ-7170 դիմում)	Քաղաքի մանկապարտեզների Էկոլոգիական վիճակի բարելավման ուղղությամբ առաջարկվում է՝ բնահեն լուծումների կիրառում. այն է՝ ֆիտոֆիլտրների՝ բուսականության միջոցով ստեղծել պաշտպանիչ ենթակառուցվածքներ՝ կանաչ պատեր: Երևան քաղաքի մանկապարտեզների հիմնավերանորոգման աշխատանքների ծրագրերում առաջարկվում է պաշտպանիչ կանաչ պատերի ստեղծման աշխատանքները ներառել որպես հիմնավերանորոգման պարտադիր բաղադրիչ:	Առաջարկը չի ընդունվել: Հստակ ֆինանսական հաշվարկներ և արդյունավետության ցուցանիշներ ներկայացնելու դեպքում նախատեսվում է պիլոտային կարգով Երևան քաղաքի մեկ կամ երկու մանկապարտեզներում իրականացնել «կանաչ պատերի» գաղափարը:	
6.	Մերի Խաչատրյան (28.11.2018թ. հ.Խ-2929 դիմում)	Համաձայն պլանի՝ նախատեսվում է «ջրագծերի, կոյուղիների նորոգում» (էջ 74), «բազմաբնակարան շենքերում սանիտարական նորմերի ապահովում» (էջ 74), «կիրականացվեն ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի նորոգման աշխատանքներ» (էջ 32): Խնդրում ենք տեղեկացնել՝ Նոր Նորք վարչական շրջանի Ջրվեժ-Մայակ թաղամասի 27 շենքի հերթը երբ է գալու, նաև խնդրում ենք տրամադրել ջրագծերի ցանցի գծագիր-պլանը:	Առաջարկը «Երևանի զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծին չի վերաբերում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել բնակչի հետ առաջիկա երկուշաբթի օրը հանդիպելու և բարձրացված խնդիրը տեղում ուսումնասիրելու նպատակով:	
7.		Մեզ մտահոգում է այն, որ «Violia» ընկերության բաժանորդ ենք, բայց այն իրեն պատասխանատու չի համարում նկուղային խողովակների վերանորոգման համար: Բայց չէ՞ որ ընկերությունում աշխատում են հենց ջրագծերի մասնագետներ: Համատիրությունում ունեն գրանցված հաստիքային մեկ փականագործ, բայց նրա փոխարեն այլ մարդ են բերել վերջերս նկուղում վթարը վերացնելու համար: Արդյոք որքանո՞վ են վստահելի այդ երկու անձինք: Նաև որպես համատիրության գլխավոր ինժեներ հանդիսացող Վիկտոր Դավթյանը չունի պատշաճ	Առաջարկը «Երևանի զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծին չի վերաբերում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել բնակչի հետ առաջիկա երկուշաբթի օրը հանդիպելու և բարձրացված խնդիրը տեղում ուսումնասիրելու նպատակով:	

		գիտելիքներ և փորձ կոմունալ հարցերում բնակիչներիս օգնելու համար: Մեզ տրամադրեցին բլանկ վերջին անգամ կատարված աշխատանքների և ծախսերի մասին, որ ստորագրենք: Մենք հրաժարվեցինք այն ստորագրելուց, քանի որ բլանկի ձևը պատշաճ չէ և տրված չէր վթարի ու դրա վերացման թափանցիկ և մանրակրկիտ նկարագրություն:		
8.		Նոր Նորքի վարչական շրջանի Ջրվեժ-Մայակ թաղամասի 27 շենքն ունի հարթ տանիք: 36 բնակարանի բնակիչները անցյալ ամառ ապահովեցին տանիքի հիդրոիզոլյացիան բարձրորակ կարկատաններով, ինչը արժեցավ մի քանի հարյուր հազար դրամ: Համատիրության նախագահը հրաժարվեց այս ծախսերի դիմաց բնակարանի տերերին՝ Կարեն Մարությանին և Մերի Խաչատրյանին, ազատել սպասարկման վարձից: Սա անարդարություն է: Բացի այդ, տանիքի վրա ծինելույզներից ջուր է կաթում աստիճանավանդակներին II և III մուտքերում: Դրանից ծակվել են բետոնե սանդուղքները:	Առաջակը «Երևանի զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծին չի վերաբերում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել բնակչի հետ առաջիկա երկուշաբթի օրը հանդիպելու և բարձրացված խնդիրը տեղում ուսումնասիրելու նպատակով:	
9.		Երկու և ավելի շաբաթ առաջ ՀԷՑ-ի տեղամասային գրասենյակում խնդրել էինք 27 շենքի դիմաց ավտոտնակների վրայի էլեկտրական մալուխները ձգել և վթարային հենասյուները ուղղել: Դեռ սպասում ենք: Խնդրում ենք ուշադրության տակ առնել սա, որովհետև այս հատվածով ամեն օր դպրոցական երեխաներ են գալիս-գնում թիվ 187 դպրոց:	Առաջակը «Երևանի զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծին չի վերաբերում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել բնակչի հետ առաջիկա երկուշաբթի օրը հանդիպելու և բարձրացված խնդիրը տեղում ուսումնասիրելու նպատակով:	
10.	Արփինե Մանուկյան (26.11.2018թ., հ. Մ-	Խնդրում եմ տեղեկացնել, թե բնակելի շենքի շինարարության թույլտվության կամ հանձնման ակտի համար ինչպիսի առողջապահական,	Առաջակը «Երևանի զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու	

	10662 դիմում)	սանիտարական և հիգիենիկ նորմատիվներ գոյություն ունեն: Հարցս առաջացել է այն փաստից, որ մեր նորակառույց շենքում իմ բնակարանում աղմուկը գիշերային ժամերին գերազանցում է թույլատրելի մակարդակը բավականին բարձր ցուցանիշով: Այս աղմուկը առաջանում է մերձակա Երևան Սիթիի սառնարանային համակարգի աշխատանքի արդյունքում: Այս աղմուկը այդ տարածքում եղել է Երևան Սիթիի կառուցման օրվանից՝ 10 տարուց ավել, իսկ մեր շենքը սկսվել է կառուցվել է 2 տարի առաջ: Այս ամենի արդյունքում ես բնակարան տեղափոխվելու օրվանից մինչ այսօր՝ մոտ 4 ամիս, չեմ կարողանում հանգիստ քնել իմ բնակարանում և մեծ հավանականությամբ շատ շուտով դատական քաջքշուկի մեջ եմ հայտնվելու Երևանի Սիթիի ամբարտավան տնօրինության հետ, քանի որ մինչ այս պահը հարցը լուծված չի, չնայած իմ գործադրած բոլոր ջանքերին: Այս համակարգերը աշխատում են առանց որևէ դադարի, շուրջօրյա:	որոշման նախագծին չի վերաբերում: Մույն հարցը կարգավորվում է ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. N263-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը» /N 2-III-11.3 Սանիտարական նորմեր «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002 թ. N 138 հրամանով:	
11.	Արթուր Տեր-Գրիգորյան (առցանց դիմում՝ ստացված www.yerevan.am կայքով 23.11.2018թ. S-767 դիմում)	Հնգամյա ծրագրի «ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ» հատվածի 6.1 ժողովրդագրական իրավիճակը, 10-րդ էջ. աղյուսակ 2-ի տակ նշված է «Երևանի բնակչության դինամիկան կայուն աճ է արձանագրել: Բացառությամբ Նորք-Մարաշ վարչական շրջանի՝ մյուս վարչական շրջաններն ունեցել են բնակչության աճի դրական միտում»: Սակայն, փաստացի, աղյուսակում կարելի է տեսնել, որ բացասական միտում ունեն նաև Ավան, Արաբկիր, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վ/շ-ները, իսկ Դավթաշեն վ/շ-ում ստաբիլ վիճակ է:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են հետևյալ փոփոխությունները: Հնգամյա ծրագրի «ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ» հատվածի 6.1 ժողովրդագրական իրավիճակը, 10-րդ էջից հանվել է «Երևանի բնակչության դինամիկան կայուն աճ է արձանագրել: Բացառությամբ Նորք-Մարաշ վարչական շրջանի. մյուս վարչական շրջանները ունեցել են բնակչության աճի դրական միտում:» նախադասությունը:	
12.		7.1 Շինարարություն, 12-րդ էջ. գծանկար 4-ը վնասված է:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:	

13.		<p>Տեխնիկական նկատառումներ</p> <p>8 Գրվածքների տեղաբաշխում.</p> <p>8.1 Էջ 10-ի ստորին մասում գտնվող «Գծանկար 3» գրվածքն իջեցնել հաջորդ` 11-րդ էջի վերին մաս:</p> <p>8.2 Էջ 11-ի ստորին մասում գտնվող «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2016թ. Երևանի շինարարության ծավալները կազմել են ամբողջ հանրապետության ծավալի շուրջ 61.0%-ը:» հատվածն իջեցնել հաջորդ` 12-րդ էջի վերին մաս:</p> <p>8.3 Էջ 14-ի ստորին մասում գտնվող «Աղյուսակ 3» գրվածքն իջեցնել հաջորդ` 15-րդ էջի վերին մաս: Ինչպես նաև շարադրել «Աղյուսակ 5»:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:</p>	
-----	--	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------------------------------------------------------	--

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՍ ԶԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության և/կամ առարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4	5
1.	<p>Ա. Կարապետյան, Գ. Վարդանյան, Գ. Մելքոնյան, Կ. Անտաշյան, Ս. Մկրտչյան «Իմ քայլը» խմբակցության անդամներ</p> <p>14.12.2018թ. գրություն</p> <p>01/26</p>	<p>«հանրապետություն» բառն իներցիայով մնացել է Խորհրդային ժամանակներից, երբ Հայաստանը Սոցիալիստական հանրապետություններից մեկն էր, և տեքստերում նշում էին «հանրապետության»: Հիմա պետք է նշել «երկրի» կամ եթե նշում ենք «հանրապետություն», ապա պետք է լինի Հայաստանի Հանրապետություն:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Ծրագրում կատարվել է համապատասխան փոփոխություն: Ավելացվել է «Հայաստանի» բառը:</p>
		<p>Բազմաբնակարան շենքերի <i>հին և անսարք</i> վերելակների հիմնախնդրի լուծում:</p> <p>Առաջարկվում է ավելացնել <i><հին և անսարք></i> բառերը:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p> <p>Երևանի զարգացման 2019 թվականի գերակայություններ բաժնում «Հին և անսարք» բառերի ներառումը նպատակահարմար չէ:</p> <p>Համապատասխան ծրագրի մշակման</p>	

			փուլում տեխնիկական բնութագրում և նկարագրում կտրվեն բոլոր մասնագիտական ձևակերպումները:	
2.		<i>բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում:</i> Գերակայություններում այս ձևակերպումն անորոշ է, և պարզ չէ թե ինչ նկատի ունենք	Առաջարկն ընդունվել է: Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում գերակայության իմաստը հետևյալն է՝ Շենքերի և բակային տարածքների բարեկարգման և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովմանն ուղղված աշխատանքները հանդիսանում են գերակա ուղղություն:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
3.		«Գլխավոր հատակագիծ» չէ, պետք է մշակվի գոտեւորման հատակագիծ (Zonning plan), ավելի ճիշտ, մեկնարկեն մշակման աշխատանքները	Առաջարկն ընդունվել է: Սակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
4.		<i>Երևան քաղաքի 33-րդ թաղամաս</i> Շատ վատ ծրագիր է: Ընդհանրապես, նմանատիպ բոլոր խոշոր ծրագրերը պետք է վերանայվեն եւ անպայման հաստատվեն ավագանու կողմից՝ բազմակողմանի էքսպերտային ուսումնասիրության եւ հանրային քննարկումներից հետո:	Առաջարկը չի ընդունվել: Երևանի 33-րդ թաղամասի ծրագիրը նույնպես հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից համաձայնեցվել է թաղամասի կառուցապատման սխեման: Երևան համայնքի կողմից ծրագրի վերանայման և ավագանու կողմից հաստատման Ձեր ներկայացված առաջարկը պետք է քննարկվի	

			իրավական հարթության մեջ, որից հետո անդրադառնալ դրա քաղաքաշինական լուծումների քննարկմանը:	
5.		Ոչ մի գլխավոր հատակագիծ, այլ գոտեւորման: Պետք է անցում կատարել քաղաքաշինական ոլորտում նախագծման, կառավարման եւ որոշումներ կայացնելու ժամանակակից եղանակների: Գոտեւորման (zoning) գործիքների միջոցով ցանկացած հողակտոր կամ կառույց կստանա կարգավիճակ, որի մասին տեղեկությունը կլինի բաց եւ հասանելի, կնվազեն կոռուպցիոն ռիսկերը, ցանկացած ներդրող հստակ կտեղեկանա ինչ հնարավորություններ եւ սահմանափակումներ կան քաղաքի ցանկացած հատվածում:	Առաջարկը ընդունվել է: Սակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
6.		<i>Մայրաքաղաքի ճարտարապետական կերպարի ձևավորման անհրաժեշտություն</i> Անհասկանալի ձեւակերպում է: Քաղաքը արդեն ունի կերպար:	Առաջարկն ընդունվել է: Այո քաղաքն ունի կերպար, բայց խոսքը վերաբերվում է մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածներին, որոնք անհրաժեշտ է հնարավորության դեպքում ներդաշնակեցնել քաղաքի կերպարին, կամ գտնել լուծումներ դրանք ամբողջականացնելու համար:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն:
7.		<i>Չենքերի արտաքին տեսքի կարգաբերման ծրագրերի իրականացման անհրաժեշտություն:</i> Անհասկանալի եզր է, ի՞նչ է նշանակում, կարգի բերել	Առաջարկն ընդունվել է:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և

				<p>շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն:</p>
<p>8.</p>		<p><i>Նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացառելու հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատումը և դրա արդյունքում հանրային շահի ոտնահարումը:</i> Առաջարկում ենք լրացնել այսպես. Բացառվելու է կապիտալ շինարարությունը հանրային տարածքներում եւ կանաչ գոտիներում: Հանրային կանաչ տարածներում նախկինում տրված վարձակալման պայմանագրերը կուսումնասիրվեն: Կմեկնարկի պուրակների եւ այգիների մաքրման եւ տարատեսակ կառույցներից ազատելու երկարաժամկետ փուլային ծրագիր, որպես պիլոտային նախագիծ գործընթացը կսկսվի Օդակաձեւ այգուց, Մոսկովյան-Տերյան պուրակից եւ Հրազդանի կրճից: Բացառվելու է որեւէ ծրագրի իրականացում համայնքային ընդհանուր օգտագործման տարածքներում (բակերում)՝ առանց բնակիչների մեծամասնության գրավոր համաձայնության</p>	<p>Առաջարկն ընդունելի է մասամբ: Առաջին նախադասությամբ արտահայտված առաջարկը ընդունելի է: Երկրորդ նախադասությամբ՝ բնակիչների համաձայնության հետ կապված թեմայի վերաբերյալ տեղկացնենք, որ գործում է ՀՀ կառավարության կողմից ընդունված 28.10.1998թ. N660 որոշումը «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» , հետևաբար այս հարցը պետք է քննարկել նաև այդ որոշմամբ հաստատված կարգի դիտարկմամբ և այլ նոր, պարզ մշակվելիք մեխանիզմների կիրառմամբ:</p>	<p>Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:</p>
<p>9.</p>		<p><i>Կբացառվի ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը նոր կառուցվող ապօրինի կառույցների նկատմամբ:</i> 2019-ից հետո՞ կառուցվող,</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Սկսած 2019թ. վերանայվելու նախկինում գործընթացի հիմք հանդիսացող ՀՀ կառավարության որոշումը:</p>	

		<p>Ժամանակահատվածը պարզ չէ: Նաև պարզ չէ, թե արդյոք միայն կառուցման ժամանակի՞, թե՞ նաև վայրի կամ այլ չափորոշիչներով է բացառվելու օրինականացումը: Առաջարկում եմ հստակեցնել</p>		
10.		<p>Նախատեսվում է մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն (<i>City Development Strategy</i>), Առաջարկվում է լրացնել հետևյալ անգլերեն ձևակերպումը նախադասության մեջ:</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Առաջարկվող լրացման՝ «City Development Strategy» կատարումն ընդունելի է:</p>	<p>Ավելացվել է նախադասությունում (<i>City Development Strategy</i>) անգլերեն տերմինը:</p>
11.		<p><i>Անցումները հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, կլինեն լուսավորված և անվտանգ:</i></p> <p>Ժամանակակից քաղաքներում վաղուց փորձարկվել է լայնորեն կիրառվում են փողոցների վերակառուցման եւ վերակահավորման արդի մեթոդներ, որոնց արդյունքում մայրերը լայնանում են, ավելանում է կանաչապատ տարածքը, մեքենաների կայանելը դառնում է անվտանգ եւ հարմար, հատկացվում են արահետներ հեծանիվների համար: Քննարկվելու է երկարաժամկետ եւ փուլային ծրագիր իրականացնելու հնարավորությունը: Քննարկել որոշ փողոցները մշտապես կամ պարբերաբար հետիոն դարձնելու հնարավորությունը</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:</p>

12.		<p><i>Նախատեսվում է իրականացնել Երևանի «Փոքր կենտրոնի» սահմանների նախագծի մշակում («Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հաստատումից հետո):</i></p> <p>Անիմաստ բան է Եթե մշակվի գոտետրման հատակագիծ, բոլոր հարցերի պատասխանները հստակ կձևակերպվեն, բոլոր չափանիշները, սահմանները եւ այլն ստատումից հետո):</p>	<p>Առաջարկը ընդունվել է: Սակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:</p>	<p>Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:</p>
13.		<p><i>«Հին Երևան»</i></p> <p>Լրջորեն պետք է վերանայել նախագիծը, որը, ի դեպ, դեռ հաստատված չէ</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: «Գերակա հանրային շահ» գործիքի կիրառումը Երևան քաղաքում կունկրետ «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծման ծրագրի թեմայով, կիրառվել է նախկինում ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներով և ներկայումս շրջանառության մեջ դրված է նաև դրա ընթացքի հետ կապված նոր ՀՀ կառավարության որոշման նախագիծ:</p>	
14.		<p><i>Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագիրը կյանքի կոչելու համար ՀՀ կառավարության 22.03.2018թ. N332-Ն «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ ձանաչելու մասին» որոշմամբ տարածքում առկա գույքերի օտարման գործընթացով (որի համար սահմանված ժամկետ է 2023թ. հունվարի 1-ը) 2019</i></p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Երևանի 33-րդ թաղամասի ծրագիրը նույնպես հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից համաձայնեցվել է թաղամասի կառուցապատման սխեման: Երևան համայնքի կողմից ծրագրի վերանայման և ավագանու կողմից հաստատման Ձեր ներկայացված</p>	

		<i>թվականին նախատեսվում է իրականացնել նշված աշխատանքները ներդրողների կողմից:</i> Շատ վատ նախագիծ է:	առաջարկը պետք է քննարկվի իրավական հարթության մեջ, որից հետո անդրադառնալ դրա քաղաքաշինական լուծումների քննարկմանը:	
15.		<i>նոր անցումների կառուցում:</i> առաջարկվող լրացում:	Առաջարկը չի ընդունվել: Քանի որ նշված կետը ամբողջությամբ հանվել է հանրային լուծումների ընթացքում:	
16.		<i>առաջին զանգվածային տիպարային բնակելի շենքերի և թաղամասերի վերակառուցման հիմնախնդիրների լուծում:</i> Այս մասն անհասկանալի է՝ խոսքը հի՞ն շենքերի ու թաղամասերի վերակառուցման (վերանորոգման) մասին է, թե՞ նորերի կառուցման: Միաժամանակ իրատեսական չէ, որ մեկ տարում հիմնախնդիրը կլուծվի: Առաջարկում ենք ձևակերպումը հստակեցնել:	Առաջարկը չի ընդունվել: Հարցը վերավերվում է ծրագրային մշակումներին, այլ ոչ թե իրականացմանը:	
17.		Ավելացնել նոր կետ <i>գերեզմանոցների խնդիրը, մշակվելու են նոր կարգավորումներ, խիստ վերահսկողություն, նոր տարածքները պարտադիր, իսկ գոյություն ունեցողները հնարավորության սահմաններում անջատվելու են ծառապատ գոտիներով:</i>	պատրաստական ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
18.		Ավելացնել նոր կետ <i>Մշակույթի նախարարության հետ</i>	պատրաստական ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան	

		<p>միասին պետության կողմից պաշտպանվող կվերանայենք Երևանի տարածքում գտնվող հուշարձանների ցանկը: Կարելոք է նաև որ պահպանվել ժառանգությունը ոչ թե որպես առանձին շենքեր այլ որպես պատմական միջավայր, նույնիսկ եթե այն խաթարված է</p>	<p>քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:</p>	
19.		<p>Ավելացնել նոր կետ Քաղաքաշինության փաստաթղթավորման համակարգի բարեփոխում՝ որը կներառի քաղաքային իշխանության գործառույթների հստակեցում, ինչպես՝ նոր լիազոր քաղաքաշինական խորհուրդի ստեղծում, որոշում ընդունելու մեխանիզմների հստակեցում, մեծածավալ քաղաքաշինական որոշումների ընդունման քաղաքական պատասխանատվության անհրաժեշտություն /ավագանու որոշման միջոցով/, վերահսկողության նոր մեխանիզմի ներմուծում, և այլն:</p>	<p>պատրաստական ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:</p>	
20.		<p>Ավելացնել նոր կետ այսուհետ կբացառվի քաղաքացիների գույքի կամ հողի օտարումը որևէ ծրագիր իրականացնելու համար «պետության գերակա շահ» հիմնավորումով, բացառությամբ ազգային անվտանգության կամ ռազմավարական նշանակության բացառիկ դեպքերից: Կարիք կա նաև</p>	<p>պատրաստական ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և</p>	

		<i>վերանայել նախինում հանրային գերակա շահ հայտարարված տարածքների խնդիրը:</i>	հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
21.		<i>Ավելացնել նոր կետ հատուկ ուշադրություն ենք դարձնելու Երևանի պահպանված պատմական հատվածներին, այդ թվում Կոնդին</i>	պատրաստական ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
22.		<i>Ավելացնել նոր կետ Կենտրոնում այսուհետ չեն կառուցվի բազմահարկ բնակելի շենքեր, գոյություն ունեցող, բայց դեռ չիրականացված նախագծերը կվերանայվեն օրինականության տեսակետից իրականացնել Երևանի շենքերի մաքրման, վերականգման, կցակառույցներից ազատելու, միասնական տեսքի բերելու երկարաժամկետ փուլային ծրագիր, որը հիմնված կլինի գիտական մասնագիտական նախագծերի վրա եւ կֆինանսավորվի հատուկ ստեղծվող հիմնադրամի կողմից:</i>	պատրաստական ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
23.		<i>Ավելացնել նոր կետ Վերանայել Երևաննախագիծ ինստիտուտի գործառնությունները, կառուցվածքը</i>	պատրաստական ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային	

			ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
24.		<i>Արտաքին ձևավորման միասնական չափանիշների ձևավորման անհրաժեշտություն բնակիչների մասնակցության ապահովմամբ:</i> Չեմ կարծում , որ լավ միտք է այս հարցը թողնել բնակիչների հույսին: Այն, ինչ հիմա տեսնում ենք, հենց բնակիչների մասնակցությամբ է արվել: Սա խիստ մասնագիտական որոշումների հարց է	Առաջարկը չի ընդունվել: Հիմնախնդիրն առնչվում է միջպետական, հանրապետական միջոցառումների ժամանակ արդեն խակ հաստատված ձևավորման չափորոշիչների (էսքիզների) համապատասխան բնակչության ներգրավածությանը սահմանված կարգի համաձայն օժանդակելու, աջակցելու միջոցառումների ձևավորմանը՝ էլ ավելի տոնական տեսք ապահովելու, բազմաբնակարան շենքերի պատշգամբների, խանութների և այլ օբյեկտների ձևավորմանը մասնակցության համար:	
25.		<i>Ֆասադային հատվածների, կամարանցումների վերանորոգման, նկարազարդման անհրաժեշտություն</i> Ֆասադային բառը փոխարինել Ճակատային բառով:	Առաջարկն ընդունվել է:	Նշված նախադասության մեջ ֆասադային բառը փոխարինվել է ճակատային բառով:
26.		<i>Ֆասադային հատվածների, կամարանցումների վերանորոգման, նկարազարդման անհրաժեշտություն</i> Պետք չէ, որ պետությունը զբաղվի նկարազարդումով, շատ վատ արդյունքներ ունենք, գրեթե 99% սարսափելի են, այն պարագայում, որ	Առաջարկը չի ընդունվել: Հարցն առնչվում է ոչ թե «փողոցային արվեստին», այլ շենքերի ճակատների հատվածները անհրաժեշտության դեպքում ավելի հետաքրքիր դարձնելուն և միապաղաղությունից դուրս գալուն, ավելի գողտրիկ	

		<p>փողոցային արվեստը /street art/ արդեն ձևավորված լուրջ տեսակ է զարգացած քաղաքներում, մեր մոտ հիշեցնում է վատ և սիրողական մի բան</p>	<p>անկյունները նկարազարդելուն: Կամարանցումների նկարազարդումն իր մեջ ներառում է առջին հերթին վերանորոգման աշխատանքներ և հետո միայն հետաքրքիր միջավայրի ստեղծագործություն՝ նկարազարդման միջոցով: Աշխատանքներն իրականացվում են մրցույթային կարգով:</p>	
27.		<p><i>Նախատեսվում է իրականացնել համապատասխան աշխատանքներ ուղղված արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնի կազմակերպմանը:</i> Պարզ չէ թե այս փառատոնն ինչով է քաղաքի համար կարևոր, առաջարկում եմ պարզաբանել</p>	<p>Առաջարկն ընդունված է: Արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնը ծանոթությունների հարթակ է միջազգային հեղինակավոր գովազդային կազմակերպությունների հետ: Կազմակերպվող վարպետության դասերի ընթացքում ուսանողները, գովազդային կազմակերպությունների ներկայացուցիչները ծանոթնում են գովազդային նոր ուղղություններին:</p>	<p>Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:</p>
28.		<p><i>Կշարունակվեն օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքները, կշարունակվի խիստ հսկողությունը մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:</i> Անհրաժեշտ է նաև հանել փողոցներում տեղադրված այն վահանակները, որոնք խանգարում են քաղաքի կարևոր</p>	<p>Առաջարկն ընդունված է: Աշխատանքներն ընթացիկ են և ուղղված են ինքնակամ կամ ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերմանը և ապամոնտաժմանը: Նախատեսվում է մշակել Երևան քաղաքի գովազդի սխեման, որտեղ կվերանայվեն գովազդի չափորոշիչները: Գովազդի սխեմայի մշակման ընթացքում նախատեսվում է համագործակցել գլխավոր ճարտարապետի, գովազդային,</p>	<p>Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:</p>

		առանցքների և համայնապատկերի միասնական ընկալմանը: Քննարկել ճարտ. վարչության և գլխ. ճարտարապետի հետ	իչնպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:	
29.		<p><i>Կիրականացվի կամարանցումների վերանորոգում և գունազարդում՝ Երևանի կամարանցումների պատշաճ և գեղեցիկ տեսքն ապահովելու նպատակով: Կիրականացվի կամարանցումների գույքագրման աշխատանքներ, կսահմանվի դրանց վնասվածության աստիճանը, որի հիման վրա կիրականացվեն վերանորոգման և գունազարդման աշխատանքներ:</i></p> <p>Ինչպես գրել եմ վերևում, դեմ եմ, այս գունազարդումը չունի որևէ գեղարվեստական արժեք և հակասում է շենքերի ճարտարապետական տեսքին Կա՛մ մրցութային կարգով պետք է որոշվի</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p> <p>Կամարանցումների նկարագրումն իր մեջ ներառում է առջին հերթին վերանորոգման աշխատանքներ և հետո միայն հետաքրքիր միջավայրի ստեղծագործություն՝ նկարագրումն միջոցով: Աշխատանքներն իրականացվում են մրցութային կարգով:</p>	
30.		<p><i>վարչական շրջանների կողմից իրականացվելու են նկարագրման աշխատանքներ քակային տարածքներում:</i></p> <p>Բակերի Բարեկարգումը պահանջում է ձեռնարկել շատ ավելի կարելու քայլեր, նկարագրումը ուղղակի միջոցների մսխում է</p> <p>Կա՛մ մրցութային կարգով պետք է որոշվի, կա՛մ հատուկ հանձնաժողովի որոշմամբ, որպեսզի որակյալ և ներդաշնակ գործեր լինեն: Լրացուցիչ հստակեցման կարիք կա:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p> <p>Մայրաքաղաքի համաչափ զագացման սկզբունքից ելնելով վարչական շրջանների քակային տարածքների գեղագիտական ձևավորումը և քակային տարածքներում նկարագրումն աշխատանքներն իրականացվում են մրցութային կարգով:</p>	
31.		<i>Մետաղյա հենասյունների</i>	Առաջարկն ընդունվել է:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում

		<p>վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է մետաղյա հենասյուները զերծ պահել գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշաներ և հայտարարություններ կպցնելուց, կպահպանվի նաև սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:</p> <p>խնդրում եմ հատակեցնել, ինչ երեսպատելու մասին է խոսքը: Միզուցե, հատուկ ներկի՝</p>	<p>Հենասյուները ներկվում են հատուկ ներկով, որը հնարավորինս բացառում է ինքնակաշտուկ կամ սոսնձի օգտագործմամբ հայտարարությունների փակցնելուն:</p>	<p>«երեսպատել» բառը փոխարինվել է «ներկվել» բառով:</p>
32.		<p>Մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է մետաղյա հենասյուները զերծ պահել գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշաներ և հայտարարություններ կպցնելուց, կպահպանվի նաև սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:</p> <p>գրաֆիտիի ց</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Գրաֆիտը դա ձեռքի օգտագործման համար ճնշման ազդեցությամբ ներկման միջոց է:</p>	
33.		<p>Ավելացնել նոր կետ Առաջարկում եմ վերանայել շինհրապարակների պարիսպների վրա փակցվող պաստառների ձևն ու բովանդակությունը, օրինակ վերցնելով արտասահմանյան հաջողված փորձը,</p>	<p>Առաջարկն ընդունվել է: Շինհրապարակներն առանձնացնող պաստառների ձևավորման մեջ ներառվում է նաև որպես պարտադիր պայման տեղեկատվություն կառուցապատողի, նախագիծը</p>	<p>Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:</p>

		<p>այդ պաստառները պետք է տան ապագա կառույցի լիարժեք պատկերը, կարևոր գծագրերը, պատվիրատուների, նախագծողների, կապալառուների մասին ամբողջական տեղեկություններ</p>	<p>կատարող կազմակերպության, կապալառուի, տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների անվանումները, ինչպես նաև ներկայացվում է ապագա կառույցի լիարժեք պատկերը:</p>	
34.		<p><i>Կիրականացվի Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից և ակոհողային խմիչքների, ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների, տեղական տուրքերի մուտքերի նկատմամբ անհրաժեշտ հսկողություն և Երևանի բյուջեի համապատասխան մուտքերի ապահովում:</i></p> <p>Քաղաքում (այդ թվում Կենտրոնում) կան բազմաթիվ «մերսման սրահները», որոնք իրականում մոթելներ են և/կամ այլ տիպի ծառայություններ են մատուցում: Բնակելի թաղամասերում, շենքերի մոտ շատ կան, գիշերները</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Երևան քաղաքում մերսման սրահների գործունեության համար Երևանի քաղաքապետարանը և վարչական շրջանների ղեկավարների կողմից թույլտվություններ չեն տրվում, իսկ նշված «կոֆիների և տեսարանների» դեպքում անհրաժեշտ է դիմել ՀՀ ոստիկանությանը:</p>	

		<p>պարբերաբար կռիվներ ու տեսարաններ են լինում, սա ինչ-որ կերպ պետք է կանոնակարգվի: Առաջարկում եմ դրանց գործունեության կանոնակարգման աշխատանքներ նախատեսել (հետագայում կորոշվի՝ ըստ ժամերի կամ այլ չափանիշներով)</p>		
35.		<p><i>Կիրականացվի թափառող կենդանիների հիմնախնդրի լուծման ձևաչափի կիրառում՝ հանրային կարծիքից էլնելով:</i></p> <p>Ինչ ձևաչափի մասին է խոսքը: Մեր նախընտրական ծրագրում ամրագրված էր ստերջացման մեթոդը, որը միջազգայնորեն ընդունված ամենաարդյունավետ և հումանիստական մեթոդն է: Ստերջացումն են խորհուրդ տալիս միջազգային ճանաչված կազմակերպությունները, կիրառում՝ զարգացած երկրները: Առաջարկում եմ նոր լուծումներ չփնտրել, վերջնականապես հստակեցնել, որ խոսքը ստերջացման մասին է (եթե մասնագետները խորհուրդ կտան, որոշ, հստակ սահմանված դեպքերում նաև քննեցման):</p>	<p>Առաջարկը ընդունվել է:</p>	<p>Բնապահպանության ոլորտում նախադասությունը վերախմբագրվել է հետևյալ կերպ: «Թափառող շների գլխաքանակի կառավարման համար կկիրառվի բացառապես ստերջացման մեթոդը:»</p>
36.		<p>Ավելացնել նոր կետ <i>Նախատեսվում է վարչական շրջաններում ունենալ համատիրությունների հարցերով զբաղվող առնվազն մեկ մասնագետ, որը բնակիչներին կտա</i></p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Բոլոր վարչական շրջաններում կան առանձնացված մասնագետներ, որոնք զբաղվում են ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման</p>	

		<p>խորհրդատվություն և կցուցաբերի օգնություն, կկազմակերպի հանդիպումներ՝ համատիրությունների վերաբերյալ նրանց իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, կհավաքագրի առկա խնդիրները՝ հետագա օրենսդրական փոփոխությունների համար</p>	<p>ընդհանուր վերահսկողությամբ, ինչպես նաև ցուցաբերում են մեթոդական օգնություն բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին</p>	
37.		<p>Ավելացնել նոր կետ Նախաձեռնել բազմաբնակարան շենքերի աղբամուղերի փակման գործընթաց՝ էլնելով սանիտարահիգիենիկ, առողջապահական նկատառումներից:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Բազմաբնակարան շենքերի աղբամուղերը համարվում են բաժնային սեփականություն և աղբամուղը կարող է փակվել իրենց համաձայնությամբ սեփականատերերի ժողովի որոշմամբ:</p>	
38.		<p>Նախատեսվում է այլընտրանքային, բնապահպանական տեսանկյունից անվտանգ տրանսպորտային միջոցների (էլեկտրամոբիլներ, էլեկտրաավտոբուսներ) կիրառում, էլեկտրատրանսպորտի խթանում: Պարզ չէ, թե ինչպես է նախատեսվում կիրառումը, հնարավո՞ր է եղած էլեկտրաավտոբուսները փոխարինել նորերով: Առաջարկում եմ պարզաբանել</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Էլեկտրաավտոբուսների կիրառման հնարավորության հարցը նախատեսվում է դիտարկել Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման աշխատանքների ընդհանուր համատեքստում: Երևանի ներհամայնքային կանոնավոր փոխադրումներում էլեկտրաավտոբուսներ չեն շահագործվել և չեն շահագործվում:</p>	
39.		<p>Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շինությունների և տարածքների քարտեզագրման անհրաժեշտություն Հիմնախնդիրը նուև-երի անհամաչափ բաշխվածությունն է և տարողունակության</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: 2019 թվականին թվով 13 մանկապարտեզներում նախատեսվում է ձևավորել 14 խումբ /Արաբկիր, Աջափնյակ, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Սալաթիա-Մեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ</p>	

		<p>անհամաչափությունը շրջապատի բնակչության թվի համապատասխան: կան ամբողջական թաղամասեր, որ շրջակա նույն չկա, և անհրաժեշտություն է դրանց համաչափությանը հասնել՝ որպես առաջին քայլ թերևս դիտարկել՝ քարտեզագրումը:</p>	<p>Վ/Շ-ում/՝ հիմք ընդունելով մանկապարտեզներում հերթագրված երեխաների թիվը և տարածքների առկայությունը: Նուբարաշեն վ/շ-ում գործելու է նոր մանկապարտեզ՝ 4 խմբով:</p> <p>Մանկապարտեզների շենքերի տարածքներից վարձակալությամբ կամ անհատույց այլ սուբյեկտներին տրամադրված տարածքների ազատում /պայմանագրերի ժամկետները լրանալու, ինչպես նաև ապօրինի զբաղեցնելու պարագայում/: Նախատեսվում է մանկապարտեզների ազատ տարածքների, ինչպես նաև անբարեկարգ վիճակում գտնվող ազատ խմբասենյակների քարտեզագրում, ինչի հիման վրա կատարվելու է նոր խմբերի ձևավորում:</p>	
40.		<p><i>Սոցիալական ապահովության տեքստից տպավորություն է ստեղծվում, որ Երևանում խոցելի խումբ են միայն հաշմանդամություն ունեցող անձինք և անօթևանները:</i></p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Փոփոխությունները կատարվել են ծրագրի համապատասխան մասերում:</p> <p>Ծրագրում ավելացվել է հետևյալը.</p> <p>Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող</p>

				<p>ընտանիքների, բնակարանագուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից:</p>
41.		<p>Ինչպիսի՞ սոցիալական խնդիրներ են առանձնացված, որո՞նք են ռիսկի խմբերը, ի՞նչ վիճակագրություն կա: Այստեղից հասկանալի չի դառնում, թե ինչ իրավիճակ ունենք հիմա և ինչ է պետք անենք, որպեսզի այն շտկվի:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Փոփոխությունները կատարվել են ծրագրի համապատասխան մասերում:</p> <p>Մասնավորապես՝</p> <p>Հաշվի առնելով երկրում աղքատության զգալի մակարդակը և այն, որ հասարակության կարիքավոր խավը որպես կանոն ավելի շատ է ենթակա ռիսկերի, քանի որ դրանց դիմակայելու համար չունի անհրաժեշտ չափով ռեսուրսներ, ուստի Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրում նախատեսված՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերը նպատակաուղղված են լինելու ռիսկերի կանխարգելմանը՝ ընտանիքի աղքատության, հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, ծնողազրկության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան</p>

				<p>վերաբերմունքի, բռնության, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատագրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու և այլ պատճառների հետևանքներով կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց աջակցությանը՝ դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու նպատակով: Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական ինամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանագուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից:</p>
--	--	--	--	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

42.		<p>Ծրագրում ոչ մի խոսք չկա սոցիալական աջակցության համակարգի խնդիրների և դրանց կայացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Ողջ քաղաքն ունի ընդամենը մեկ սոցիալական աշխատող, մինչդեռ գործուն սոցիալական աջակցության համակարգ ստեղծելու համար էական է սոցիալական աշխատողների թվի մեծացումը: Մեկ այլ կարևոր բաղադրիչ է սոցիալական աջակցության տարածքային բաժինների և վարչական շրջանների սոցիալական հարցերով բաժինների սերտ համագործակցությունը սոցիալական աջակցության դեպքի վարման և համագործակցության ցանցերի շրջանակներում: Վարչական շրջանների համապատասխան բաժինների աշխատակիցներն ունեն սոցիալական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների մասին ուսուցման կարիք: Ողջ համակարգը խարսխված է դրամական աջակցություն տրամադրելու սկզբունքի վրա, մինչդեռ բնակիչների խնդիրները դրանով չեն լուծվում:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Ներկայացված են առկա խնդիրները և ձուլոյությունը կատարված է ծրագրի համապատասխան մասերում</p> <p>Ծրագրում ավելացվել է հետևյալը.</p> <p>Կարևոր խնդիր է նաև սոցիալական աջակցության համակարգի մի շարք խնդիրների /վարչական շրջանների, սոցիալական բաժինների աշխատողների ժամանակակից սոցիալական աշխատանքի, սոցիալական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների կիրառման վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպումը, նրանց և ՄՍՏ-ների մասնագետների տունայցի դեպքերում գործուղման ծախսերի նախատեսումը, յուրաքանչյուր վարչական շրջանում առնվազն մեկական «Սոցիալական աշխատողի» հաստիքների ստեղծումը՝ սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումը, քանի որ հասարակության գերակշիռ մեծամասնությունը սոցիալական աշխատանքն ընկալում է որպես դրամական վճարների նշանակում/ լուծումը: Սոցիալական աշխատողների կրթական ցենզի բարձրացումը և դերային բաշխվածությունը նպաստելու է պետության ազգային սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացմանը, քաղաքացիների սոցիալական իրավունքների իրացմանը:</p>
43.		<p><i>Ոլորտում առկա խնդիրների համատեղ</i></p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Ներկայացված են</p>

		<p>լուծման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Երևանի քաղաքապետարանը համագործակցում է սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ:</p> <p>Որոնք են այդ կազմակերպությունները, ի՞նչ հիմքով է համագործակցությունը. ֆինանսական, մասնագիտական, այլ:</p>		<p>կազմակերպությունները և համագործակցության սկզբունքները :</p> <p>Ծրագրում ավելացվել է հետևյալը.</p> <p>Ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Երևանի քաղաքապետարանը, վարչական շրջանների համապատասխան բաժինները համագործակցում են սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող ակտիվ հասարակական կազմակերպությունների հետ՝ համատեղ սոցիալական ծրագրերի իրականացման նկատառումով: Մասնավորապես՝ Գերմանական Կարմիր Խաչի հայաստանյան մասնաճյուղի հետ, Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորմամբ գործում են Քանաքեռ-Զեյթունի «Հուսո տունը» /բարեգործական ճաշարան և ցերեկային կենտրոն/, Էրեբունի, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում «արտագնա խոհանոց»: «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ 6 վարչական շրջաններում Երևան համայնքի կողմից անվարձահատույց տրամադրված տարածքներում կազմակերպվել են բարեգործական ճաշարաններ, բացառությամբ Աջափնյակ վարչական շրջանի, որտեղ տեղի վարձավճարը տրամադրվում է Երևան համայնքի կողմից: «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» ԲՀ հետ Արաբկիրի</p>
--	--	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

				<p>բարեգործական ճաշարանը, որին տրամադրվում է համաֆինանսավորում կոմունալ ծախսերի փոխհատուցման համար: Մալաթիա-Սեբաստիայի, Արաբկիրի և Նոր Նորքի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գտնվող բարեգործական ճաշարաններին համաֆինանսավորում չի տրամադրվում, սակայն կա փոխգործակցություն:</p> <p>Նմանօրինակ համագործակցության արդյունքում կարիքավոր շուրջ 2300 շահառուներ տաք ճաշ են ստանում:</p>
44.		Հաշմանդամություն ունեցող քանի անձ է հաշվառված Երևանում և ինչ են ներառում տարաբնույթ սոցիալական ծրագրերը:	Առաջարկն ընդունվել է:	<p>Ծրագրում ավելացվել է հետևյալը.</p> <p>2018 թվականի տվյալներով մայրաքաղաքում հաշվառված են ավելի քան 57000 հաշմանդամություն ունեող անձիք, որոնցից ավելի քան 2300 երեխաներ են, ընդհանուր թվից ավելի քան 27000-ը իգական սեռի ներկայացուցիչներ են:</p>
45.		Քանի հատ թեքահարթակ է կառուցվել մինչ օրս:	Առաջարկն ընդունվել է:	<p>Ծրագրում ավելացվել է հետևյալը.</p> <p>2013-2018թթ. կառուցվել են շուրջ 5000 թեքահարթակներ, որից շուրջ 300-ը մասնավորի կողմից, քաղաքապետարանի առաջարկությամբ ՃՈ կողմից 61 խաչմերուկներում տեղադրվել են փողոցային ձայնային ազդանշաններով լուսացույցներ, 128 հատվածներում տեղադրվել են գոգավոր սալիկներ և այլն/:</p>
46.		Սոցիալական ապահովության	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելացվել է հետևյալը.

		<p>հիմնախնդիրները չեն կապվում վերևում նկարագրված տեքստի հետ. տարեցների, սիրիահայերի, բազմազավակ ընտանիքների մասին որևէ խոսք չկա:</p>		<p>Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանագուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից: Հենց այստեղ է ծագում պետության /տվյալ դեպքում համայնքի/ կարգավորիչ դերը:</p>
47.		<p><i>Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման անհրաժեշտություն</i> Քանի վարչական շրջանում ներդրման մասին է խոսքը:</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Ավելացվել է պարբերություն հետևյալ խմբագրությամբ:</p> <p>Սոցիալական աշխատանքի դերը, բովանդակությունը, ինչպես նաև լիազորությունների շրջանակը ավելի հստակ սահմանելու և «չափելի» դարձնելու համար գնալով ավելի հրատապ և արդիական է դառնում սոցիալական ծառայությունների ինտեգրումը Երևանի 12 վարչական</p>

				<p>շրջաններում: Ներկայումս Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Մալաթիա-ՍԵբաստիա վարչական շրջաններում գործում են սոցիալական ծառայություններ մատուցող համալիր կենտրոններ, որոնք հարմարավետ են և մատչելի բնակչության համար ծառայությունների մատուցման տեսանկյունից: Սակայն դեռևս խնդիր է այդ ծառայությունների ոչ միայն ֆիզիկական, նաև տեխնիկական և տեղեկատվական հոսքերի փոխանակման տեսանկյունից, որպեսզի համակարգի ներդրման շրջանակներում վերաիմաստավորվի սոցիալական աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև սոցիալական աշխատողի տեղն ու դերը հասարակական հարաբերություններում:</p> <p>2019 թվականին նախատեսվում է Շենգավիթի համալիր կենտրոնի բացումը, մյուս վարչական շրջաններում նույնպես խնդիրը օրակարգային է:</p>
48.		<p><i>Տոնական և հիշատակի օրերի /կանանց միջազգային օրվա մարտի 8-ի, մայրության և գեղեցկության օրվա ապրիլի 7-ի, ապրիլի 24-ի հիշատակի օրվա, մայիսի 8-ի, 9-ի Շուշիի ազատագրության, ինչպես նաև Մեծ հայրենականում տարած հաղթանակի, ընտանիքի օրվա մայիսի 15-ի, տարեցների միջազգային օրվա հոկտեմբերի 1-ի, հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա</i></p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Պարբերությունը խմբագրվել է հետևյալ կերպ:</p> <p>Տոնական և հիշատակի օրերի /կանանց միջազգային օրվա մարտի 8-ի, մայրության և գեղեցկության օրվա ապրիլի 7-ի, ապրիլի 24-ի հիշատակի օրվա, մայիսի 8-ի, 9-ի Շուշիի ազատագրության, ինչպես նաև Մեծ հայրենականում տարած հաղթանակի, ընտանիքի օրվա մայիսի 15-ի,</p>

		<p>դեկտեմբերի 3-ի/ կապակցությամբ նախատեսվում են իրականացնել սոցիալական նշանակության տարաբնույթ ծրագրեր՝ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անձանց, ընտանիքների համար, որոնց կտրամադրվեն նաև աջակցություններ: Կրկին՝ ի՞նչ ծրագրերի մասին է խոսքը, և ի՞նչ է նշանակում՝ կտրամադրվեն աջակցություններ</p>		<p>տարեցների միջազգային օրվա հոկտեմբերի 1-ի, հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա՝ դեկտեմբերի 3-ի/ կապակցությամբ նախատեսվում են իրականացնել սոցիալական նշանակության տարաբնույթ ծրագրեր՝ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անձանց, ընտանիքների համար, որոնց կտրամադրվեն նաև տարաբնույթ /դրամական, պարենային, սոցիալ-մշակութային/ աջակցություններ:</p>
49.		<p>Ժամկետային զինծառայողներ ունեցող երևանաբնակ ավելի քան 2000 ծնողների համար կկազմակերպվեն այցելություններ՝ ՀՀ և Լեռնային Ղարաբաղի հանրապետության սահմանամերձ գործառնա՝ իրենց զինծառայող որդիներին տեսակցելու նպատակով:</p> <p>Խոսքը անապահով ընտանիքների՝ մասին է, և նրանք ինչպե՞ս են որոշվում: Իսկ եթե անապահովների մասին չէ, ապա անհասկանալի է, թե համայնքն ինչու է նման միջոցառման վրա միջոցներ ծախսում: Անհրաժեշտ է պարզաբանել</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p> <p>Խոսքը վերաբերում է սահմանամերձ գործառնա՝ ծառայող զինծառայողների երևանաբնակ այն ընտանիքներին, որոնք ցանկություն են հայտնում մասնակցել ծրագրին:</p> <p>Հաշվի առնելով ծրագրի ոչ միայն սոցիալական նաև բարոյական կշիռը՝ տարանջատում չի դրվում ծնողների սոցիալական կարգավիճակի առումով:</p>	
50.		<p>Տարեցների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործման շրջանակում հոգաժություն կդրսևորվի տարեց քաղաքացիների, այդ թվում՝ հայրենական պատերազմի վետերանների նկատմամբ: Բացի այդ՝ իրենց գործունեությունը կշարունակեն տարեցների ցերեկային խնամքի</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Պարբերությունները խմբագրել են հետևյալ կերպ.</p> <p>Տարեցների համար սոցիալական ծառայությունների մատուցման ծրագրերի իրագործման շրջանակում հոգաժություն կդրսևորվի տարեց քաղաքացիների, այդ թվում՝ Հայրենական</p>

		<p>կենտրոնները, բարեգործական ճաշարանները:</p> <p>Ի՞նչ է նշանակում հոգակցություն կորստի, անհասկանալի, ընդհանրական ձևակերպում է</p>		<p>Մեծ պատերազմի վերականգնման նկատմամբ: Բացի այդ՝ իրենց գործունեությունը կշարունակեն տարեցների ցերեկային խնամքի կենտրոնները, բարեգործական ճաշարանները:</p> <p>Պետություն - հասարակական կառույցներ - համայնք համագործակցությամբ կշարունակվի տարեցների սոցիալական սպասարկման, աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործումը՝ ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո՝ տուն-ինտերնատների միջոցով:</p>
51.		<p>Կշարունակվեն բազմազան կազմակերպչական ընտանիքների բնակարանային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերը:</p> <p>Քանի՞ ընտանիքի սա կարող է վերաբերել:</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p> <p>Թվերը կանխատեսելն այս պահին իրատեսական չէ:</p>	
52.		<p>Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել հասարակական կազմակերպություններին:</p> <p>Ի՞նչ է նշանակում, աջակցություն ինչպես և ինչի համար է ցուցաբերվելու: Անհրաժեշտ է պարզաբանել</p>	<p>Առաջարկն ընդունվել է:</p>	<p>Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ.</p> <p>Հաշվի առնելով հասարակական կառույցների՝ մարդկանց աջակցելու յուրահատուկ փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա համատեղ սոցիալական նշանակության ծրագրերի իրականացման համար նախատեսվում է մասնագիտական, գույքային և հնարավոր այլ</p>

				<p>միջոցներով աջակցություն ցուցաբերել և խրախուսել հասարակական կազմակերպություններին, կամավորականներին /ընդլայնելով նրանց շրջանակը/ համատեղ սոցիալական խնդիրների լուծման, ծրագրերի արդյունավետ իրագործման, բնակիչների իրազեկվածության բարձրացման նկատառումով:</p>
53.		<p>Սպորտ և ֆիզիկական կուլտուրա ոլորտում առաջարկվում է ավելացնել հետևյալ կետը <i>Կղիտարկվի հեծանվային առանձնացված արահետի կառուցում՝ Մատենադարան- Մաշտոցի պող.- Մայաթ-Նովա – Օպերա – Հյուսիսային պող.-Աբովյան փ.-Հանրապետության հրապարակ- Վ. Սարգսյան փ.(կամ այգու միջով)- Բեյրութի փ. (կամ այգու միջով) – Երևանի քաղաքապետարան երթուղով: Այս մայրուղային գծից կարող են դուրս գալ ճյուղավորումներ դեպի քաղաքի մի քանի թաղամասեր, մասնավորապես դեպի Էրեբունի և Մալաթիա-Սեբաստիա: Առանձնացված արահետների հնարավորության բացակայության պարագայում կղիտարկվի կոմբինացվածի տարբերակը: Կղիտարկվի նաև Օղակաձև զբոսայգու մի քանի հատվածներում առանձին արահետների կառուցումը, մասնավորապես Վ. Մամիկոնյանի</i></p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Մայրաքաղաքում հեծանվային մայրուղիների, արահետների ու կայանատեղերի ստեղծումը ամենին մարզական խնդիր չէ, այն պետք է դիտարկել տրանսպորտային և հետիոտն երթևեկության, այդ թվում՝ կայանատեղերի կանոնակարգման ամբողջության մեջ: Խնդիրն անհրաժեշտ է ուսումնասիրել բազմակողմանի՝ քանի որ այն անմիջապես առնչվում է մայրաքաղաքի երթևեկության և «Փարկինգ սիթի սերվիս» ՓԲԸ գործունեության, ինչպես նաև զբոսայգիներում ազգաբնակչության հանգստի ու ժամանցի կազմակերպման հարցերի հետ:</p>	

		<p>արձանից մինչև Անդրանիկի արձան հատվածը, որը կունենա ոչ միայն տրանսպորտային, այլ նաև հանգստի և զբոսանքի նշանակություն: Նախատեսվում է հեծանվային կայանատեղերի տեղադրում կամ վերակազմակերպում քաղաքի հիմնական պետական, համայնքային, վարչական և բիզնես կենտրոններում: Նախատեսվում է ակտիվ քարոզչական աշխատանք՝ խթանելու համար հեծանվային մշակույթը:</p>		
54.		<p>Հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների ակտիվացման անհրաժեշտություն Անորոշ և վիճելի ձևակերպում է, համայնքը հայերենասիրական դաստիարակություն տալու գործառույթ ունի, ո՞րն է այդ դաստիարակությունը, ինչպե՞ս է իրականացվելու:</p>	Առաջարկը չի ընդունվել:	
55.		<p>Նախատեսվում է իրականացնել միջոցառումների շարք՝ նվիրված պետական և ազգային տոներին, այդ թվում՝ Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Թանգարանների միջազգային օրվան, «Գարուն-Երևան», «Ողջույն Երևանից Ստեփանակերտին», «Վերջին զանգ», Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա</p>	<p>Առաջարկը չի ընդունվել: Նշված տոնակատարությունների կազմակերպումը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի բյուջեի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ 08 բաժնի, 02 խմբի, 04 դասի «1.Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով հաստատված միջոցներով:</p>	

		<p>մրցույթ-փառատոնին, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոնին, Ջազի միջազգային օրվան, Երիտասարդության միջազգային օրվան, «Երևանյան ամառ 2019» եռամսյա ծրագրին, «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնին, Երևանի օրերը Մոսկվայում և Մանկա Պետերբուրգում, «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը, «Գրադարանավարի օրվան» և հայականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարեթվերին:</p> <p>Իմ քայլի նախընտրական ծրագրում ամրագրվել էր, որ քաղաքային բյուջեից ֆինանսավորվելու են միայն Էրեբունի-Երևանի և Ամանտորի տոնակատարությունները, այստեղ նշված տոներն ինչպես են ֆինանսավորվելու: Անհրաժեշտ է հստակեցնել</p>		
56.		<p>Երևանցիների բազմաթիվ խնդրանքներին ընդառաջ խնդրում եմ Երևանի պատմության թանգարանի աշխատանքային օրերը վերանայել կիրակին դարձնելով աշխատանքային</p>	<p>Առաջարկը չի ընդունվել:</p> <p>Հաշվի առնելով որ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի որոշ ցուցասրահներ գտնվում են Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի տարածքում, թանգարանի համար կիրակին աշխատանքային օր դարձնելու առաջարկը գտնում ենք ոչ նպատակահարմար՝ ելնելով վարչական շենքի ներսի տարածքի անվտանգության պահպանման</p>	

			նկատառումներից: Միաժամանակ նշված ՀՈԱԿ-ի համար աշխատանքային օր է երկուշաբթին, ինչն առավել է նպաստում այցելուների հոսքի խթանմանը, քանի որ այդ օրը մյուս թանգարանների համար համարվում է ոչ աշխատանքային:	
57.		Քննարկել Հայ-Արտի շենքի /նախկին Ժամանակակից արվեստի թանգարանը/ ամբողջական վերականգնումն ու վերանորոգումը եւ վերադարձնելը Երևանին որպես արվեստի միասնական կենտրոն	Առաջարկը չի ընդունվել: «Հայ Արտ» մշակութային կենտրոնի հիմնանորոգման հարցը նախատեսվում է քննարկել Երևան քաղաքի 2019թ. բյուջեի համապատասխան ծրագրերում ընդգրկելու համատեքստում:	
58.		6. <i>Ջրուսայգիների վերականգնման անհրաժեշտություն մասնավոր ներդրումների միջոցով:</i> 7. <i>Հանրային գույքաբանների հիմնախնդրի լուծման անհրաժեշտություն:</i> Այս երկու կետը պետք է տեղափոխել քաղաքաշինության բաժին, քանի որ սա պետք է առաջին հերթին երեւանցիներին, հետո տուրիստներին	Առաջարկը չի ընդունվել: Քանի որ նշված երկու հիմնախնդիրների լուծումը կխթանի նաև զբոսաշրջության ոլորտին, այդ պատճառով ներառվել է նաև զբոսաշրջության հիմնախնդիրներ բաժնում:	
59.		<i>Նախատեսվում է մշակել և ներդնել աղբահանության, կոմունալ խնդիրների, բարեկարգման խնդիրների, բնակֆոնդի պահպանման, համատիրությունների գործունեության և մի շարք այլ ոլորտների փոխգործակցության հարթակներ ավելի հարմարավետ Երևան ունենալու համար:</i> Կարելի է համագործակցել նաև citybug-	Առաջարկն ընդունվել է Երևանի քաղաքապետարանը բաց է համագործակցության քաղաքային տնտեսության բոլոր որոտներում նորարարական լուծումներ առաջարկող ընկերությունների, հասարակական կազմակերպությունների և ինովացիոն գաղափարներով անհատների համար: Մենք մեծ տեղ	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		<p>ի հետ, որ գործարկվելուց հետո քավական լավ էր գործում http://yerevan.citybugs.am/</p>	<p>ենք հասկացնում ազգային գիտական պոտենցիալի օգտագործմանը և մասնակցային կառավարմանը քաղաքային տնտեսության բարելավման և որոշումների ընդունման հարցերում: Նմանատիպ առաջարկները, որոնք համահունչ կլինեն Երևանի քաղաքապետարանի զարգացման ծրագրերին և պահանջներին, կյանքի կոչվելու հնարավորություն կստանան:</p>	
--	--	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	--